

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2011



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Դիտորդական խմբի գործունեության կազմակերպումը և <<Տարեկան զեկույցի>> պատրաստումը և հրատարակումը կատարվել է Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Սույն հաշվետվության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամապատասխանել ԵԱՀԿ տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Աշխատանքային խումբ.....	9
Երախտիքի խոսք	10
ՀՀ ոստիկանությունում գործող և չգործող ՁՊՎ-ների մասին	11
ՁՊՎ-ների պահման պայմանները	
Շինություններ	17
Լուսավորություն	31
Խոնավություն	32
Ջերմաստիճան	33
Մուտնդ	34
Բուժսպասարկում	36
Սանիտարահիգիենիկ վիճակ	38
Կապ արտաքին աշխարհի հետ	39
Զբոսանք	40
Մոնիթորինգի արդյունքները Երևանի ՁՊՎ-ում	41
Մոնիթորինգի արդյունքները Սյունիքի մարզում	50
Մոնիթորինգի արդյունքները Արմավիրի մարզում	64
Մոնիթորինգի արդյունքները Լոռու մարզում	76
Մոնիթորինգի արդյունքները Արարատի մարզում	90
Մոնիթորինգի արդյունքները Կոտայքի մարզում	103
Մոնիթորինգի արդյունքները Տավուշի մարզում	114
Մոնիթորինգի արդյունքները Շիրակի մարզում	123
Մոնիթորինգի արդյունքները Վայոց Ձորի մարզում	133
Մոնիթորինգի արդյունքները Արագածոտնի մարզում	139
Մոնիթորինգի արդյունքները Գեղարքունիքի մարզում	153
Առկա խնդիրները և թերությունները	167
Առաջարկություններ խնդիրների և թերությունների վերաբերյալ	175
Դիտորդական խմբի ձեռքբերումները	180
Հավելվածներ	182
ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը	194

Տարեկան հաշվետվության մեջ տեղ գտած որոշ բառերի և հասկացումների բացատրություն

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁՊՎ	Ձեռքակալվածին պահելու վայր
ՀՀ ԱՆ ՔԿՀ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական հիմնարկ /կալանավորվածին պահելու վայր/
ՄՎ	Մարզային վարչություն
ՀԿԳ	Հատուկ կարևորագույն գործեր
Ձեռքակալում	Ձեռքակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է
Կալանավորում	Կալանավորումը հարկադրանքի միջոց է, որը կիրառվում է դատարանի կողմից օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում՝ անձին կալանքի տակ պահելու համար
Բերման ենթարկել	Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող անձին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է
Քննիչ	Հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն
Հետաքննության մարմին	Հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը և աշխատակիցները
Քրեական վարույթն իրականացնող մարմին	Դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը
Քննչական գործողություն	Հարցաքննել կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային, նշանակել փորձաքննություն, կատարել զննություններ, խուզարկություններ, կատարել դեպքի վայրի զննություն և այլն
Մոնիթորինգ	Գործին առնչվող բոլոր նյութերի արտահերթ կամ կանոնավոր ուսումնասիրությունների գործընթաց
Ռեժիմային գոտի	Գոտի, որտեղ խցերը առանձնացված են ընդհանուր վարչական տարածքից

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը անկախությունից հետո մարդու իրավունքների ոլորտում մի շարք իրավունքներ է ստանձնել, այդ թվում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու բնագավառում: 1993թ-ին Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի Կոնվենցիային:

2001թ-ին Հայաստանի Հանրապետությունը դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ՝ ստանձնեց մի շարք պարտավորություններ մարդու իրավունքների ոլորտում: Այդ թվում Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի *կարծիք թիվ 221-ի 13-րդ գլխի 4-րդ կետի գ և 14-րդ կետի 4-րդ ենթակետերի /տես հավելված 24/:*

2002թ-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես միացավ Մարդու Իրավունքների Եվրոպական կոնվենցիային:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է ազատագրկման վայրերում մարդու իրավունքների պաշտպանությունը, քանի որ այդ համակարգը երկար ժամանակ փակ է եղել հասարակության առջև: Ինչպես իշխանության, այնպես էլ հասարակության գերակշիռ մասի մոտ կարծիք կար, որ նշված համակարգում պահվում են <<հանցագործներ>>, իսկ տվյալ դեպքում մարդու իրավունքների խնդիրները հիմնականում քննարկման ենթակա չեն: Ավելին՝ ազատագրվումը ինքնին արդեն պատիժ է, չպետք է ազատագրկման պահման պայմանները և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքը բերեն մարդու արժանապատվության նվաստացմանը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում ասվում է.<< Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի>>, որը դասվում է մարդու հիմնարար ազատությունների շարքին և այն բացարձակ իրավունք է և ենթակա չէ որևէ սահմանափակման:

Վերոշարադրյալը հաշվի առնելով և հիմք ընդունելով ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ, 9-րդ և 10-րդ */տես հավելված 25,26,27/*, Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածները */տես հավելված 28,29/*, ՄԱԿ-ի և Եվրոպական խորհրդի խոշտանգումների կոնվենցիաները և ՀՀ

սահմանադրության 3-րդ հոդվածը /տես հավելված 30/, 02.06.2006թ-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատվեց ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքը: Նշված օրենքի 47-րդ հոդվածով տրվեց լիազորություն, որ ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ իրականացվի հասարակական վերահսկողություն, որի արդյունքում էլ պետք է լիազորված մարմնի ղեկավարի կողմից կազմավորվեին հասարակական Դիտորդական խմբեր:

ՀՀ ոստիկանության պետը 2005 թվականի հունվարի 14-ի հաստատեց ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը (այսուհետ՝ կարգ): Որից հետո մեկ տարի անց՝ 2006 թվականի մարտի 10-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատվեց ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կազմը՝ 11 անդամներով, ովքեր ներկայացնում են տարբեր հասարակական կազմակերպություններ:

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը, ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող, վերահսկող մարմին է: Կարգի համաձայն՝ խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրեր, հանդիպել ՁՊՎ-ներում պահվող անձանց հետ, ծանոթանալ ՁՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին, ՁՊՎ-ներում պահվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, բացառությամբ՝ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող փաստաթղթերի:

Խումբը իր մոնիթորինգային աշխատանքները ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներ սկսել է 2006 թվականի Ապրիլ ամսից: 2006 թվականից մինչ օրս խումբը ներկայացրել է 3 տարեկան հաշվետվություններ՝ ընդհանուր ՁՊՎ-ների պայմանների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման դեպքերի բացահայտումների վերաբերյալ: Դիտորդական խումբը 2010 թվականի ընթացքում իրականացրել է 90 պլանային և 50 արտապլանային այցելություններ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՁՊՎ-ներ:

Դիտորդական խումբը զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ, մասնավորապես՝ փակ հաստատություն համարվող ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում:

Դիտորդական խմբի աշխատանքներում սկզբունքային է համարվում Ձերբակալված անձանց պահելու վայրերում, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման դեպքերի բացահայտումը և նախականիումը:

Թեպետ մարդու իրավունքների ոտնահարումը հրապարակայնորեն դատապարտվում է, դրանք ներկայումս էլ կիրառվում են, ընդ որում՝ նման վերաբերմունք կիրառվում է լիազորությունները ոչ ճիշտ ընկալելու և չարաշահելու արդյունքում:

ՀՀ ոստիկանության ոլորտում մարդու իրավունքները խախտվում են հենց ՀՀ ոստիկանության բաժանմունքներ հրավիրվելուց կամ բերման ենթարկվելուց, որտեղ խախտվում են անձի պահման ժամկետները և պաշտպանության իրավունքը: Նման դեպքում վտանգը ավելի մեծ է, երբ անձը զրկված է իր ազատությունից, գտնվում է նախնական կալանքում կամ հարցաքննվում է: Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում հասարակական վերահսկողությունը, որը տալիս է իր դրական արդյունքները, կարելի և պարտադիր է նման հասարակական վերահսկողություն սահմանել ՀՀ ոստիկանության բաժիններում, որի ուղությամբ Դիտորդական խումբը արդեն 4 տարի աշխատում է՝ բայց ապարդյուն:

Ինչ վերաբերվում է Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների ոտնահարման դեպքերին՝ Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՁՊՎ-ներում դրանք տարաբնույթ են: Օրինակ՝

- ✓ Ամբողջությամբ անտեսվում է բուժօգնության և բուժսպասարկման խնդիրը (ՀՀ մարզային ոչ մի ՁՊՎ-ում չկան բուժաշխատողներ, որոշ ՁՊՎ-ներում առկա չեն բուժենյակներ, իսկ որոշ ՁՊՎ-ներում համատեղված են այլ սենյակների հետ և այդ ամենի հետ մեկտեղ՝ հանդիպում է ժամկետանց դեղորայք):
- ✓ ՁՊՎ-ներում պահվում են ՀՀ օրենսդրությամբ արգելված՝ սուր վարակիչ և հոգեկան հիվանդություններ ունեցող անձինք:
- ✓ ՁՊՎ-ներում չի պահպանվում սանիտարահիգիենիկ վիճակը (որի արդյունքում կարող է վարակ փոխանցվել):
- ✓ Նույն սպիտակեղենը օգտագործվում է մի քանի տարբեր անձանց կողմից:
- ✓ Չի տրամադրվում օրական երեք անգամյա սնունդը:
- ✓ ՁՊՎ-ում պահվող անձինք հաճախակի զբոսանքի դուրս չեն բերվում:
- ✓ Տրամադրվում և օգտագործվում է կեղտոտ սպասք (առկա են ՁՊՎ-ներ, որտեղ սպասքը չի համապատասխանում ՁՊՎ-ում պահվող անձանց քանակի հետ):

- ✓ Հատկապես խոցելի է այն հանգամանքը, որ ՁՊՎ-ում գտնվելիս անձինք գրկված են արտաքին աշխարհի հետ կապից:
- ✓ Հանձնույթները ընդունվում են, բայց ոչ միշտ են հասցեատիրոջը փոխանցվում: (ավելին հանձնույթները չեն թողնում ՁՊՎ-ում պահվող անձի մոտ՝ խցում):
- ✓ Քննչական գործողությունները կազմակերպվում են անկանոն, ՁՊՎ-ի տարածքից դուրս (որոշ դեպքերում նաև գիշերային ժամերին, իսկ որոշ դեպքերում նույնիսկ 8-ից մինչև 48 ժամ):
- ✓ Որոշ դեպքերում ՁՊՎ-ում անձը պահվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից ավելի:
- ✓ ՁՊՎ-ներում օդափոխության կազմակերպումը գտնվում է շատ վատ վիճակում:
- ✓ Որոշ ՁՊՎ-ներում անձինք պահվում են բարձր խոնավության և ոչ բավարար լուսավորության պայմաններում:

Եվ այսպես կարելի է շատ երկար թվարկել ՁՊՎ-ներում անձանց նկատմամբ վատ, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին, բայց պետությունը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել նշված փաստերը կանխելու վերաբերյալ, ավելին՝ պետությունը պարտավոր է պարբերաբար վերանայել հարցաքննության կանոնները, հրահանգները, մեթոդները և կիրառությունը, ինչպես նաև ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձանց պահելու պայմանները և վերաբերմունքը նրանց հանդեպ: Մարդու իրավունքների հանձանժողովը փաստել է, որ վերը նշված խնդիրների պարբերաբար վերանայումը՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ միջոց է:

Այսպիսով՝ Դիտորդական խմբի 2010 թվականի մոնիթորինգի արդյունքում արձանագրած փաստերին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ՝ ուսումնասիրելով հաշվետվությունը ամբողջությամբ:

Աշխատանքային խումբ

1. **Սուրեն Իսկանդարյան** - <<Մարդու Իրավունքների Պաշտպանության Երևանյան կենտրոն>> հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի նախագահ
2. **Անի Ներսիսյան**-<<Քաղաքացիական հասարակության ինստիտուտ>> հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
3. **Գրիգոր Առուստամյան** - <<Օրենք և իրավապաշտպանություն>> հասարակական կազմակերպության նախագահ և Դիտորդական խմբի անդամ
4. **Նելլի Հարությունյան**-<<Հայաստանի Հելսինկյան կոմիտե>> հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
5. **Արայիկ Հարությունյան**-<<Իրավունքների պաշտպանության միջազգային վարչություն>> հասարակական կազմակերպության նախագահ և Դիտորդական խմբի անդամ
6. **Հասմիկ Սահակյան**-<<Աֆինա>> Կանանց իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն>>հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
7. **Արմեն Ֆիդանյան**-<<Հայոց հաղթական ուղի>> հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
8. **Գոհար Խոջայան**-<<Օգնություն>> Հաշվանդամների իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն » հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
9. **Հրայրա Մարտիրոսյան**-<<Իրավաբանական բարեփոխումների միջազգային կենտրոն>> հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ
10. **Հայկուհի Թադևոսյան**-<<Ա.Գ.Ն.Ա>> բարեգործական հասարակական կազմակերպության և Դիտորդական խմբի անդամ

Երախտիքի խոսք

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի անդամները իրենց երախտիքի խոսքն են հայտնում <<Բաց Հասարակության Հիմնադրամներ–Հայաստան>> գրասենյակին՝ միշտ Դիտորդական խմբի կողքին լինելու և ֆինանսապես աջակցելու համար:

Արդեն երեք տարի է Դիտորդական խմբի տարեկան ֆինանսական բյուջեն տրամադրվում է <<Բաց Հասարակության Հիմնադրամներ–Հայաստան>> գրասենյակի կողմից:

Նշված ֆինանսական աջակցության հիմքում ընկած են Դիտորդական խմբի գրասենյակային ծախսերը, պլանային և արտապլանային այցելությունների կազմակերպումը, անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերումը, համապատասխան տպագրությունների կազմերպումը, գրասենյակային աշխատողների աշխատավարձերը և այլն: Շատ կարևոր հանգամանք է հանդիսանում 2010թ-ի ընթացքում <<Բաց Հասարակության Հիմնադրամներ–Հայաստան>> գրասենյակի ֆինանսական աջակցությամբ կազմակերպված սեմինար-դասընթացը, որի ժամանակ ՁՊՎ-ների վարչակազմը և Դիտորդական խմբի անդամները համապատասխան փորձագետների կողմից ստացել են գիտելիքներ՝ սանիտարահամաճարակային իրավիճակը և բուժապասարկումը ՁՊՎ-ներում ճիշտ կազմակերպելու սկզբունքների վերաբերյալ և ուսումնասիրվել են ՀՀ օրենսդրության այն պահանջները, որոնք ՁՊՎ-ներում չեն կիրառվում, իսկ Դիտորդական խմբի նոր անդամների համար ներկայացվեց <<Ինչ է մոնիթորինգը և մոնիթորինգի իրականացման ձևերը>> թեման:

Մենք ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին՝ Դիտորդական խմբի ձևավորվելուց մինչ օրս Դիտորդական խմբի կողքին լինելու և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում գործող և չգործող ՁՊՎ-ների մասին

ՀՀ ոստիկանության համակարգում գործող և չգործող ՁՊՎ-ները ընդհանուր 40-ն են: Առկա գործող ՁՊՎ-ները կարելի է տարանջատել 2 տեսակի.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ն գործում է ինքնակառավարման սկզբունքով և ունի համապատասխանաբար նախատեսված բոլոր հաստիքները. ՁՊՎ-ի պետ, պետի տեղակալներ, բուժաշխատողներ, օպերատիվ աշխատակիցներ, հերթապահ ոստիկաններ, արտատարներ, ֆինանսական բաժնի աշխատակիցներ:
2. ՀՀ մարզային մնացած բոլոր ՁՊՎ-ները գործում են ըստ համապատասխան գտնվելու վայրի՝ ՀՀ ոստիկանության բաժնի ենթակայության տակ: ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ-ն և ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Վանաձորի ՁՊՎ-ն գործում են օրեկան երկու հերթապահ ոստիկանի աշխատանքային սկզբունքով և ունեն մեկ ՁՊՎ-ի պետ, իսկ մարզային մնացած բոլոր ՁՊՎ-ները գործում են օրեկան մեկ հերթապահ ոստիկանի սկզբունքով և ունեն մեկական ՁՊՎ-ի պետեր: Մարզային ՁՊՎ-ներում առկա չեն համապատասխան անհրաժեշտ մնացած հաստիքները, այդ իսկ պատճառով առաջանում են աշխատանքային որոշ դժվարություններ:

Ներկայիս պահին ՀՀ ոստիկանության համակարգում գործում են 33 ՁՊՎ:

Դրանք են.

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ
ք. Երևան, Խորենացու 162Ա

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն

2. ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ՁՊՎ
ք. Վեդի, Կոմիտասի 1

3. ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ
ք.Արտաշատ, Շահումյանի 20
4. ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ
ք.Մասիս, Բաղրամյան 30

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն

5. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ՁՊՎ
ք. Աշտարակ, Ա. Մանուկյան 26
6. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ
ք. Թալին, Մ. Գորկու 14
7. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ
ք. Ապարան, Մ.Գալի 9

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն

8. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ
ք. Վաղարշապատ, Կամոյի 15
9. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ
ք. Արմավիր, Աշուղ Ջիվանի 3

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն

10. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ
ք. Գավառ, Սահակյան 24
11. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ
ք. Սևան, Թումանյան 2
12. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ
ք. Վարդենիս, Ազգալոյան 10
13. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ
ք.Մարտունու, Մյասնիկյան 5
14. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ
ք. Ճամբարակ, Գաբեգին Նժդեհի 122

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն

15. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ՁՊՎ
ք.Արմավյան, Ա.Ձորավարի 2
16. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի ՁՊՎ
ք.Եղվարդ, Շիրակի 2
17. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ
ք. Հրազդան, Վանատուրի թաղ, Հայ Ֆիդայիների փողոց

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն

18. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի ՁՊՎ
ք. Ալավերդի, Երևանյան խճուղի 3
19. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ
ք. Վանաձոր, Մ. Գոշի 3
20. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ
ք.Տաշիր, Պուշկինի 100
21. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ
ք.Սպիտակ, Ա.Մանուկյան 1Ա

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն

22. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի ՁՊՎ
գ.Ախուրյան, Շիրակի խճուղի 13
23. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի ՁՊՎ
ք.Սարալիկ, Երկաթուղայինների 1
24. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ
ք.Արթիկ, Մ.Գորկու 4

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն

25. ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ
ք. Եղեգնաձոր, Միկոյան 18
26. ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ
ք. Վայք, Շահումյանի 21

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն

27. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ

ք. Կապան, Երկաթուղայինների 2

28. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ

ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 1

29. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ

ք. Գորիս, Նարեկացու 5

30. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ՁՊՎ

ք. Սիսիան, Գ. Նժդեհի 2

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչություն

31. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ

ք. Իջևան, Երևանյան 12

32. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ

ք. Դիլիջան, Սյասնիկյան 57

33. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ

ք. Նոյեմբերյան, Բարեկամության 2

Ներկայիս պահին ՀՀ ոստիկանության համակարգի չգործող ՁՊՎ-ները 7-ն են:

Դրանք են՝

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն

1. ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Արագածի ՁՊՎ: ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների 2005 և 2006թթ-ի ընդհանուր շինարարական աշխատանքներից հետո չի շահագործվել՝ համապատասխան պայմաններ և ջեռուցում չունենալու պատճառով:

գ. Ծաղկահովիտ

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն

2. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի ՁՊՎ: Դիտորդական խմբի անդամների պահանջով 2009թ-ի գարնանը, բավարար պայմաններ չունենալու պատճառով փակվել է:

ք.Չարենցավան, Խանջյան 6

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն

3. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի ՁՊՎ: ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների 2005 և 2006թթ-ի շինարարական աշխատանքներից հետո չի շահագործվել՝ համապատասխան պայմաններ չունենալու և բարձր խոնավության պատճառով:

ք.Ստեփանավան, Միլիոնների 1

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն

4. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Աշոցքի ՁՊՎ: ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների 2005 և 2006թթ-ի շինարարական աշխատանքներից հետո չի շահագործվել՝ համապատասխան պայմաններ և ջեռուցում չունենալու պատճառով:

գ.Աշոցք, 1-ին փ.12-1

5. ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի ՁՊՎ: ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների 2005 և 2006թթ-ի շինարարական աշխատանքներից հետո չի շահագործվել՝ համապատասխան պայմաններ և ջեռուցում չունենալու պատճառով:

գ.Ամասիա, փ.2-րդ, օբյեկտ 9

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն

6. ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Ջերմուկի ՁՊՎ: ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների 2005 և 2006թթ-ի շինարարական աշխատանքներից հետո չի շահագործվել՝ համապատասխան պայմաններ և զբոսաբակ չունենալու պատճառով:

ք. Ջերմուկ, Մյասնիկյան 17

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչություն

7. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի ՁՊՎ: Դիտորդական խմբի անդամների պահանջով 2008թ-ի ամռանը, բավարար պայմաններ չունենալու պատճառով փակվել է:

ք.Տավուշ, Դ.Բեկի 3

Տեղեկացնենք, որ Դիտորդական խմբի 4 տարիների աշխատանքների արդյունքում փակվել և վերաբացվել են.

- 2010թ-ին 3 ամիս ժամանակով փակվել և համապատասխան շինարարական աշխատանքներ կատարելուց հետո կրկին վերաբացվել է ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ-ն:
- 2008թ-ին փակվել և մինչ 2010 թ-ը համապատասխան շինարարական աշխատանքներ կատարելուց հետո վերաբացվել է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ն:
- 2008թ-ին փակվել և մինչ 2009 թ-ը համապատասխան շինարարական աշխատանքներ կատարելուց հետո վերաբացվել է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ն:
- 2008թ-ին փակված և 2009թ-ին կրկին վերաբացված՝ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Զարենցավանի ՁՊՎ-ն, 2010 թ-ին կրկին փակվել է՝ համապատասխան պայմաններ չունենալու պատճառով:

ՁՊՎ-ների պահման պայմանները

Շինություններ

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերը ժառանգություն են մնացել Խորհրդային ժամանակաշրջանից, այդ իսկ պատճառով որոշակի չափորոշիչներով չեն համապատասխանում ո՛չ ՀՀ օրենսդրության և ո՛չ էլ միջազգային չափանիշների պահանջներին: Ժամանակ առ ժամանակ ՁՊՎ-ներում կատարվում են մասնակի կամ ամբողջական վերանորոգման աշխատանքներ, բայց արդյունքում պետք է վերակառուցել նոր ՁՊՎ-ներ, որոնք կհամապատասխանեցվեն թե՛ ՀՀ օրենսդրության պահանջներին և թե՛ միջազգային չափանիշներին: Օրինակ՝

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ

Երևան քաղաքի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 1000-1200 անձ: ՁՊՎ-ն երկու հարկանի է՝ իր առանձին վարչական տարածքով և ունի 21 խուց, բոլորն էլ երկու տեղանոց, որոնցից մեկը վերափոխվել էր պահեստի, բայց ներկայումս օգտագործվում է որպես լվացքատուն /նկար 1/:

Առաջին հարկում առկա է հինգ խուց, երկու քննչական սենյակ և մեկական բուժսենյակ՝ կահավորված համապատասխան անհրաժեշտ բժշկական պարագաներով, գուգարան, լոգարան, տեսակցության սենյակ և զրոսաբակ:

Երկրորդ հարկում առկա է տասնհինգ խուց, մեկական գուգարան, պահեստային մաս, զրոսաբակ և ճաշասենյակ՝ կահավորված ըստ պատշաճի:

Վերոնշյալ առաջին հարկի հինգ խցերից երեքը վերանորոգվել և կահավորվել են ըստ պատշաճի՝ նախատեսվելով անչափահասների և կանանց պահման համար: Վերոնշյալ խցերը համալրվել են հեռուստացույցներով /նկար 2,3/:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկ տեսակցության և երկու քննչական սենյակները:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Միսիանի ՁՊՎ

Միսիանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Միսիանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Միսիանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 40-50 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորն էլ մեկ տեղանոց, բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, մեկական քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ

Գորիսի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Գորիսի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 70-80 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորն էլ մեկ տեղանոց, բուժսենյակ, որը համատեղված է հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ, միասին գործող զուգարան և լոգարան, մեկական քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը և անհրաժեշտ է առանձին բուժսենյակ:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ

Կապանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Կապանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Կապանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 200-220 անձ: ՁՊՎ-ն ունի հինգ խուց՝ բոլորն էլ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հանձնույթների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Մյունխի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ

Մեղրիի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Մեղրիի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 15-20 անձ: ՁՊՎ-ն ունի երկու խուց՝ երկուսն էլ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

Ի հավելումն այս ամենի ավելացնենք, որ բուժսենյակը գտնվում է ռեժիմային գոտում, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման և սանիտարամշակման սենյակներ:

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ

Եղեգնաձորի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Եղեգնաձորի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 50-60 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ երեքն էլ մեկ տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ

Վայքի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Վայքի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Վայքի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 40-50 անձ: ՁՊՎ-ն ունի երկու խուց՝ երկուսն էլ երկու տեղանոց, բուժսենյակը համատեղված է հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ, միասին գործող զուգարան և լոգարան, մեկական քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

Ի հավելումն այս ամենի ավելացնենք, որ ՁՊՎ-ի բոլոր սենյակները գտնվում են ռեժիմային գոտում, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և առանձին բուժսենյակ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ՁՊՎ

Արարատի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Արարատի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Արարատի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 150-160 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց. երկուսը՝ երկու տեղանոց, երկուսը՝ մեկ տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ

Արտաշատի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության ՆԳ բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Արտաշատի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 200-220 անձ: ՁՊՎ-ն ունի վեց խուց՝ բոլորն էլ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ

Մասիսի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Մասիսի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 120-130 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

Ի հավելումն այս ամենի ավելացնենք, որ բացի տեսակցության սենյակից, մնացած բոլոր սենյակները գտնվում են ռեժիմային գոտում, իսկ ՁՊՎ-ի զբոսաբակը իր մուտքով գտնվում է ՁՊՎ-ի տարածքից դուրս, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ

Վաղարշապատի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Վաղարշապատի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 470-500 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ

Արմավիրի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Արմավիրի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 380-400 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

Ի հավելումն այս ամենի, բացի բուժսենյակից, մնացած օգտագործման համար նախատեսված սենյակները գտնվում են ռեժիմային գոտում, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ

Նոյեմբերյանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Նոյեմբերյանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 60-70 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորը երեք տեղանոց, բուժսենյակը համատեղված է քննչական սենյակի հետ, ունի առանձին գործող զուգարան և լոգարան, տեսակցության սենյակը և ճաշասենյակը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին, առկա է նաև զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման, տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և առանձին բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ

Դիլիջանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Դիլիջանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Դիլիջանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 50-60 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, քննչական սենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, ճաշասենյակ և զբոսաբակ:

Ի հավելումն այս ամենի, ՁՊՎ-ի բոլոր սենյակները գտնվում են ռեժիմային գոտում, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման և տեսակցության սենյակներ:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ

Իջևանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Իջևանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 270-300 անձ: ՁՊՎ-ն ունի հինգ խուց. երկուսը՝ մեկ տեղանոց, երեքը՝ երկու տեղանոց, մեկական ճաշասենյակ, զբոսաբակ, զուգարան և լոգարան, իսկ բուժսենյակը, քննչական և տեսակցության սենյակները համատեղված են:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման, տեսակցության և քննչական սենյակներ, առանձին բուժսենյակ:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի ՁՊՎ

Ախուրյանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Ախուրյանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Ախուրյանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 130-150 անձ: ՁՊՎ-ն ունի վեց խուց. հինգը՝ երկու տեղանոց, մեկը՝ մեկ տեղանոց, մեկական քննչական սենյակ, ճաշասենյակ, զբոսաբակ, միասին գործող զուգարան և լոգարան, իսկ բուժսենյակը և տեսակցության սենյակները համատեղված են:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մարալիկի ՁՊՎ

Մարալիկի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Մարալիկի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահի մասով:

Մարալիկի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 5-7 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորն էլ մեկ տեղանոց, մեկական քննչական, տեսակցության սենյակներ, բուժսենյակ, ճաշասենյակ, զբոսաբակ, միասին գործող զուգարան և լոգարան:

Ի հավելումն այս ամենի ավելացնենք, որ ՁՊՎ-ի զբոսաբակը իր մուտքով գտնվում է ՁՊՎ-ի վարչական տարածքից դուրս, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և առանձին բուժսենյակ:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ

Արթիկի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Արթիկի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահի մասով:

Արթիկի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 24-27 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորն էլ մեկ տեղանոց, մեկական քննչական, տեսակցության սենյակներ, բուժսենյակ, ճաշասենյակ, զբոսաբակ, զուգարան և լոգարան:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտարամշակման սենյակներ:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ

Ապարանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահի մասով:

Ապարանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 14-17 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց. երեքը՝ մեկ տեղանոց, մեկը՝ երկու տեղանոց, բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտարամշակման սենյակներ:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ՁՊՎ

Աշտարակի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Աշտարակի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 275-300 անձ: ՁՊՎ-ն ունի հինգ խուց. չորսը՝ երկու տեղանոց, մեկը՝ մեկ տեղանոց, մեկական տեսակցության սենյակ, ճաշասենյակ և զրոսաբակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական սենյակը համատեղ է հերթապահ ոստիկանի սենյակի հետ, իսկ բուժսենյակը համատեղված է ՁՊՎ-ի պետի սենյակի հետ:

Ի հավելումն այս ամենի՝ ՁՊՎ-ի խցերից մեկը գտնվում է ռեժիմային գոտուց դուրս, որը ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտարամշակման սենյակներ, առանձին քննչական սենյակ և բուժսենյակ:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ

Թալինի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Թալինի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Թալինի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 15-30 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական տեսակցության, քննչական սենյակներ, բուժսենյակ, ճաշասենյակ և զրոսաբակ, միասին գործող զուգարան և լոգարան:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտարամշակման սենյակներ:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ

Վարդենիսի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Վարդենիսի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Վարդենիսի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 110-130 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց, մեկը՝ երկու տեղանոց, երկուսը՝ մեկ տեղանոց, բուժսենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակներ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և առանձին ճաշասենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ

Գավառի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Գավառի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Գավառի ՁՊՎ-ում տարեկան պահվում են 180-190 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, ճաշասենյակ, քննչական և տեսակցության սենյակներ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեությանը համար բավարար չեն մեկական քննչական և տեսակցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ

Մարտունու ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Մարտունու ՁՊՎ-ում տարեկան պահվում է 80-90 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորն էլ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, ճաշասենյակ, քննչական և տեսակցության սենյակներ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ

Սևանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Սևանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Սևանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 280-300 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, ճաշասենյակ, քննչական և տեսակցության սենյակներ, միասին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտարամշակման սենյակներ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական տեսակցության և քննչական սենյակները:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ

Ճամբարակի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Ճամբարակի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Ճամբարակի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 1 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորը երկու տեղանոց, ճաշասենյակ, միասին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ, տեսակցության սենյակը համատեղված է քննչական սենյակի հետ, բուժսենյակը՝ հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտարամշակման սենյակներ, առանձին տեսակցության, քննչական սենյակներ, առանձին բուժսենյակ:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ

Տաշիրի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Տաշիրի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 30-35 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ բոլորն էլ մեկ տեղանոց, բուժսենյակը համատեղված է քննչական սենյակի հետ, առանձին գործող զուգարան և լոգարան, տեսակցության սենյակ, ճաշասենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ, առանձին քննչական սենյակ և բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ

Վանաձորի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Վանաձորի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 270-300 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ բոլորն էլ երկու տեղանոց, մեկական քննչական, տեսակցության սենյակ, ճաշասենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեությանը համար բավարար չեն մեկական տեսակցության և քննչական սենյակները:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ

Սպիտակ ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Սպիտակ ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 36-45 անձ: ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ երեքն էլ երկու տեղանոց, մեկական քննչական սենյակ, ճաշասենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ, բուժսենյակը համատեղված է տեսակցության սենյակի հետ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնույթների ընդունման, սանիտարամշակման սենյակներ և առանձին բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի ՁՊՎ

Թումանյանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Թումանյանի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 50-60 անձ: ՁՊՎ-ն ունի 4 խուց, երկուսը՝ մեկ տեղանոց, երկուսը՝ երկու տեղանոց, մեկական տեսակցության սենյակ, ճաշա-սենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ: Բուժսենյակը, քննչական և ոստիկանի հանգստի սենյակը համատեղված են մեկ սենյակում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման, սանիտարամշակման սենյակներ, առանձին քննչական, տեսակցության սենյակներ և բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի ՁՊՎ

Նաիրիի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Նաիրիի ՁՊՎ-ում տարեկան պահվում է մոտ 50-55 անձ: ՁՊՎ-ն ունի չորս խուց, երեքը՝ մեկ տեղանոց, մեկը՝ երկու տեղանոց, մեկական բուժսենյակ, ճաշասենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, քննչական և տեսակցության սենյակները համատեղված են, ճաշա-սենյակ և զբոսաբակ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնությունների ընդունման և սանիտարամշակման սենյակներ և առանձին տեսակցության և քննչական սենյակներ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չէ մեկ քննչական սենյակը:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ՁՊՎ

Կոտայքի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնում և մուտքը ՁՊՎ կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Կոտայքի ՁՊՎ-ում տարեկան պահվում է 255-270 անձ: ՁՊՎ-ն ունի հինգ խուց՝ բոլորը երկու տեղանոց, ճաշասենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան, զբոսաբակ, բուժ-

սենյակը, հերթապահ ոստիկանի հանգստի, տեսակցության և քննչական սենյակները համա-
տեղված են երկու սենյակներում:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման, սանիտա-
րամշակման սենյակներ, առանձին տեսակցության, քննչական սենյակներ և բուժսենյակ:

ՁՊՎ-ի լիարժեք գործունեության համար բավարար չեն մեկական քննչական և տեսակ-
ցության սենյակները:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ

Հրազդանի ՁՊՎ-ն տեղակայված է ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնում և մուտքը ՁՊՎ
կատարվում է ոստիկանության բաժնի հերթապահ մասով:

Հրազդանի ՁՊՎ-ում տարեկան պահվում են 350-370 անձ: ՁՊՎ-ն ունի վեց խուց. երեքը՝
մեկ տեղանոց, երեքը՝ երկու տեղանոց, ճաշասենյակ, առանձին գործող զուգարան և լոգարան,
զրոսաբակ, բուժսենյակ, տեսակցության և քննչական սենյակներ:

ՁՊՎ-ն չունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հանձնուքների ընդունման և սանիտա-
րամշակման սենյակներ: ՁՊՎ-ի լիարժեք գործունեությանը համար բավարար չեն մեկական
քննչական և տեսակցության սենյակները:

Լուսավորություն

ՀՀ ոստիկանության 33 գործող ՁՊՎ-ների խցերի թե՛ բնական և թե՛ արհեստական լուսավորությունը կարելի է գնահատել վատ: Խցերի արհեստական լուսավորության ապահովմանը խոչընդոտում է անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսված համապատասխան պատասպարիչ ցանցը:

Ավելացնենք նաև, որ ուշ ժամերին՝ արհեստական լուսավորության ներքո ոչ մի ՁՊՎ-ում հնարավոր չէ որևէ փաստաթուղթ ընթերցել և գրել:

Իսկ ինչ վերաբերվում է խցերի բնական լուսավորությանը տեղեկացնենք, որ ընդհանուր բնական լուսավորության ներթափանցմանը խոչընդոտում են թե՛ ՁՊՎ-ների շենքային դիրքը և թե՛ անվտանգության նորմերից ելնելով նախատեսված տարբեր տրամաչափերի ցանցերի 2-4 շերտերի առկայությունը: Միաժամանակ տեղեկացնենք, որ բացի Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի խցերի պատուհաններից, որոնք բացվում են դեպի ներս և հասանելի են խցում պահվող անձին, ով էլ անհրաժեշտության դեպքում պատուհանի միջոցով հնարավորինս արագ կարողանում է օդափոխություն կազմակերպել խցում /նկար 4/, մնացած մարզային բոլոր ՁՊՎ-ներում դա անհասանելի է խցում գտնվող անձի համար, որովհետև ինչպես նշել ենք, պատուհանները պատված են տարբեր տրամաչափի մի քանի ցանցերով /նկար 5, 6/: Ավելի հեշտ է նշել այն ՁՊՎ-ները, որոնց խցերի բնական լուսավորությունը լավ է, քան վատ լուսավորություն ունեցողները, որովհետև առաջիններս ավելի քիչ են: Օրինակ՝ ՀՀ-ում գործող ՁՊՎ-ների 143 խցերից 27-ում կա լավ լուսավորություն : Դրանք են՝

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի 12 խցերը
- ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ի 3 խցերը
- ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի ՁՊՎ-ի 3 խցերը
- ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ի 5 խցերը
- ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ-ի 4 խցերը

Ավելի մանրամասն կարող եք ուսումնասիրել մոնիթորինգների արդյունքում արձանագրված և ներկայացված աղյուսակներում, որտեղ արձանագրված են տարվա տարբեր եղանակների տվյալները: Աղյուսակներում լույսը ներկայացված է ըստ lux-երի, իսկ բնական լուսավորությունը բավարար է համարվում 42 lux և ավելի դեպքում:

Խոնավություն

ՀՀ ոստիկանության գործող 33 ՁՊՎ-ներում էլ որոշակի չափով խոնավությունը առկա է: Խոնավությունը տաք եղանակներին նախատեսված է 60-30%, անցումային և ցուրտ եղանակներին 45-30%: Բայց մեր գործող ՁՊՎ-ների խցերում վիճակը կարելի է գնահատել վատ, որովհետև եթե ուսումնասիրենք մոնիթորինգի արդյունքում ներկայացված տարբեր եղանակային ժամանակաշրջանների արդյունքները և խցերի տեսանելի խոնավությունը, կարելի է գալ մի եզրահանգման, որ խցերում առկա խոնավության հետ մեկտեղ՝ օդափոխություն չկազմակերպելու հետևանքով օդը գտնվում է չոր վիճակում, որը մարդու առողջությանը ավելի շատ վնաս է պատճառում, քան արձանագրած բարձր խոնավության աստիճանը: Այս ամենից ելնելով, շատ մեծ ուշադրություն պետք է դարձվի ընդհանուր ՁՊՎ-ի օդափոխության ճիշտ կազմակերպման աշխատանքներին: ՁՊՎ-ներում առկա խոնավության աստիճանները կարելի է տարանջատել երեք դասի:

Խոնավության միջին աստիճան

Արարատի ՁՊՎ, Արմավիրի ՁՊՎ, Վաղարշապատի ՁՊՎ, Ալավերդու ՁՊՎ, Երևանի ՁՊՎ-ի կեսը, Սիսիանի ՁՊՎ, Կապանի ՁՊՎ, Մեղրիի ՁՊՎ, Տաշիրի ՁՊՎ, Սպիտակի ՁՊՎ, Թալինի ՁՊՎ, Մարտունու ՁՊՎ, Սևանի ՁՊՎ, Վայքի ՁՊՎ, Եղեգնաձորի ՁՊՎ, Աշտարակի ՁՊՎ, Արթիկի ՁՊՎ, Նախիջի ՁՊՎ, Հրազդանի ՁՊՎ

Խոնավության բարձր աստիճան

Արտաշատի ՁՊՎ, Երևանի ՁՊՎ-ի կեսը, Գորիսի ՁՊՎ, Վանաձորի ՁՊՎ /նկար 7/, Ապարանի ՁՊՎ /նկար 8/, Գավառի ՁՊՎ, Վարդենիսի ՁՊՎ, Ճամբարակի ՁՊՎ, Ախուրյանի ՁՊՎ, Դիլիջանի ՁՊՎ, Նոյեմբերյանի ՁՊՎ, Իջևանի ՁՊՎ, Կոտայքի ՁՊՎ

Խոնավության շատ բարձր աստիճան

- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն Մարալիկի ՁՊՎ-ն:
Մոնիթորինգների արդյունքները բաժնում /էջ 132/ ուսումնասիրելով ներկայացված աղյուսակը՝ կարելի է նկատել ոչ բարձր խոնավություն, որտեղ +30°C ջերմաստիճանի արդյունքում գրանցվել է 28% խոնավություն, +24 °C ջերմաստիճանի արդյունքում գրանցվել է 49% խոնավություն, իսկ +16°C ջերմաստիճանի դեպքում՝ 62%, ի հավելումն այս ամենի, տեսանելի աչքով նկատելի է, որ ՁՊՎ-ն խոնավությունից ամբողջովին քայքայվել է /նկար 9,10,11,12/, որտեղ վերանորոգումը ոչ մի կերպ չի տալիս իր արդյունքը, այս ամենից ելնելով՝ պետք է դադարեցնել տվյալ ՁՊՎ-ի շահագործումը:

- ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն Մասիսի ՁՊՎ:

Մոնիթորինգների արդյունքները բաժնում /Էջ 94/ ուսումնասիրելով ներկայացված աղյուսակը՝ կարելի է նկատել ոչ բարձր խոնավություն, որտեղ $+32^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում գրանցվել է 27% խոնավություն, $+37^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում 24% խոնավություն, իսկ $+19^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում 38%, ի հավելումն այս ամենի տեսանելի աչքով նկատելի է, որ ՁՊՎ-ն խոնավությունից ամբողջովին քայքայվել է /նկար 13, 14, 15, 16/, որտեղ վերանորոգումը ոչ մի կերպ չի տալիս իր արդյունքը և պետք է դադարեցնել տվյալ ՁՊՎ-ի շահագործումը:

Ջերմաստիճան

Ըստ ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ջերբակավածների պահելու վայրերի ներքին կանոնակարգի՝ մենախցի օդի ջերմաստիճանը $+18^{\circ}\text{C}$ -ից ցածր չպետք է լինի, այդ ամենը հաշվի առնելով՝ ՁՊՎ-ները համալրվել են համապատասխան անհատական ջեռուցման համակարգերով, բայց առկա են ՁՊՎ-ներ, որոնք մինչ օրս ջեռուցման համակարգեր չունեն: Դրանք են՝ ՀՀ ոստիկանության Վանաձորի, Արմավիրի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ները, իսկ Նաիրիի ՁՊՎ-ում աշխատանքները ընթացքի մեջ են :

Միաժամանակ ավելացնենք, որ ջեռուցվող ՁՊՎ-ներում էլ ոչ միշտ է ապահովվում նշված ջերմաստիճանը: Օրինակ՝ ՀՀ ոստիկանության Կոտայքի ՁՊՎ-ի խցերում Նոյեմբեր ամսի մոնիթորինգի ընթացքում գրանցվել է $+15^{\circ}\text{C}$ - $+17^{\circ}\text{C}$ /Էջ 106, 111/, ՀՀ ոստիկանության Արթիկի և Մարալիկի ՁՊՎ-ների խցերում Հոկտեմբեր ամսին գրանցվել է $+16^{\circ}\text{C}$ /Էջ 130, 132/, ՀՀ ոստիկանության Աշտարակի և Թալինի ՁՊՎ- ների խցերում Նոյեմբեր ամսին գրանցվել է $+15^{\circ}\text{C}$ - $+17^{\circ}\text{C}$ /Էջ 142, 152/, ՀՀ ոստիկանության Մարտունու և Ճամբարակի ՁՊՎ- ների խցերում Հոկտեմբեր ամսին գրանցվել է $+15^{\circ}\text{C}$ /Էջ 158, 166/:

Մնունք

2010թ-ի մոնիթորինգների ընթացքում Դիտորդական խումբը իր ուշադրության կենտրոնում է պահել ձերբակալված անձանց սննդի ապահովման հարցը և այցելությունների ընթացքում բազմաթիվ զրույցներ է ունեցել թե՛ ձերբակալված անձանց և թե՛ ՁՊՎ-ի աշխատակիցների հետ: Զրույցների, ինչպես նաև ՁՊՎ-ի սննդին վերաբերվող համապատասխան փաստաթղթերը ուսումնասիրելու ընթացքում պարզվել է, որ ձերբակալված անձանց կերակրում են ամբողջ օրվա ընթացքում մեկ անգամ՝ երեք անգամի փոխարեն:

Դիտորդական խմբի անդամները կարծում են, որ այսօրվա տվյալներով՝ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում սննդի հարցը շատ ցավոտ է :

- Ըստ ՀՀ կառավարության 2003 թ-ի մայիսի 15-ին թիվ 587-Ն որոշման, սահմանվել է ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու հետևյալ նվազագույն չափաբաժինները.

N/N	Սննդամթերքի անվանումը	Սննդի նորման մեկ օրվա համար (գրամ)
1.	Հաց	550
2.	Միս, մսամթերք	90
3.	Ձուկ՝ առանց գլխի	100
4.	Չավարեղեն	120
5.	Մակարոնեղեն	20
6.	Բուսական յուղ	20
7.	Շաքար, շաքարավազ	40
8.	Կենդանական յուղ՝ մարգարին	45
9.	Կաթ (կաթի փոշի)	100 (14.3)
10.	Թեյ	1
11.	Բանջարեղեն	250
12.	Կարտոֆիլ	550
13.	Աղ՝ կերակրի	8
14.	Հյութ	100
15.	Տոմատի մածուկ	3
16.	Դափնետերև	0.1
Հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին, ինչպես նաև հիվանդներին (բժշկի նշանակմամբ) լրացուցիչ տրվում է		
17.	Բուսական յուղ	20
18.	Կարագ	25
19.	Կաթ (կաթի փոշի)	100 (14.3)
20.	Հավի ծու	1 հատ

Բայց վերոնշված ցանկի սննդամթերքի տրամադրման համար հաշվարկվել և համապատասխանաբար տրամադրվում է 450 դրամ, որը իրատեսորեն չի համապատասխանում որոշմանը: Նշված ցանկի սնունդը ՁՊՎ-ում պահվող անձին

տրամադրելու համար մոտավորապես անհրաժեշտ է 1000-1200դրամ: Միաժամանակ ավելացնենք, որ նշված գումարի վերահաշվարկի համար արդեն չորրորդ տարին է, որ դիտորդական խումբը դիմում է ՀՀ ոստիկանությանը, և ամեն տարի ՀՀ ոստիկանության կողմից տրվում է պատասխան, որ այս տարի կբարձրացվի գումարի չափը:

- Միաժամանակ շատ մեծ խնդիր է հանդիսանում սննդի ձեռքբերման հարցը, որովհետև պետք է ՁՊՎ-ի գործունեության տարածքում գտնել համապատասխան ճաշարան, որը պատրաստականություն կհայտնի 450դր-ով տրամադրել որոշակի սնունդ:

Ավելացնենք նաև, որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր ՁՊՎ-ների գործունեության քաղաքներում և գյուղերում են առկա համապատասխան ճաշարաններ, բայց մոնիթորինգի ընթացքում արձանագրվում են համապատասխան պայմանագրեր, որոնք Դիտորդական խմբի անդամների կարծիքով կրում են ձևական բնույթ: Ներկայացնենք մեկ օրինակ.

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն Մարալիկի ՁՊՎ-ի տարածքում բացակայում է նմանատիպ ճաշարան, որը միաժամանակ բարձրաձայնվել է նաև ՁՊՎ-ի վարչակազմի կողմից, բայց բարձրաձայնելուց անմիջապես հետո ՁՊՎ-ում հայտնվեց համապատասխան պայմանագիր ինչ- որ ՄՊԸ-ի հետ, որը հարցի համար բավարար լուծում չէր:

- Միաժամանակ նույն ցավոտ վիճակում է գտնվում ՁՊՎ-ում 24 ժամ հերթապահություն կատարող ոստիկանների սննդի համար նախատեսված գումարի չափը: Հերթապահ ոստիկանին 24 ժամ ծառայություն անցկացնելու ժամանակահատվածի համար տրամադրվում է մոտ 1000դր սննդի գումար, որն էլ ըստ միջին աշխատանքային ժամերի ստացվում է 450-500դր:

Ի հավելում այս ամենի՝ ՁՊՎ-ների սննդի տաքացման սենյակները գտնվում են անմխիթար, հակահիգիենիկ վիճակում բացակայում են սնունդ տաքացնելու համար նախատեսված տաքացուցիչները, սպասքը ժամանակ առ ժամանակ գտնվում է կեղտոտ և թերի վիճակում, բացակայում են սպասքը լվանալու պարագաները/ և ավելին՝ առկա է ՁՊՎ, որտեղ համապատասխան սննդի տաքացման սենյակը ընդհանրապես բացակայում է:

Բուժապասարկում

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում բուժապասարկումը ամենացավոտ խնդիրն է և մատնված է անուշադրության: ՁՊՎ-ներում բուժսենյակների որոշակի մասը համատեղված է ՁՊՎ-ի այլ սենյակների հետ, որը անընդունելի է: Առկա են որոշ ՁՊՎ-ներ, որտեղ բուժսենյակը գտնվում է ռեժիմային գոտում, բացակայում են համապատասխան բուժավանները, դեղորայքը պահվում է անհասկանալի տարբեր արկղերում և տարբեր տեղերում:

ՁՊՎ-ներում բուժապասարկումը գտնվում է հետևյալ վիճակում.

- ՀՀ ոստիկանության գործող ՁՊՎ-ներից միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ն է, որ ունի համապատասխան պայմաններ և առկա է բուժեղբայր: Մնացած բոլոր 32 ՁՊՎ-ներում նշված հաստիքը բացակայում է, որն էլ աշխատանքի ընթացքում տալիս է իր բացասական արդյունքները: Առաջին բուժօգնությունը ցուցաբերվում է շտապօգնության միջոցով, որոնց աշխատանքը մարզերում դժվարացնում են թե՛ եղանակային պայմանները և թե՛ ճանապարհի հեռավորությունը:

Առաջին բուժօգնություն ցուցաբերելու աշխատանքները թողնել ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկանի վրա, մասնագիտական ճիշտ որոշում չէ, քանի որ հերթապահ ոստիկանը չունի համապատասխան բժշկական կրթություն կամ տարրական գիտելիք, իսկ որքանով է նպատակային, որ բուժաշխատող չունենալու հետ մեկտեղ, 05.06.2008թ-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 180-րդ ենթակետի պահանջներով՝ ՀՀ ոստիկանության բուժվարչության կողմից հաստատվի դեղորայքի ցանկ, որտեղ առկա է դեղորայք, որի տրամադրումը ունի խիստ մասնագիտական մոտեցում:

Դրանք են.

Ցավագրկող, սպազմոլիտիկ, ջերմիջեցնող			
Անալգին հաբ,ամպ.	Ասկոֆեն հաբ	Տեմպալգին հաբ	Ասպիրին հաբ
Պարացետամոլ հաբ	Ցիտրամոն հաբ	Սպազմալգոն հաբ,ամպ.	Նո-շպա հաբ,ամպ.
Աղեստամոքսային միջոցներ			
Ռանիտիդին հաբ	Օմեպրազոլ հաբ	Մաալոքս հաբ	Ալմագել սուսպ
Ֆեստալ հաբ	Ցերուկալ հաբ	Լոպերամիդ հաբ	
Հակահագային միջոցներ			
Լիբեքսին հաբ	Բրոնխոլիտին հաբ	Բրոմհեքսին հաբ	Ամբրոքսոլ հաբ
Հակաալերգիկ միջոցներ			
Սուպրաստին հաբ		Տավիգիլ հաբ	
Հակագերձնշումային միջոցներ			
Կապտրոպիլ հաբ		Նիֆիդեպին հաբ	
Վիրակապային նյութեր			
Բամբակ	Ներարկիչ	Սպեղանի	Ջերմաչափ
Բինտ ստերիլ	Բինտ ոչ ստերիլ		Յոդի սպիրտային Լ-թ 5%
Լևոմիկոլ քսուկ	Ստրեպտոցիդ քսուկ		Բժշկական սպիրտ 96 %

- Դիտորդական խմբի մոնիթորինգների ընթացքում արձանագրվել է, որ ՁՊՎ-ներում ամբողջովին անտեսվում է 06.02.2002թ-ի ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները, այն է./Կալանավորվածին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ/:
- Դիտորդական խմբի մոնիթորինգների ընթացքում արձանագրվել է, որ ՁՊՎ-ներում ամբողջովին անտեսվում է 05.06.2008թ-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 179-րդ ենթակետի պահանջները, այն է. /ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածների: Նշված անձինք ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա՝ ոստիկանության մարմնի պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն/:

Ի հավելում այս ամենի Դիտորդական խումբը 2010 թ-ի ընթացքում արձանագրել է նշված ենթակետի մոտ 30 խախտում:

Սանիտարահիգիենիկ վիճակ

Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ-ում գործող ոչ մի ՁՊՎ-ում մասնագիտական մոտեցում չի ցուցաբերվում սանիտարահիգիենիկ վիճակը պահպանելու համար : Օրինակ՝

- ՁՊՎ-ների զուգարանների վատ պայմանները ոչ թե օգտագործման և տարիների քայքայման արդյունք են, այլ համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանները չապահովելու արդյունք: Առկա են այնպիսի ՁՊՎ-ներ, որտեղ տարեկան ավելի շատ անձինք են պահվում և այնտեղ սանիտարական վիճակը ավելի բարվոք է, քան այն ՁՊՎ-ներում, որտեղ ավելի քիչ անձինք են պահվում:
- ՁՊՎ-ներում օգտագործվող սպիտակեղենի 80%-ը առանց լվանալու օգտագործվում է մի քանի ձեռքակալված և կալանավորված անձանց կողմից, որն էլ իր հերթին բերում է որոշակի վարակների կամ տարբեր հիվանդությունների տարածմանը: Միաժամանակ ավելացնենք, որ ՀՀ մարզերում գործող ՁՊՎ-ների սպիտակեղենի լվացման հարցը կանոնակարգված չէ, և դա համապատասխանաբար թողնված է ՁՊՎ-ի վարչակազմի խղճին, որի արդյունքում էլ ստացվել է նշված պատկերը:
- Որոշակի խնդիր է հանդիսանում մարզային ՁՊՎ-ների գրաֆիկային ջրամատակարարումը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ջրի բաքեր չունենալը, որի արդյունքում էլ դժվարանում է ՁՊՎ-ում պահվող անձանց լոգանք ընդունելու և սանիտարահիգիենիկ վճակը պահպանելու հարցը:
- ՀՀ-ում գործող ոչ մի ՁՊՎ-ում առկա չէ ախտահանման սենյակ, որի արդյունքում էլ անկատար է մնում 05.06.2008թ-ի ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 182-րդ ենթակետը:
- ՀՀ-ում գործող ոչ մի ՁՊՎ-ում չի իրականացվում 05.06.2008թ-ի ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 183-րդ ենթակետի պահանջները, այն է. «ՁՊՎ-ում ամեն օր անցկացվում է մենախցերի և այլ սենյակների խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանող միջոցներ, իսկ սննդի տաքացման սենյակում՝ սննդի յուրաքանչյուր բաժանումից հետո»:

Կապ արտաքին աշխարհի հետ

Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքները ցույց են տվել, որ ՁՊՎ-ում պահվող անձանց կապն արտաքին աշխարհի հետ որոշակի ձևով և չափով սահմանափակվում է:

Օրինակ՝

- Շատ քիչ ՁՊՎ-ներում կարելի է հանդիպել գրականություն, որից կարող է օգտվել ՁՊՎ-ում պահվող անձը:
- ՀՀ-ում գործող ՁՊՎ-ներից միայն ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ ՁՊՎ-ների խցերում կան ռադիոընդունիչներ:
- Եթե որևէ ՁՊՎ-ում առկա են լրագրեր, ապա շատ հին են, որոնց առկայությունը ձևականության արդյունք է:
- Որոշակի չափով սահմանափակված են տեսակցությունները հարազատների հետ, որովհետև ավելորդ ծանրաբեռնվածություն է առաջանում օրական հերթապահություն կատարող մեկ ոստիկանի համար: Եթե ավելի մանրամասն ուսումնասիրեք մոնիթորինգային բաժնի աղյուսակներում ներկայացված հանձնությունների և տեսակցությունների քանակը, պատկերացում կկազմեք ընդհանուր իրավիճակի մասին:
- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում պահվող անձանց հեռախոսագանգից օգտվելուն, դա ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 65-րդ ենթակետն է, որտեղ ասվում է. Տեսակցությունից հրաժարվելու մասին ձեռքակալվածի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսագրույցով՝ մինչև 10 րոպե տևողությամբ. եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել/: Իսկ այժմ եկեք պատկերացնենք մի իրավիճակ, երբ Մեղրի քաղաքի բնակիչը պահվում է ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի ՁՊՎ-ում և հարազատը այցելելու հնարավորություն չունի, համապատասխանաբար տեսակցության դիմում չի գրվում և դա չի մերժվում, արդյունքում ստացվում է, որ տվյալ անձը հեռախոսագանգից օգտվելու իրավունք չունի:

Ջրոսանք

Դիտորդական խմբի մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ ՁՊՎ-ների զբոսաբակները համեմատաբար գտնվում են լավ վիճակում և ավելին՝ ՀՀ ոստիկանությունը ընդառաջ է գնացել Դիտորդական խմբի կարծիքին. ՁՊՎ-ների զբոսաբակների մի փոքր մասում տեղադրել համապատասխան ծածկեր, եղանակային տարբեր պայմաններից պատսպարվելու համար, որն էլ ամբողջությամբ կարելի է ասել իրագործվել և ծառայում է իր նպատակին:

Բայց հակառակ զբոսաբակների վիճակի, զբոսանքի կազմակերպումը գտնվում է շատ վատ վիճակում, որը մասնակի ձևական բնույթ է կրում: Օրինակ՝ Դիտորդական խմբի կողմից արձանագրվել է.

- Անձը ավելի ուշ է մուտք գործել ՁՊՎ, քան կազմակերպվել էր նրա զբոսանքի դուրս բերումը:
- Անձը գտնվելով դատարանում և մասնակցելով դատական նիստին, առկա էր համապատասխան գրառում, որ նույն ժամանակահատվածում նա դուրս էր բերվել զբոսանքի:
- Ըստ գրանցամատյանի, առկա էր մի հերթապահ ոստիկանի կողմից 10 հոգու միաժամանակ զբոսանքի դուրս բերման փաստը:

Առկա են դեպքեր, երբ ՁՊՎ-ում պահվող անձանց ընդհանրապես չեն հանում զբոսանքի, որը նկատելի է զբոսաբակները ուսումնասիրելուց /նկար 17, 18/: Իսկ ՁՊՎ-ի վարչակազմը մեկնաբանում է, որ չեն ցանկանում :

Սոնիթորինգի արդյունքները ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում

Սույն թվականին Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր ՁՊՎ-ն մինչ Ապրիլ ամիսը գտնվում էր ամբողջովին քայքայված վիճակում: Ապրիլ ամսից հետո կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ և բարելավվել է բուժսենյակի, սանհանգույցի, ճաշասենյակի և որոշ խցերի վիճակը: Օգոստոս ամսին ՁՊՎ-ում երեք խուց առանձանցվել է, և կատարվել են համապատասխան վերանորոգումներ, որոնք պետք է ծառայեն միայն անչափահասների և կանանց համար: Սույն թվականի Օգոստոս ամսին ՁՊՎ-ում տեղադրվեց խաչքար՝ իր աղոթատեղիով և բացման արարողության ժամանակ օծվեց հայ առաքելական եկեղեցու կողմից:

Ավելացնենք, որ ՁՊՎ-ն իր պայմաններով գտնվում է ախտահանված և կոկիկ վիճակում: ՁՊՎ-ի ճաշասենյակը կահավորված է համապատասխան ամբողջ գույքով և առկա է չորս սառնարան, իսկ վերջերս ՁՊՎ-ն համալրվել է լվացքի մեքենայով, որի արդյունքում էլ ներկայումս սպիտակեղենը լվացվում է տեղում:

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ չեն գործում 10-րդ, 15-րդ և 20-րդ խցերի ջրի ծորակները և 6-րդ խցի էլեկտրական լուսավորությունը:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ում պահվող անձանց հետ զրույցի ընթացքում և գրանցամատյանների ուսումնասիրելու արդյունքում արձանագրվել են տարբեր տեսակի խախտումներ, օրինակ՝

1. Ապօրինի պահման դեպքեր ՆԳ բաժիններում

- Ս. Հ.-ի խոսքերով՝ իրեն բերման են ենթարկել 15.02.2010թ-ին, Էրեբունի ոստիկանության բաժին: Ձերբակալվել և ՁՊՎ է տեղափոխվել 18.02. 2010թ-ին, կալանավորվել է 20.02.2010թ-ին, բայց <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանով գրանցված էր 17.02.2010թ-ին ժամը 22⁰⁰-ին: հիմքը՝ հավելված 1/
- Ա. Ա.-ն 17.02.2010-ից մինչև 19.02.2010թ-ը պահվել է Նոր Նորք ոստիկանության բաժնում, միայն 20.02.2010թ-ին ժամը 00⁰⁵-ին կազմվել է ձերբակալման արձանագրություն և ՁՊՎ է ընդունվել 20.02.2010թ-ին ժամը 02⁰⁰-ին: հիմքը՝ հավելված 1/

2. Ապօրինի քննչական գործողություններ

- Մ. Մ.-ին 08.06.2010թ-ին ժամը 07⁰⁰-ից մինչ 22⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով, իսկ ըստ ձերբակալվածի բանավոր խոսքերի, իրեն այդ ամբողջ ժամանակահատվածում պահել են Շենգավիթի ոստիկանության բաժնում: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Ն.-ին 08.06.2010թ-ին ժամը 12⁰⁰ -ից մինչև 09.06.2010թ-ի ժամը 13⁰⁰ ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով, իսկ ըստ ձերբակալվածի բանավոր խոսքերի, այդ ամբողջ ժամանակահատվածում նա գտնվել է Կենտրոնի ոստիկանության բաժնում: /հիմքը՝ հավելված 2,3/
- Գ. Գ.-ին 31.07.2010թ-ին ժամը 13²⁰-ից մինչև ժամը 23⁵⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով, նույնը կրկնվել է 02.08.2010թ-ին ժամը 11⁴⁰-ից մինչև 22⁵⁰-ը: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Ս.-ին 03.08.2010թ-ին ժամը 13³⁰-ից մինչև 04.08.2010թ-ի ժամը 03⁴⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Ս.-ին 03.08.2010թ-ին ժամը 11³⁰-ից մինչև 04.08.2010թ-ի ժամը 03⁴⁰-ը ՁՊՎ-ից՝ տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Դ.-ին ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 04.08.2010թ-ին ժամը 11¹⁰-ից և ետ բերելու վերաբերյալ նշված է միայն ժամը 22³⁰-ը: /հիմքը՝ հավելված 2,3,4/
- Վ. Գ.-ին 06.08.2010թ-ին ժամը 12²⁰-ից մինչև 07.08.2010թ-ի ժամը 03³⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Վ. Գ.-ին 06.08.2010թ-ին ժամը 12²⁰-ից մինչև 07.08.2010թ-ի ժամը 03³⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Օ.-ին 08.08.2010թ-ին ժամը 14⁰⁵-ից մինչև ժամը 22⁴⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Գ. Ա.-ին 09.08.2010թ-ին ժամը 15⁰⁵-ից մինչև ժամը 23⁰⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/

- Լ. Գ.-ին 19.08.2010թ-ին ժամը 13⁰⁰-ից մինչև 20.08.2010թ-ի ժամը 00¹⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Վ.-ին և Ա. Ա.-ին 27.09.2010 թ-ին ժամը 15¹⁰-ից մինչև 28.07.2010թ-ին ժամը 00⁴⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 3/
- Ն. Ի.-ն 05.11.2010 թ-ի ժամը 11⁵⁰-ից մինչև 06.10.2010 թ-ի ժամը 00⁵⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով: Քննիչի կողմից առկա էր գրություն առ այն, որ ձերբակալվածը տեղափոխվում է քննչական գործողությունների և ետ կվերադարձվի մինչև սույն օրվա ավարտը, որն էլ հանդիսանում է 05.11.2010 թ-ը: Միաժամանակ նշված անձին ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու 06.11.2010 թ-ին ժամը 06³⁰-ից մինչև ժամը 23⁴⁰-ին: /հիմքը՝ հավելված 2.3/
- Վ. Ա.-ին 02.11.2010 թ-ի ժամը 11⁰⁰-ից մինչև 03.11.2010 թ-ի 04⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Ա.-ին 01.11.2010 թ-ի ժամը 13⁵⁵-ից մինչև 02.11.2010 թ-ի ժամը 00⁴⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Հ. Գ.-ին 27.10.2010 թ-ի ժամը 10³⁰-ից մինչև 28.10.2010 թ-ի ժամը 00¹⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Մ. Ս.-ին ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով 26.10.2010 թ-ի ժամը 1⁵⁵-ին, բայց ՁՊՎ հետ բերելու ժամը նշված չէր: /հիմքը՝ հավելված 4/
- Գ. Հ.-ին 15.09.2010 թ-ի ժամը 11³⁰-ից մինչև ժամը 21⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Ղ.-ին 01.11.2010 թ-ի ժամը 10³⁰-ից մինչև ժամը 23⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Ն.-ին 01.11.2010 թ-ի ժամը 00⁵⁵-ից մինչև ժամը 23²⁵-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/

- Վ. Ա.-ին 01.11.2010 թ-ի ժամը 16⁰⁰-ից մինչև 02.11.2010թ-ի ժամը 01¹⁵-ին և 02.11.2010թ-ի ժամը 11⁰⁰-ից մինչև 03.11.2010թ-ը ժամը 04⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Հ. Ա.-ին 02.11.2010 թ-ի ժամը 16¹⁰-ից մինչև 03.11.2010թ-ի ժամը 04⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ռ. Մ.-ին 06.11.2010 թ-ի ժամը 14⁰⁰-ից մինչև 07.11.2010թ-ի ժամը 00⁵⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Գ. Ա.-ին 14.11.2010 թ-ի ժամը 03³⁰-ից մինչև ժամը 22⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Վ. Գ.-ն 17.11.2010 թ-ի ժամը 02¹⁵-ից մինչև ժամը 22³⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ս. Ա.-ին 03.12.2010 թ-ի ժամը 19⁰⁵-ից մինչև 04.12.2010թ-ի ժամը 17⁵⁵-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Հ. Մ.-ին 07.12.2010 թ-ի ժամը 22³⁰-ից մինչև 08.12.2010թ-ի ժամը 16⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ս. Վ.-ին 15.11.2010 թ-ի ժամը 12¹⁵-ից մինչև 16.11.2010թ-ի ժամը 02⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Ա. Գ.-ին 15.11.2010 թ-ի ժամը 12¹⁵-ից մինչև ժամը 23²⁵-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/
- Դ. Գ.-ն 18.11.2010 թ-ի ժամը 12¹⁵-ից մինչև 19.11.2010թ-ի ժամը 00⁴⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2,3/

3. Ձերբակալումից հետո Ձերբակալվածների անկանոն տեղափոխումը ՁՊՎ

- Ռ. Վ.-ին ձերբակալել են 21.07.2010թ-ին ժամը 13⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 21.07.2010թ-ին ժամը 22¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Վ. Ս.-ին ձերբակալել են 22.07.2010թ-ին ժամը 21⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 23.07.2010թ-ին ժամը 22¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/

- Ա. Ս.-ին ձերբակալել են 25.07.2010թ-ին ժամը 21³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.07.2010թ-ին ժամը 04⁴⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ն. Մ.-ին ձերբակալել են 27.07.2010թ-ին ժամը 11⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 27.07.2010թ-ին ժամը 20¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Է. Հ.-ին ձերբակալել են 27.07.2010թ-ին ժամը 16⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 28.07.2010թ-ին ժամը 03¹⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ա.-ին ձերբակալել են 29.07.2010թ-ին ժամը 19³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 30.07.2010թ-ին ժամը 19³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Հ. Ա.-ին ձերբակալել են 27.06.2010թ-ին ժամը 12³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.06.2010թ-ին ժամը 19³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Գ. Գ.-ին ձերբակալել են 28.06.2010թ-ին ժամը 23⁰⁵-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.06.2010թ-ին ժամը 23¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Գ.-ին ձերբակալել են 28.06.2010թ-ին ժամը 21¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.06.2010թ-ին ժամը 23²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Գ.-ին ձերբակալել են 28.06.2010թ-ին ժամը 23¹⁵-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.06.2010թ-ին ժամը 23⁵⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ն.-ին ձերբակալել են 01.07.2010թ-ին ժամը 17³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 02.07.2010թ-ին ժամը 02⁰⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ու.-ին ձերբակալել են 03.07.2010թ-ին ժամը 22³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 04.07.2010թ-ին ժամը 13²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ս. Խ.-ին ձերբակալել են 03.07.2010թ-ին ժամը 22¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 04.07.2010թ-ին ժամը 13²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Հ. Ք.-ին ձերբակալել են 03.07.2010թ-ին ժամը 18³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 04.07.2010թ-ին ժամը 13²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ն. Թ.-ին ձերբակալել են 13.07.2010թ-ին ժամը 12⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 13.07.2010թ-ին ժամը 21⁰⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Օ. Հ.-ին ձերբակալել են 13.07.2010թ-ին ժամը 22¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 14.07.2010թ-ին ժամը 17⁴⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ս. Հ.-ին ձերբակալել են 14.07.2010թ-ին ժամը 12¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 14.07.2010թ-ին ժամը 20⁴⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Մ.-ին ձերբակալել են 20.07.2010թ-ին ժամը 15³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 21.07.2010թ-ին ժամը 00⁵⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/

- Ա. Հ.-ին ձերբակալել են 05.05.2010թ-ին ժամը 14⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 05.05.2010թ-ին ժամը 22¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ա.-ին ձերբակալել են 30.04.2010թ-ին ժամը 03³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 30.04.2010թ-ին ժամը 20⁵⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Մ.-ին ձերբակալել են 28.04.2010թ-ին ժամը 20⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.04.2010թ-ին ժամը 18²⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Մ. Ի.-ին ձերբակալել են 30.04.2010թ-ին ժամը 03³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել ժամը 20⁴⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Խ. Ա.-ին ձերբակալել են 29.04.2010թ-ին ժամը 09⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 29.04.2010թ-ին ժամը 18⁰⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ռ. Կ.-ին ձերբակալել են 13.04.2010թ-ին ժամը 23³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 14.04.2010թ-ին ժամը 19³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Մ. Հ.-ին ձերբակալել են 10.09.2010թ-ին ժամը 15⁵⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 11.09.2010թ-ին ժամը 22³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Գ. Թ.-ին ձերբակալել են 12.09.2010թ-ին ժամը 00³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 12.09.2010թ-ին ժամը 18¹⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ա.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 18¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07³⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Հ. Թ.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 23⁵⁵-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 22¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Մ. Պ.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 21³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Վ.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 20¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Հ. Օ.-ին ձերբակալել են 16.09.2010թ-ին ժամը 24⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 17.09.2010թ-ին ժամը 15²⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Մ. Հ.-ին ձերբակալել են 10.09.2010թ-ին ժամը 13⁵⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 11.09.2010թ-ին ժամը 22³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Գ. Թ.-ին ձերբակալել են 12.09.2010թ-ին ժամը 00³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 12.09.2010թ-ին ժամը 18¹⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Թ.-ին ձերբակալել են 15.09.2010թ-ին ժամը 16⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 16.09.2010թ-ին ժամը 01²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/

- Ա. Վ.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 20¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Մ. Պ.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 21³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07²⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Ա. Ա.-ին ձերբակալել են 25.09.2010թ-ին ժամը 18¹⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 26.09.2010թ-ին ժամը 07³⁵-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Գ. Պ.-ին ձերբակալել են 09.10.2010թ-ին ժամը 13³⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 10.10.2010թ-ին ժամը 01³⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Պ. Պ.-ին ձերբակալել են 26.10.2010թ-ին ժամը 15⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 27.10.2010թ-ին ժամը 00¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/
- Հ. Գ.-ին ձերբակալել են 26.10.2010թ-ին ժամը 16⁰⁰-ին, իսկ ՁՊՎ է տեղափոխվել և ընդունվել 27.10.2010թ-ին ժամը 01¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 5/

Վերոնշյալ խախտումները կարելի է շատ երկար թվարկել և հնարավոր չէ առանձնացնել որևէ համայնքի քննչական բաժնի գործողություն, որովհետև նշված խախտումները կատարվել են բոլոր համայնքների քննչական բաժինների, ՀՀ Պաշտպանության Նախարարության քննչական ծառայության, ՀԿԳ-ի և Պետ Եկամուտների Նախարարության քննչական վարչությունների կողմից: Տվյալ խախտումների վերաբերյալ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվությունով դիմել է ՀՀ ոստիկանությանը: Ընթացիկ հաշվետվությանը և ՀՀ ոստիկանության կողմից տրված պատասխանին կարող եք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

4. <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանը ուսումնասիրելու արդյունքում արձանագրվեց, որ 190 ձերբակալվածից 56 ձերբակալվածը ՁՊՎ են ընդունվել մարմնական վնասվածքներով:

5. ՀՀ օրենսդրությամբ արգելված անձանց ՁՊՎ-ում պահելը

- Կ. Բ.-ն, լինելով հոգեկան հիվանդ, ձերբակալվել է 25.08.2010 թ-ին ժամը 22⁵⁰-ին, կալանավորվել է 26.08.2010 թ-ի 19³⁰-ին, տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ 27.08.2010 թ-ի ժամը 10²⁵-ին: /հիմքը՝ հավելված 6/

- Ա. Մ.-ն, լինելով հոգեկան հիվանդ, ձերբակալվել է 28.04.2010 թ-ի ժամը 20⁰⁰-ին, ՁՊՎ է տեղափոխվել 29.04.2010 թ-ին, ազատ էր արձակվել միայն երկու օր անց՝ 30.04.2010 թ-ի ժամը 22²⁰-ին: /հիմքը՝ հավելված 6/
- Վ. Ս.-ն, լինելով հոգեկան հիվանդ, ձերբակալվել է 18.06.2010 թ-ին ժամը 22⁰⁰-ին, ՁՊՎ է ընդունվել 19.06.2010 թ-ին ժամը 03²⁰-ին, կալանավորվել է 22.06.2010 թ-ի ժամը 00⁰⁵-ին և ՔԿՀ է տեղափոխվել 22.06.2010 թ-ի ժամը 10³⁰-ին: /հիմքը՝ հավելված 6/
- Ս. Գ.-ն, տառապելով տուրբերկույրոգ հիվանդությամբ, 30.06.2010 թ-ի ժամը 19⁰⁰-ին ձերբակալվել է, ՁՊՎ է ընդունվել 30.06.2010 թ-ի ժամը 23³⁰-ին, կալանավորվել է 02.07.2010 թ-ի ժամը 20³⁹-ին և ՔԿՀ է տեղափոխվել 03.07.2010 թ-ի ժամը 10³⁰-ին: /հիմքը՝ հավելված 6/
- Խ. Բ.-ն, տառապելով տուրբերկույրոգ հիվանդությամբ, ձերբակալվել է 19.03.2010 թ-ին ժամը 18⁰⁰-ին, ՁՊՎ է ընդունվել 19.03.2010 թ-ի ժամը 23⁵⁰-ին, կալանավորվել է 22.03.10 թ-ին և ՔԿՀ է տեղափոխվել 23.03.2010 թ-ի ժամը 11⁰⁰-ին: /հիմքը՝ հավելված 6/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ում կատարվել են բարելավման աշխատանքներ և ՁՊՎ-ն գտնվում է բավարար վիճակում:

ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում սպառված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	9-ամիս	12-ամիս
Ձերբակալված	651	888
Կալանավոր	0	0
<i>Այլ տեղեկություններ</i>		
Բուժզննություն	651	888
Բուժօգնություն	216	245
Մարմնական վնասվածք	163	175
Տեսակցություն	56	66
Հեռախոսազանգ	3	6
Լոգանք	33	38
Հանձնուք	708	881
Զբոսանք	253	268
Փաստաբանի ծառայություններ	28	30

**ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի
խոնավության(ρh), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Մեկտեմբեր ամսին			Դեկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	39.7%	+25°C	38 lux	38.8%	+20°C	18.7 lux
2- խուց	39.8%	+25°C	36.8 lux	40%	+19°C	16 lux
3- խուց	39.7%	+25°C	30 lux	41.2%	+20°C	1.5 lux
4- խուց	40.6%	+25°C	19.3 lux	41.2%	+20°C	1.5 lux
5- խուց	40.2%	+25°C	21.8 lux	41%	+20°C	2 lux
6- խուց	38.7%	+26°C	56.3 lux	52%	+19°C	34.3 lux
7- խուց	38.6%	+26°C	70.4 lux	41.2%	+19°C	28.3 lux
8- խուց	38.4%	+26°C	75.5 lux	52.1%	+19°C	29.7 lux
9- խուց	38.2%	+26°C	69.5 lux	56%	+19°C	23.5 lux
10- խուց	37.8%	+26°C	69.8 lux	56%	+19°C	26 lux
11- խուց	37.4%	+26°C	73 lux	57.4%	+19°C	30.7 lux
12- խուց	37.4%	+26°C	64.8 lux	57.3%	+18°C	21 lux
13- խուց	ծառայում է որպես պահեստ			ծառայում է որպես լվացքատուն		
14- խուց	37.3%	+26°C	25.5 lux	58%	+18°C	4.7 lux
15- խուց	37.2%	+26°C	26.3 lux	54.4%	+18°C	7.8 lux
16- խուց	37.2%	+26°C	27.5 lux	48%	+20°C	10.5 lux
17- խուց	37%	+26°C	28.3 lux	44.5%	+20°C	23.5 lux
18- խուց	36.9%	+26°C	30 lux	44.5%	+20°C	23.5 lux
19- խուց	36.6%	+26°C	44.8 lux	45.6%	+20°C	293 lux
20- խուց	36.6%	+26°C	57 lux	46.7%	+20°C	472 lux
21- խուց	36.4%	+26°C	47.5 lux	47.7%	+19°C	428 lux
Ճաշասենյակ	36.1%	+26°C	73.3 lux	62.5%	+19°C	19 lux
Տես. սենյակ	39.4%	+26°C	53.8 lux	42%	+20°C	21 lux
Քննչ. սենյակ	39.6%	+26°C	27.5 lux	42.3%	+20°C	15 lux
Քննչ. սենյակ	40%	+26°C	23.5 lux	42.3%	+20°C	15.4 lux
Բուժսենյակ	40.%	+26°C	29.5 lux	38%	+20°C	21 lux

Մոնիթորինգի արդյունքները Մյունիքի մարզում

ՀՀ Ոստիկանության Մյունիքի մարզային վարչության Միսիանի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերը համալրված են անձնական հիգիենայի պարագաներով: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում է մաքուր վիճակում: Բուժօգնությունը կատարվում է թերի: Տեսակցության սենյակը, քննչական սենյակը, բուժսենյակը, ճաշասենյակը և գուգարանը գտնվում են լավ վիճակում: ՁՊՎ-ի վարչակազմի բացատրությամբ՝ սնունդը տրվում է ըստ պայմանագրի, բայց պայմանագիրը առկա չէր ՁՊՎ-ում: ՁՊՎ-ի վարչակազմը խոստացավ, որ հաջորդ այցելության ժամանակ սննդի պայմանագրի պատճենահանված տարբերակը կներկայացվի:

Համեմատության արդյունքները

ՁՊՎ-ի ընդհանուր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ լուծվել են սանհանգույցի կարճ դռան և օդափոխության հարցերը: Խցերը համալրվել են համապատասխան անձնական հիգիենայի պարագաներով և ՁՊՎ-ն ընդհանուր առմամբ գտնվում է համեմատաբար մաքուր վիճակում:

2010-ի Օգոստոս

Ընդհանուր ՁՊՎ-ի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենից՝ բարձի երեսները գտնվում էին կեղտոտ վիճակում /նկար 19/: Բուժօգնակի սպիտակեղենը նույնպես գտնվում էր կեղտոտ վիճակում: Բուժօգնությունը կատարվում էր թերի: Ընդհանուր սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: ՁՊՎ մուտք գործած 32 ձեռքավորված և կալանավորված անձանցից ոչ ոք չէր օգտվել տեսակցության, հեռախոսազանգի, լոգանքի, հանձունք ստանալու իրենց իրավունքներից, ինչպես նաև փաստաբանի ծառայություններից:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Դ. Գ-ն ձերբակալվել էր 19.01.2010թ-ին ժամը 15⁴⁵-ին, իսկ Ե. Դ-ն ձերբակալվել էր 19.01.2010թ-ին ժամը 17²⁵-ին: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում երկու անձանց վերաբերյալ կալանավորման որոշման մասին նշումը կատարված էր 21.01.2010թ-ի ժամը 15⁰⁰-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ երկու ձերբակալվածներին էլ խափանման միջոց կիրառելու նպատակով խցերից դուրս են բերել և դատարան են տեղափոխել ժամը 18⁰⁰-19⁰⁰: /հիմքը՝ հավելված 4/
- Մ. Ա.-ն ձերբակալվել էր 16.02.2010թ-ին ժամը 13⁰⁰-ին, կալանավորվել էր 19.02.2010թ-ին ժամը 11⁰⁰-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա չէր դատարան տեղափոխելու վերաբերյալ ոչ մի գրառում: /հիմքը՝ հավելված 4/
- Ռ. Ա.-ն ձերբակալվել էր 12.05.2010թ-ի ժամը 12³⁵-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ կալանավորվել էր 14.05.2010թ-ին ժամը 12³⁵-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանով խցից դուրս էր բերվել և դատարան էր տեղափոխվել 14.05.2010թ-ի ժամը 10³⁰-ից մինչև 10⁴⁵-ը: /հիմքը՝ հավելված 4/
- Մ. Ա.-ն 17.02.2010թ-ին ժամը 02³⁰-ին ՀՀ Ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսիանի Քննչական բաժանմունքի պետ Ս.Հակոբյանի թիվ 7/40218 գրության համաձայն տեղափոխվել է քննչական գործողությունների մինչև ժամը 22⁰⁰-ն: /հիմքը՝ հավելված 2.3/
- Մ. Ա.-ին 16.02.2010թ-ին ժամը 12⁰⁰-ից մինչև 22⁰⁰-ն տեղափոխել են ՁՊՎ-ից և կատարել են քննչական գործողություններ: /հիմքը՝ հավելված 2.3/
- 30.03.2010թ-ին ժամը 11³⁰-ից մինչև 31.03.2010թ-ի ժամը 03³⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխել և քննչական գործողություններ են կատարվել Մ. Մ.-ի և Ա. Ղ.-ի հետ: /հիմքը՝ հավելված 2.3/
- 07.04.2010թ-ի ժամը 20¹⁵-ից մինչև 08.04.2010թ-ի ժամը 10⁵⁵-ը ՁՊՎ-ից տեղափոխել և քննչական գործողություններ են կատարվել նաև Մ. Ա.-ի հետ: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Հ.-ին 08.07.2010թ-ին ժամը 18⁰⁰-ից մինչև 09.07.2010թ-ի ժամը 10⁰⁰-ն ՁՊՎ-ից տեղափոխել են՝ քննչական գործողությունների նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Բ.-ն, որպես կալանավոր ՁՊՎ է ընդունվել 03.06.2010թ-ին ժամը 23⁵⁰-ին, Հ. Մ.-ն, որպես կալանավոր ՁՊՎ է ընդունվել 07.06.2010թ-ին ժամը 14³⁰-ին, Մ. Մ.-ն ընդունվել է 07.06.2010թ-ին ժամը 14³³-ին, Գ. Բ.-ի և Ա. Ն.-ի ՁՊՎ ընդունվելու վերաբերյալ չկար ոչ

մի գրառում (ոչ օրվա, ոչ ժամի), իսկ ինչ վերաբերվում է այս բոլոր 5 կալանավորներին ՔԿՀ տեղափոխելուն ` օրը անհայատ լինելով նշված էր միայն ժամը 19<sup>00</sup>-ն: /հիմքը` հավելված 4.7/

- <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում առկա էր գրառում Մ. Ա.-ի ՁՊՎ ընդունելու և ՔԿՀ տեղափոխելու մասին, բայց բացակայում էր ՁՊՎ ընդունելու և ՔԿՀ տեղափոխելու օրը և ժամը: /հիմքը` հավելված 4/
- Ա. Հ.-ն 08.07.2010թ-ին ժամը 18⁰⁰-ից ՁՊՎ-ից տեղափոխվել էր քննչական գործողություններ կատարելու նպատակով և պահվել էր մինչև 09.07.2010թ-ին ժամը 10⁰⁰-ն: /հիմքը` հավելված 2.3/

Համեմատության արդյունքները

Թեև նախկինում ՁՊՎ-ի վարչակազմը խոստացել էր, որ դիտորդական խմբին կներկայացվի սննդի պայմանագրի պատճեն, այնուամենայնիվ ոչինչ էլ չներկայացվեց: Ոչ մի կերպ չի լուծվում ՁՊՎ-ում բուժզննության հետ կապված գրառումների հարցը: Համեմատության արդյունքում թե՛ սպիտակեղենը, թե՛ սպասքը գտնվում էին նույն կեղտոտ վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Ընդհանուր ՁՊՎ-ի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, միայն մաքուր էր առաջին խցում առկա սպիտակեղենը: Սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: Բուժսենյակը, տեսակցության սենյակը, ճաշասենյակը, սանհանգույցը և քննչական սենյակը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզ դարձավ, որ զբոսանքի դուրս բերելու 15 հնարավոր տարբերակից, զբոսանքի էին դուրս բերել միայն 6 անգամ: /հիմքը` հավելված 8/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ միայն չի լուծվում սպիտակեղենը լվանալու հարցը, իսկ նախկինում արձանագրած թերությունները ամբողջովին վերացվել էին:

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Միսիանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	6-ամիս	8-ամիս	10-ամիս
Ձերբակալված	13	13	18
Կալանավոր	9	19	21
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	0	8	13
Բուժօգնություն	7	7	7
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուր	0	0	3
Զբոսանք	18	26	31
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Միսիանի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Հունիս ամսին			Օգոստոս ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	35.9%	+27°C	52 lux	30.4%	+30°C	78.8 lux	30.7%	+19°C	76.8 lux
2- խուց	34.2%	+27°C	56.8 lux	30.5%	+28°C	64.3 lux	32.3%	+19°C	77.3 lux
3- խուց	33.6%	+28°C	56.3 lux	30.7%	+28°C	58.8 lux	30.6%	+18°C	79.3 lux
Ճաշասենյակ	33.9%	+29°C	54.8 lux	30.9%	+29°C	64.3 lux	30.6%	+18°C	76 lux
Տես. սենյակ	32.9%	+29°C	0 lux	27.2%	+29°C	0 lux	30.7%	+18°C	0 lux
Քննչ. սենյակ	33.6%	+30°C	63 lux	27.2%	+29°C	53.5 lux	31.2%	+18°C	58 lux
Բուժսենյակ	32.8%	+30°C	75 lux	27.4%	+29°C	80.5 lux	37%	+19°C	76 lux

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գործիսի ՁՊՎ

2010-ի Հունիս

Ինչպես տեղեկացրել ենք՝ ՁՊՎ-ն ունի երեք խուց՝ երկու տեղանոց, բայց սպասքի քանակը 5-ն էր և գտնվում էր անմխիթար վիճակում, իսկ սպիտակեղենը կեղտոտ վիճակում գտնվում էր խցերում, մաքուր էին միայն առկա սրբիչները: Քննչական սենյակը, ճաշասենյակը, բուժսենյակը, լոգարանը, զուգարանը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակում առկա էր անհրաժեշտ քանակությամբ դեղորայք: ՁՊՎ ընդունված ցանկացած անձ ենթարկվում էր բուժզննության, որը համապատասխանաբար գրանցվում էր <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: ՁՊՎ-ի խցերում և լոգարանում ջրամատակարարումը խափանված էր և չէր գործում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Հ. Մ.-ն, որպես հետախուզվող ձերբակալվել է 11.02.2010թ-ին: 12.02.2010 թ-ին՝ խափանման միջոցը վերահաստատելու նպատակով տեղափոխվել է դատարան, որից հետո նորից ընդունվել է ՁՊՎ և ևս մեկ օր պահվելուց հետո, 13.02.2010թ-ին տեղափոխվել էր ՔԿՀ, որը եղել է շաբաթ օր, այն դեպքում, երբ շաբաթ և կիրակի օրերին ՔԿՀ-ները չեն գործում: Ավելացնենք նաև, որ մեկ օր պահելու անհրաժեշտություն չի եղել, որովհետև ՀՀ ԱՆ Գործիսի ՔԿՀ-ն և Գործիսի ոստիկանության բաժինը տեղակայված են կողք կողքի:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ լուծվել է արտաքին զննություն կատարելու հարցը և համապատասխանաբար կատարվում են գրառումներ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյաններում, որն էլ իր ստորագրությամբ հաստատում է տվյալ անձը: Բուժսենյակը առանձնացվել էր և համալրվել էր դեղորայքը:

2010-ի Օգոստոս

Ընդհանուր ՁՊՎ-ն ուսումնասիրելուց պարզ դարձավ, որ լոգարանում ջրատաքացուցիչը չէր գործում, խցերի ընդհանուր բնական և էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր, ճաշասենյակը գտնվում էր անմխիթար վիճակում, իսկ լվացարանի մասին խոսելն ավելորդ է: Ընդհանուր ՁՊՎ-ի խցերում առկա սպիտակեղենը օգտագործված էր և գտնվում էր կեղտոտ վիճակում: Թե՛ խցերի և թե՛ սանհանգույցի ջրահեռացման համակարգերը չէին գործում: Երրորդ խցի ջրի ծորակը խափանված էր:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզ դարձավ.

- Խ. Ա.-ն լինելով ՌԴ-ի հետախուզվող, բերման է ենթարկվել Սյունիքի ՄՎ-ի Գորիսի ոստիկանության բաժին և առանց ձերբակալման արձանագրության և որևէ համապատասխան այլ գրության ընդունվել է ՁՊՎ և պահվել էր 01.06.2010 ժամը 15¹⁰-ից մինչև 17⁰⁰-ն և միայն հետո է տեղափոխվել ՀՀ ԱՆ Գորիսի ՔԿՀ: Վարչակազմի համար ՁՊՎ ընդունելու հիմք էր հանդիսացել ՌԴ-ի կողմից հետախուզման որոշումը: /հիմքը՝ հավելված 10/

Համեմատության արդյունքները

ՁՊՎ-ն նախատեսված լինելով 6 հոգու համար՝ առկա 5 հոգու սպասքն անգամ չէր համալրվել և ինչպես նախորդ անգամ, այնպես էլ ներկայիս այցելության ժամանակ, սպասքը գտնվում էր անմխիթար վիճակում: Ներկայիս այցելության ժամանակ էլ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում /նկար 20/: Ինչ վերաբերվում է ջրի ծորակներին՝ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս համակարգը խափանված էր: Ավելացնենք, որ այցելությունից մի քանի ժամ անց ՁՊՎ-ի վարչակազմը Դիտորդական խմբին տեղեկացրեց, որ բոլոր թերությունները վերացված են: Հետևողական լինելով՝ ևս մեկ անգամ Դիտորդական խմբի անդամները այցելություն կազմակերպեցին Գորիսի ՁՊՎ և արձանագրեցին, որ լուծվել էր միայն խափանված ծորակի, ջրահեռացման և ջրատաքացուցիչի հարցը, բայց չի կարելի լուծված համարել կեղտոտ սպիտակեղենի և սպասքի հարցը, ճաշասենյակի անմխիթար վիճակը:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում և բուժսենյակում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Տեսակցության սենյակը, ճաշասենյակը, քննչական սենյակը և սանհանգույցը գտնվում էին լավ վիճակում, բայց սանհանգույցում գտնվող էլեկտրական միացման կետը գտնվում էր բաց վիճակում, որի դեպքում հնարավոր չէ անվտանգություն ապահովել:

Խախտումներ

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզվեց.

- Ա. Զ.-ն լինելով հոգեկան հիվանդ, պահվել է ՁՊՎ-ում 08.10.2010 թ-ի ժամը 18³⁰-ից մինչև 11.10.2010 թ-ի ժամը 18⁰⁰-ն: /հիմքը՝ հավելված 6/
- Պարզվեց, որ ՁՊՎ-ն չունի <<Հանձնությունների հաշվառման>> գրանցամատյան: /հիմքը՝ հավելված 13/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում մշտապես խցերում առկա կեղտոտ սպիտակեղենի հարցը:

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>6-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>10-ամիս</i>
Ձերբակալված	4	7	14
Կալանավոր	21	34	41
<i>Այլ տեղեկություններ</i>			
Բուժզննություն	14	29	43
Բուժօգնություն	2	2	3
Մարմնական վնասվածք	0	0	1
Տեսակցություն	0	0	2
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուր	0	0	0
Զբոսանք	17	22	36
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

**ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի ՁՊՎ-ի
խոնավության(ρh), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հունիս ամսին			Օգոստոս ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	35.9%	+27°C	100 lux	25.3%	+31°C	102 lux	36.6%	+17°C	147 lux
2- խուց	34.2%	+27°C	78 lux	25.3%	+31°C	77.8 lux	35.4%	+17°C	82 lux
3- խուց	33.6%	+28°C	76 lux	25.3%	+31°C	77.5 lux	35.3%	+18°C	82 lux
Ճաշասենյակ	33.9%	+30°C	53.3 lux	25.3%	+31°C	67 lux	34.7%	+17°C	73 lux
Տեւ. սենյակ	32.9%	+29°C	48.3 lux	25.3%	+31°C	32 lux	34.5%	+19°C	37 lux
Քննչ. սենյակ	33.6%	+30°C	210 lux	25.3%	+31°C	222 lux	37.6%	+18°C	190 lux
Բուժսենյակ	32.8%	+29°C	34.8 lux	25.3%	+31°C	31.8 lux	36.9%	+18°C	35.3 lux

ՀՀ Ոստիկանության Մյունխքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում պարզվեց, որ ՁՊՎ-ն ունի հինգ խուց՝ երկու տեղանոց, բայց սպասքը նախատեսված էր ինն անձի համար: Խցերում առկա էին անձնական հիգիենայի պարագաներ, առկա չէր սպիտակեղեն: Պատշաճ կերպով կատարվում և գրանցվում էին համապատասխան բուժզննության արդյունքները՝ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: Քննչական սենյակը, բուժսենյակը, տեսակցության սենյակը, զբոսաբակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում, միայն բուժսենյակը գտնվում էր ՁՊՎ-ի ռեժիմային գոտում, որն էլ վարչակազմը խոստացավ դուրս բերել ռեժիմային գոտուց:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզվեց.

- Մ. Պ.-ին 20.02.2010 թ-ին ցուցաբերվել էր բուժօգնություն, որը համապատասխանաբար գրանցվել էր <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, բայց բացակայում էր <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվող գրառումը: /հիմքը՝ հավելված 4/
- Գ. Խ.-ի վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում թիվ 667 գրառմամբ նշվում է, որ 15.05.2010 թ-ի ժամը 16⁰⁰-16¹⁵-ին տեղափոխվել է դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: Նույն գրանցամատյանում, նույն անձի վերաբերյալ՝ թիվ 668 գրառումով դուրս է բերվել զբոսանքի 17⁰⁰-18⁰⁰-ն, այնինչ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանով նշված անձի կալանավորման որոշումը կայացվել և համապատասխան գրառումը կատարվել է ժամը 17¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 4/
- Տվյալ պահին ՁՊՎ-ում գտնվող ձերբակալված Մ. Բ.-ն ընդհանուր ՁՊՎ-ի պայմաններից դժգոհություն չունեք, միայն հայտնեց, որ ունի հանրային պաշտպան, որը ներկայացել է, երբ ինքը գտնվել է Կապանի ոստիկանության բաժնում, դրանից հետո երկու անգամ քննիչը հարցաքննություն է կատարել, որի ժամանակ փաստաբանը չի ներկայացել:

Համեմատության արդյունքները

Դիտորդական խմբի կողմից արձանագրվեց, որ համալրվել է ՁՊՎ-ի սպասքը, բուժ-սենյակը առանձնացվել է հերթապահ ոստիկանի սենյակից, բայց գտնվում է ռեժիմային գոտում, լուծվել է խափանված լուսավորության հարցը, սանհանգույցում որոշակի ախտահանում կատարելուց հետո կարելի է ասել, որ նորից գտնվում է նույն անմխիթար վիճակում: Խցերում փակցվել էին ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները և պարտականությունները:

2010-ի Օգոստոս

Հերթական այցելության ընթացքում պարզվեց, որ խցերում բացակայում են անձնական հիգիենայի պարագաները և սրբիչները: Պատշաճ կերպով կատարվում և գրանցվում էին համապատասխան բուժզննության արդյունքները <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: Լավ վիճակում էին գտնվում բուժսենյակը, քննչական սենյակը, տեսակցության սենյակը և ճաշասենյակը: Ոչ մի կերպ չէր բարելավվում սանհանգույցի հարցը: Սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ոչ միայն ՁՊՎ-ում պահվող անձանց համար նախատեսված սպիտակեղենն էր գտնվում կեղտոտ վիճակում, այլ ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանի սպիտակեղենը նույնպես:

Խախտումներ

ՁՊՎ-ի ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Մ. Բ.-ի, Ս. Խ.-ի և Հ. Բ.-ի ուղեկցումը ՀՀ ԱՆ Գործսի ՔԿՀ կազմակերպվել էր 06.08.2010թ-ին, ամենաուշագրավը, որ ուղեկցումը կազմակերպվել էր գիշերը ժամը 01¹⁰-ին: /հիմքը՝ հավելված 9/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ բուժսենյակը տեղափոխվել էր ռեժիմային գոտուց դուրս և կահավորվել էր ըստ պատշաճի: Կարելի է ասել, որ նախորդ այցելության ժամանակ ՁՊՎ-ն գտնվում էր ավելի բարվոք վիճակում:

2010 Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Բուժսենյակը կրկին տեղափոխվել էր ռեժիմային գոտի: Տեսակցության սենյակը, ճաշասենյակը, քննչական սենյակը, բուժսենյակը և սանհանգույցը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Այցելության ընթացքում ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս խախտումներ չեն արձանագրվել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախկին բոլոր թերությունները վերացված էին: Միայն անհասկանալի պատճառով բուժսենյակը ժամանակ առ ժամանակ փոխում է իր տեղը: Նախորդ այցելություններից մեկի ժամանակ բացատրվեց, որ բուժսենյակը պետք է գտնվի ռեժիմային գոտուց դուրս, որն էլ հաջորդ այցելության ընթացքում դուրս էր բերվել տարածքից, իսկ ներկայիս այցելության ընթացքում տեղափոխվել էր կրկին ռեժիմային գոտի:

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>6-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>10-ամիս</i>
Ձերբակալված	12	12	21
Կալանավոր	80	105	147
<i>Այլ տեղեկություններ</i>			
Բուժզննություն	92	105	142
Բուժօգնություն	2	13	37
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	5	6	14
Հեռախոսագանգ	1	1	29
Լոգանք	4	16	46
Հանձնուք	39	56	73
Զբոսանք	127	169	225
Փաստաբանի ծառայություններ	6	6	14

**ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հունիս ամսին			Օգոստոս ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	30%	+31°C	35 lux	19.4%	+35°C	40 lux	28,2%	+21°C	47 lux
2- խուց	33%	+31°C	27,8 lux	19.4%	+35°C	25.5 lux	27%	+22°C	28,5 lux
3- խուց	30%	+31°C	32,5 lux	19.7%	+35°C	37 lux	27%	+21°C	36 lux
4-խուց	30%	+31°C	34,3 lux	19.8%	+35°C	35 lux	27,2%	+20°C	36,2 lux
5-խուց	34%	+31°C	40,3 lux	20.2%	+35°C	45 lux	29,6%	+20°C	41,5 lux
Ճաշասենյակ	30%	+33°C	0 lux	20.7%	+35°C	0 lux	31,7%	+20°C	0 lux
Տեւ. սենյակ	30%	+33°C	0 lux	20.6%	+35°C	0 lux	31,3%	+20°C	0 lux
Քննչ. սենյակ	30%	+32°C	18.8 lux	20.8%	+35°C	18.8 lux	31,9%	+19°C	22 lux
Բուժսենյակ	30%	+30°C	62,7 lux	20.3%	+35°C	65.3 lux	20,9%	+20°C	68,3 lux

ՀՀ Ոստիկանության Մյունխքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ համալրվել էր համապատասխան քանակությամբ սպասք և դեղորայք, խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Չէր կատարվում համապատասխան բուժզննությունը և դրա վերաբերյալ գրառումները <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գանցամատյանում: ՁՊՎ-ի գրանցամատյանները և ընդհանուր ՁՊՎ-ն ուսումնասիրելիս՝ ոչ մի թերություն չի հայտնաբերվել:

Համեմատության արդյունքները

Ընդհանուր ՁՊՎ-ում կար բավարար քանակությամբ դեղորայք: Ինչպես ամբողջ մարզում, այնպես էլ Մեղրիի ՁՊՎ-ում տեղադրվել էր քարտաֆոն հեռախոս և լուծվել էր սանհանգույցի օղափոխության համակարգի հետ կապված խնդիրը:

2010-ի Օգոստոս

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում բացակայում էին անձնական հիգիենայի պարագաները, սրբիչները գտնվում էին կեղտոտ վիճակում, չէր գործում սանհանգույցի էլեկտրական լուսավորությունը: Սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: ՁՊՎ-ի վարչակազմը խոստացավ վերը նշված թերությունները կարճ ժամանակահատվածում վերացնել: Ավելացնենք, որ ներկայիս այցելության ժամանակ նույնպես խախտումներ չեն արձանագրվել:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ընդհանուր խցերի թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը գտնվում էր լավ վիճակում: Երկրորդ խցի ջրի ծորակը չէր գործում: Քննչական սենյակում աթոռը պոկված էր

հատակից: Բուժսենյակում բացակայում էր բժշկական սալանը: Ճաշասենյակում սեղանը գտնվում էր կեղտոտ վիճակում: Առկա սպասքից 4 բաժակները նույնպես գտնվում էին կեղտոտ վիճակում /նկար 21/:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ժամանակի ընթացքում ՁՊՎ-ում ավելանում են թերությունները:

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>6-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>10-ամիս</i>
Ձերբակալված	4	7	8
Կալանավոր	0	0	2
<i>Այլ տեղեկություններ</i>			
Բուժզննություն	0	3	3
Բուժօգնություն	0	0	0
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուք	1	6	7
Զբոսանք	4	14	19
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Հունիս ամսին</i>			<i>Օգոստոս ամսին</i>			<i>Հոկտեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	19.7%	+36°C	27.3 lux	21.7%	+34°C	14 lux	30,2%	+21°C	26,5 lux
2- խուց	19.8%	+36°C	31.8 lux	21.7%	+34°C	12 lux	29,5%	+20°C	23,3 lux
Ճաշասենյակ	19.9%	+36°C	27.8 lux	21.5%	+34°C	30 lux	31,2%	+19°C	24,8 lux
Տես. սենյակ	20%	+36°C	0 lux	21.5%	+34°C	0 lux	30,5%	+20°C	0 lux
Քննչ. սենյակ	20%	+36°C	45.3 lux	21.5%	+34°C	44,8 lux	32,3%	+20°C	56,4 lux
Բուժսենյակ	19.7%	+36°C	12.5 lux	21.5%	+34°C	5.8 lux	29,1%	+22°C	9,6 lux

Մոնիթորինգի արդյունքները Արմավիրի մարզում

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը չէր փոխվել և գտնվելով կեղտոտ վիճակում՝ տրամադրվել էր ՁՊՎ ընդունված նոր անձանց, այն էլ այն դեպքում, երբ ՁՊՎ-ի պահեստում առկա էր 32 հոգու համար նախատեսված մաքուր սպիտակեղեն: Ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը բավարար էր: Բուժսենյակը համալրվել էր համապատասխան քանակությամբ դեղորայքով: Չէր կատարվում համապատասխան բուժօգնությունը և դրանից բխող գրառումները <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Լ. Ի.-ն 19.02.2010թ-ին ընդունվել է ՁՊՎ, բայց բացակայում էր համապատասխան մուտք գործելու ժամի գրառումը: /հիմքը՝ հավելված 4/
- Վ. Ա.-ն 18.01.2010թ-ին ժամը 18²⁰-ին ՁՊՎ էր ընդունվել ՔԿՀ-ից և պահվել էր ՁՊՎ-ում մինչև 26.01.2010թ-ը ժամը 09⁵⁰: /հիմքը՝ հավելված 7/
- Մ. Ս.-ն ձերբակալվել էր 18.01.2010թ-ին ժամը 23⁵⁰-ին, բայց ՁՊՎ-ից ՔԿՀ էր տեղափոխվել միայն 26.01.2010թ-ին ժամը 09⁵⁰: /հիմքը՝ հավելված 7/
- Ջ. Ն.-ն ձերբակալվել էր 10.02.2010թ-ին ժամը 22²⁵-ին, կալանավորվել էր 12.02.2010թ-ին ժամը 10³⁰-ին, բայց ՁՊՎ-ից ՔԿՀ էր տեղափոխվել 16.02.2010թ-ին: /հիմքը՝ հավելված 7/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ վերացվել են բոլոր դիտողության ենթակա թերությունները:

2010-ի Ապրիլ

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի պահման պայմանները բավարար են:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Ա.-ն ձերբակալվել էր 18.03.2010թ-ին, կալանավորվել էր 20.03.2010թ-ին, բայց ՁՊՎ-ից ՔԿՀ էր տեղափոխվել միայն 24.03.2010թ-ին: /հիմքը՝ հավելված 7/
- Ս. Մ.-ն ձերբակալվել էր 18.03.2010թ-ին, կալանավորվել էր 20.03.2010թ-ին, բայց ՁՊՎ-ից ՔԿՀ էր տեղափոխվել 24.03.2010թ-ին: /հիմքը՝ հավելված 7/
- Հ. Մ-ն ձերբակալվել էր 13.04.2010թ-ին, կալանավորվել էր 15.04.2010թ-ին, բայց ՁՊՎ-ից ՔԿՀ էր տեղափոխվել 20.04.2010թ-ին: /հիմքը՝ հավելված 7/
- Վ. Վ.-ն ՔԿՀ-ում հացադուլ հայտարարելուց հետո մեկ անգամ ՁՊՎ է տեղափոխվել և պահվել է ՁՊՎ-ում 16.03.2010թ-ից մինչև 17.03.2010թ-ը, իսկ երկրորդ անգամ՝ 23.03.2010թ-ից մինչև 27.03.2010-ը: 23.03.2010-ին նրան ցուցաբերվել է բուժօգնություն և կատարվել է համապատասխան գրառում բժշկի կողմից՝ <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության>> գրանցամատյանում: Նշվածի վերաբերյալ ՁՊՎ-ի պետը բանավոր հայտնեց, որ /տեղյակ է պահվել ոստիկանության բաժնի պետին, հաջորդաբար դատախազին և դատախազի կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն հացադուլի վերաբերյալ/, բայց տվյալ պահին առկա չէին ո՛չ արձանագրությունը և ո՛չ էլ նրա պատճեն: /հիմքը՝ հավելված 12/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ընդհանուր ՁՊՎ-ի պահման պայմանները բարելավվել են:

2010-ի Մեպտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա սպիտակեղենը և ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էին մաքուր և ախտահանված վիճակում, միայն առկա սպասքն էր գտնվում կեղտոտ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Ա.-ն ձերբակալվել էր 06.09.2010թ-ին ժամը 19¹⁰-ին և 07.07.2010թ-ին քննիչի գրությամբ ազատ էր արձակել, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում վերոնշված անձի վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 4/
- Գ. Ս.-ն 17.08.2010թ-ին ժամը 10⁵⁵-ին ՔԿՀ-ից տեղափոխվել էր ՁՊՎ՝ դատական նիստին մասնակցելու և 6 օր պահելուց հետո՝ 23.08.2010թ-ին ժամը 10¹⁰-ին էր տեղափոխվել ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/
- Կ. Զ.-ն և Գ. Ղ.-ն 11.08.2010թ-ին ժամը 15⁰⁰-ին ՔԿՀ-ից տեղափոխվել են ՁՊՎ դատական նիստին մասնակցելու համար և ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 12.08.2010թ-ին ժամը 11⁰⁰-ին տեղափոխվել են դատական նիստի և ետ բերելու վերաբերյալ չկար ոչ մի գրառում: Իսկ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում կար գրառում առ այն, որ վերոնշված կալանավորներին ՔԿՀ են տեղափոխել 12.08.2010թ-ին, բայց բացակայում էին տեղափոխման ժամերը: Ավելացնենք նաև, որ վերոնշված անձանց վերաբերյալ առկա էր ևս մեկ գրառում, որ նրանք ՁՊՎ են ընդունվել 03.08.2010թ-ին ժամը 13¹⁰-ին և հետ են տեղափոխվել ՔԿՀ 05.08.2010թ-ին, ժամը 09⁵⁰-ին: Այնինչ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր գրառում, որ 05.08.2010թ-ին ժամը 09⁵⁰-ին տեղափոխվել են դատարան: /հիմքը՝ հավելված 4/
- Վ. Գ.-ն որպես կալանավոր ՁՊՎ էր ընդունվել ՔԿՀ-ից 19.07.2010թ-ին ժամը 23⁵⁰-ին և 4 օր պահելուց հետո՝ 23.07.2010թ-ին ժամը 10⁴⁰-ին ազատ էր արձակվել: /հիմքը՝ հավելված 7/
- Ա. Փ.-ն ձերբակալվել էր 23.04.2010թ-ին ժամը 19⁵⁰-ին և ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի կալանավորվել է 26.04.2010 թ-ին ժամը 18⁰⁰ – ին, որն էլ ջնջվել և գրվել է 18⁰⁵, այնինչ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր գրառում, որ նա տեղափոխվել է դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով 26.04.2010թ-ին ժամը 18⁰⁰-ին: /հիմքը՝ հավելված 4/
- Վ. Վ.-ն ՔԿՀ-ից ընդունվել էր ՁՊՎ 23.04.2010թ-ին ժամը 13⁴⁰-ին և միայն չորս օր անց՝ 27.04.2010թ-ին ժամը 09⁵⁰-ին տեղափոխվել էր ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/
- Հ. Մ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 13.04.2010թ-ին ժամը 19⁰⁵-ին, կալանավորվել էր 15.04.2010թ-ին և միայն հինգ օր անց՝ 20.04.2010թ-ին ժամը 10¹⁰-ին տեղափոխվել էր

ՔԿՀ: Ավելացնենք նաև, որ տվյալ անձի վերաբերյալ 17.04.2010թ-ից ընդհանրապես բացակայում են գրառումները <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում: /հիմքը՝ հավելված 4.7/

- Վ. Վ.-ն և Հ. Ս.-ն ՁՊՎ են ընդունվել ՔԿՀ-ից 16.04.2010թ-ից ժամը 16⁰⁵-ին և միայն չորս օր անց՝ 20.04.2010թ-ին ժամը 10⁰⁰-ին են հետ տեղափոխվել ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/
- Գ. Գ.-ն և Ն. Է.-ն ՔԿՀ-ից ընդունվել են ՁՊՎ 26.03.2010թ-ին ժամը 13⁴⁵-ին և միայն չորս օր անց՝ 30.03.2010թ-ին ժամը 09³⁰-ին են տեղափոխվել ետ՝ ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/
- Ա. Ա.-ն և Ս. Մ.-ն ձերբակալվել էին 18.03.2010թ-ին ժամը 20²⁵-ին, կալանավորվել էին 20.03.2010թ-ին և միայն չորս օր անց՝ 24.03.2010թ-ին ժամը 16⁵⁰-ին էին տեղափոխվել ՔԿՀ: Վերոնշյալ անձանց կալանավորման և դատարան տեղափոխելու վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում: /հիմքը՝ հավելված 4.7/
- Ս. Ա.-ն ՔԿՀ-ից ՁՊՎ էր ընդունվել 15.03.2010թ-ին ժամը 15⁰⁰-ին և միայն չորս օր անց՝ 19.03.2010թ-ին ժամը 09³⁰-ին էր տեղափոխվել ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/
- Կ. Ե.-ն, որպես հետախուզվող ձերբակալվել էր 25.02.2010թ-ին ժամը 10⁵⁵-ին, կրկին խափանման միջոցը որպես կալանավորում վերահաստատելու համար 26.02.2010թ-ին ժամը 13⁰⁸-ին տեղափոխվել է դատարան և միայն չորս օր անց է 02.03.2010թ-ին, ժամը 10⁰⁰-ին է տեղափոխվել ՔԿՀ: Ավելացնենք նաև, որ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր ևս մեկ գրառում, որ վերոնշյալ անձին 01.03.2010թ-ին ժամը 14⁴⁵-ին էլ են տեղափոխել դատարան: Ոչ մի կերպ չպարզվեց՝ խափանման միջոցը վերահաստատելու փաստը տեղի է ունեցել 26.02.2010թ-ին թե 01.03.2010թ-ին: Ցանկացած դեպքում 26.02.2010թ-ին հաստատվելու ժամանակ մեկ օր ավել է պահվել որպես կալանավոր, /հիմքը՝ հավելված 7/ իսկ 01.03.2010թ-ի դեպքում կալանավորումը վերահաստատվել է 98 ժամ հետո, որը պետք է կատարվեր 72 ժամվա ընթացքում, որովետև անձը ուներ ձերբակալվածի կարգավիճակ: /հիմքը՝ հավելված 11/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում կարելի է ասել միայն, որ ՁՊՎ-ում չեն լուծվում ջեռուցման, խցերում համապատասխան լվացարան, սեղան և աթոռ ունենալու հարցերը:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, բայց ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր և ախտահանված վիճակում:

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց, որ Ք.Պ.-ն ձերբակալվել է 15.09.2010 թ-ին ժամը 12³⁰-ին՝ Արմավիրի քննչական բաժնի քննիչ Ա. Մարտիրոսյանի կողմից: Ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալու և քննիչի կողմից համապատասխան ազատ արձակման և խափանման միջոցի կիրառման համար դատարան դիմելու և չկիրառելու հետևանքով՝ 18.09.2010 թ-ին ժամը 12²⁰-ին, ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի ոստիկանության բաժնի ժ/պ ոստ. փոխգնդապետ պրն. Ն.Հախնազարյանի կողմից որոշում է կայացվել և նշված անձը ազատ է արձակվել:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս խախտումներ չեն արձանագրվել:

2010-ի Նոյեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը ինչպես միշտ, այնպես էլ տվյալ պահին գտնվում էր կեղտոտ վիճակում, բայց պահեստում առկա էր մաքուր սպիտակեղեն: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված և կոկիկ վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի լուծվում ՁՊՎ-ում պահվող անձանց մաքուր սպիտակեղենի տրամադրման հարցը:

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ-ում
սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	2-ամիս	4-ամիս	9-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	18	27	44	51	59
Կալանավոր	33	88	210	256	308
Այլ տեղեկություններ					
Բուժզննություն	0	0	110	145	201
Բուժօգնություն	5	5	21	22	36
Մարմնական վնասվածք	0	0	3	6	7
Տեսակցություն	0	0	0	1	3
Հեռախոսազանգ	0	0	0	0	0
Լոգանք	0	0	42	43	47
Հանձնուր	67	139	372	412	473
Զբոսանք	10	41	148	171	204
Փաստաբանի ծառայություններ	0	0	0	0	4

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Ապրիլ ամսին			Մեյ ամսին			Հունիս ամսին			Հունիս ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	46%	+23°C	34 lux	26%	+31°C	30 lux	27%	+20°C	36 lux	44%	+16°C	25 lux
2- խուց	45%	+23°C	30 lux	26%	+31°C	31 lux	27%	+20°C	35 lux	43%	+17°C	25.5 lux
3- խուց	45%	+23°C	27 lux	26%	+31°C	30 lux	27%	+20°C	36 lux	42%	+20°C	19.3 lux
4- խուց	44%	+23°C	34 lux	24%	+31°C	27 lux	28%	+20°C	35 lux	41%	+20°C	27.8 lux
Ճաշասենյակ	43%	+22°C	0 lux	30%	+27°C	0 lux	29%	+21°C	0 lux	38%	+21°C	0 lux
Տես. սենյակ	43%	+23°C	20 lux	31%	+28°C	25 lux	30%	+21°C	21 lux	38%	+21°C	13.5 lux
Քննչ. սենյակ	42%	+21°C	51 lux	31%	+30°C	53 lux	30%	+20°C	62 lux	39%	+21°C	46.5 lux
Բուժսենյակ	44%	+23°C	27 lux	29%	+29°C	25 lux	30%	+21°C	31 lux	39%	+20°C	26.3 lux

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Տեղեկացնենք, որ ՁՊՎ-ն ունի չորս խուց՝ չորսն էլ երկու տեղանոց, բայց սպասքի քանակը յոթն էր: ՁՊՎ-ում առկա ընդհանուր սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Խցերում տեղադրվել էին համապատասխան կենցաղային իրերի դարակներ: Քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը, և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակը համալրված էր համապատասխան քանակությամբ դեղորայքով: ՁՊՎ-ում գտնվող ձերբակալվածի հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ նրան տրամադրել են խուզարկության արձանագրություն, որը հազվադեպ է հանդիպում:

Խախտումներ

ՁՊՎ-ն ուսումնասիրելու արդյունքում Դիտորդական խմբի անդամները նկատեցին, որ երրորդ խցում ունենալով երկու ձերբակալված և կալանավորված անձ, խցի դռան վրայի դիտանցքը գտնվում էր բաց վիճակում, որի հետևանքով էլ խախտվում էին անվտանգության կանոնները:

Գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Մ.-ն 28.01.2010թ-ին ստացել էր բուժօգնություն: <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում համապատասխան հրավիրված բժշկի կողմից կատարվել էր գրառում, որ ձերբակալվածը ձախ աճուկի շրջանում ունեցել է ճողվածք և որի արդյունքում էլ հրավիրված բժշկի կողմից տրամադրվել է սպազմալզոլ տեսակի դեղահաբ: Խնդրում ենք ուշադրություն դարձնել արձանագրած հիվանդությանը և տրամադրված դեղին:
- <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՁՊՎ-ում միաժամանակ պահվել են տաս անձ, այն էլ այն դեպքում, երբ ՁՊՎ-ն նախատեսված է ութ հոգու համար:
- Այցելության ժամանակ առկա երեք կալանավորի հետ զրուցելու ընթացքում պարզ դարձավ, որ երկուսը հանձնուք են ստացել, բայց <<Հանձնուքների հաշվառման>>

գրանցամատյանը ուսումնասիրելիս պարզվեց, որ ոչ մի գրառում չկար վերոնշյալ հանձնունքի վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 13/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ բուժսենյակը համալրվել էր համապատասխան գույքով և սպիտակեղենով:

2010-ի Ապրիլ

Հերթական այցելության ընթացքում էլ արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում և կրկին բացակայում էին սրբիչները: Սպասքը համալրվել էր համապատասխան քանակությամբ: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր բարվոք վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի լուծվում կեղտոտ սպիտակեղենի և սրբիչների խնդիրը:

2010-ի Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում սպիտակեղենը կրկին կեղտոտ վիճակում էր: Կրկին թերի վիճակում էր գտնվում սպասքը, որը նախորդ այցելության ժամանակ համալրված էր: Ընդհանուր քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Սանհանգույցը ախտահանված էր և գտնվում էր մաքուր վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ն և ՁՊՎ-ում առկա գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ՁՊՎ-ն կահավորված լինելով ութ հոգու համար, ժամանակ առ ժամանակ այնտեղ պահվել են 9-16 անձ: Օրինակ՝

- 19.01.2010թ-ի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 22.01.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 12 հոգի

- 26.01.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 16 հոգի
- 29.01.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 09.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 15 հոգի
- 10.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 11 հոգի
- 11.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 13 հոգի
- 12.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 11 հոգի
- 16.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 11 հոգի
- 17.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 18.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 23.02.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 13 հոգի
- 02.03.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի
- 09.09.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի
- 18.03.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի
- 26.03.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 09.04.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 12 հոգի
- 10.04.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի
- 12.04.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 20.04.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 11 հոգի
- 22.06.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 12 հոգի
- 25.06.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի
- 02.07.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 10 հոգի
- 10.08.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 12 հոգի
- 11.08.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 12 հոգի
- 26.08.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 11 հոգի
- 27.08.2010 թվականի դրությամբ ՁՊՎ-ում պահվել են 9 հոգի

Ավելացնենք նաև, որ վերոնշված քանակությամբ անձինք չեն գիշերել ՁՊՎ-ում, այլ պահվել են 1-5 ժամ: Խցերում գիշերած ձերբակալվածների քանակը չի գերազանցում ութը, բայց անհնար է թեկուզ մեկ ժամով պահել տասնվեց հոգու: Ավելացնենք նաև, որ Դիտոր-դական խմբի անդամները ընդհանուր ուսումնասիրություններ կատարելուց հետո պար-զեցին, որ տվյալ փաստի վերաբերյալ ոչ այնքան ՁՊՎ-ի վարչակազմն է մեղավոր, այլ այդ ամենը մի քանի դատավորների կողմից նույն օրերին դատական նիստ նշանակելու և կալանավորվածներին ՔԿՀ-ներից պահանջելու աշխատելառճի արդյունքն է:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում ՁՊՎ-ի պայմանները որոշակի չափով բարելավվել էին, բայց կրկին չէր կատարվում համապատասխան բուժօգնությունը և դրանից բխող գրանույնները:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ինչպես միշտ խցերում ընդհանուր սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները բացակայում էին: Թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը խցերում շատ վատ էր: Սպասքի քանակը ավելի էր նվազել և գտնվում էր կեղտոտ վիճակում: Սանհանգույցը ուներ ախտահանման կարիք, իսկ ջրի ճնշման և մղիչ պոմպի բացակայության պատճառով ջրատաքացուցիչը չէր գործում և լոգանք ապահովելը անհնարին էր: Ավելացնենք նաև, որ ոչ միայն խցերում առկա սպիտակեղենն էր գտնվում կեղտոտ վիճակում, այլ հերթապահ ոստիկանի սպիտակեղենը նույնպես:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- ՁՊՎ-ում պահվող կալանավորված անձանց մեծամասնությունը դատական նիստին մասնակցելու համար, դատավորի գրությամբ, դատից երեք օր առաջ են տեղափոխվում ՁՊՎ, որն էլ լուրջ խոչընդոտներ է ստեղծում թե՛ ՁՊՎ-ի վարչակազմի և թե՛ ուղեկցող ջոկի համար:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի լուծվում սպիտակեղենի վանալու խնդիրը, չի համալրվում սպասքը և այս ժամանակահատվածում ավելի է վատթարացել սանհանգույցի վիճակը:

2010-ի Նոյեմբեր

Նախ և առաջ ավելացնենք, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները բացակայում էին: Խցերում թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորության վատ լինելու պատճառ է հանդիսանում անվտանգության համար նախատեսված ցանցերի առկայությունը: Զուգարանը և լոգարանը համատեղ են, գտնվում են հակահիգիենիկ վիճակում և ընդհանուր օդափոխության կարիք էր զգացվում: Քննչական սենյակում երկրորդ աթոռը բացակայում էր:

Խախտումներ

ԶՊՎ-ում պահվող անձանց հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրանց համապատասխան ձերբակալման, խուզարկության արձանագրություններ չեն տրվել, իսկ գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Մ. Մ.-ն՝ ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի ,21.10.2010 թ-ի ժամը 15²⁰-ից մինչ 17³⁰-ը տեղափոխվել է դատական նիստին մասնակցելու և միաժամանակ նույն <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանով առկա էր գրառում առ այն, որ նա զբոսանքի էր դուրս բերվել 21.10.2010 թ-ին ժամը 16³⁰-17³⁰-ը: /հիմքը՝ հավելված 4.8/
- Ա. Ս.-ն անհասկանալի պատճառներով 25.10.2010 թ-ին ժամը 15⁰⁵-ից մինչև 21³⁰-ը ԶՊՎ-ից տեղափոխվել է քննության ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի ոստիկանության օպեր-լիազոր Ա. Տերտերյանի պահանջով, որն էլ անց է կացվել հենց օպեր-լիազորի կողմից: Ավելացնենք, որ ԶՊՎ-ից անձին տեղափոխելու գործողությունը կատարվում է քննիչի կամ դատախազի հայտի հիման վրա:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ սպասքը համալրվել էր և գտնվում էր մաքուր վիճակում: Սանհանգույցը գտնվում էր նույն վատ վիճակում և ոչինչ չէր ձեռնարկվել սպիտակեղենի և սրբիչների խնդիրը լուծելու համար:

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ-ում
պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	2-ամիս	4-ամիս	9-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	16	33	70	72	80
Կալանավոր	69	142	288	339	391
Այլ տեղեկություններ					
Բուժզննություն	0	0	0	0	32
Բուժօգնություն	2	4	7	7	7
Մարմնական վնասվածք	0	0	0	0	0
Տեսակցություն	3	4	11	13	14
Հեռախոսազանգ	0	0	0	0	0
Լոգանք	0	0	5	5	6
Հանձնուր	44	93	962	1018	1064
Զբոսանք	145	348	520	635	752
Փաստաբանի ծառայություններ	0	5	10	11	11

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Ապրիլ ամսին			Մեյտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	44%	+24°C	8 lux	24%	+35°C	11 lux	37%	+20°C	12 lux	42%	+20°C	18 lux
2- խուց	43%	+26°C	30 lux	24%	+35°C	28 lux	37%	+21°C	29.3 lux	41%	+20°C	29 lux
3- խուց	41%	+26°C	8.5 lux	24%	+35°C	11 lux	36%	+23°C	14 lux	40%	+21°C	14 lux
4- խուց	46%	+26°C	7.5 lux	24%	+35°C	10 lux	36%	+21°C	11.7 lux	40%	+21°C	19 lux
Ճաշասենյակ	44%	+25°C	52 lux	24%	+30°C	61 lux	36%	+20°C	64.3 lux	41%	+20°C	48 lux
Տես. սենյակ	45%	+25°C	0 lux	24%	+30°C	0 lux	36%	+19°C	0 lux	41%	+20°C	0 lux
Քննչ. սենյակ	45%	+24°C	0 lux	25%	+30°C	0 lux	36%	+19°C	0 lux	41%	+20°C	0 lux
Բուժսենյակ	43%	+26°C	28 lux	25%	+30°C	27 lux	37%	+20°C	21.3 lux	41%	+20°C	26 lux

Մոնիթորինգի արդյունքները Լոռու մարզում

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ալավերդու ՁՊՎ

2010-ի Մարտ

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ մաքուր սպիտակեղեն և սպասք: Խցերի բնական լուսավորությունը վատ էր, որովհետև պատուհանները փոքր էին: Ընդհանուր ՁՊՎ-ն չունի բուժսենյակ, բայց առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Սանհանգույցը, քննչական, տեսակցության սենյակները և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Այցելության ընթացքում ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս փաստացի ոչ մի խախտում չարձանագրվեց, միայն բուժզննության արդյունքները չէին գրանցվում:

2010-ի Մեպտեմբեր

Տեղեկացնենք, որ բուժսենյակը, քննչական և ոստիկանի հանգստի սենյակը համա-տեղված էին մեկ սենյակում: Կարելի է ասել, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր, ախտահանված վիճակում: Միայն վնասված էր առաջին խցի և միջանցքի կես առաստաղը, որն էլ վնասվել էր երկրորդ հարկում գտնվող ոստիկանության բաժնի ջրահեռացման համակարգի խափանման պատճառով /նկար 22,23/: Վարչակազմը խոստացավ շատ կարճ ժամանակահատվածում վերացնել առկա թերությունը:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում կարելի է միայն ասել, որ ՁՊՎ-ում կատարվում են համապատասխան բարելավման աշխատանքներ:

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ալավերդու ՁՊՎ-ում սլահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>3-ամիս</i>	<i>9-ամիս</i>
Ձերբակալված	11	25
Կալանավոր	4	12
<i>Այլ տեղեկություններ</i>		
Բուժզննություն	10	11
Բուժօգնություն	1	4
Մարմանակ վնասվածքներ	0	0
Տեսակցություն	0	0
Հեռախոսազանգ	0	0
Լոգանք	1	5
Հանձնուր	8	10
Զբոսանք	29	59
Փաստաբանի ծառայություններ	3	3

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ալավերդու ՁՊՎ-ի խոնավության(ρh), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Մեպտեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջերմ.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	15.2%	+28°C	6.5 lux
2- խուց	15.4%	+28°C	7 lux
3- խուց	15.6%	+30°C	7 lux
4- խուց	16%	+31°C	7 lux
Ճաշասենյակ	16.1%	+22°C	0 lux
Տես. սենյակ	16%	+23°C	0 lux
Քննչ. սենյակ	14.4%	+31°C	0 lux
Բուժսենյակ	14.4%	+31°C	0 lux

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ

2010-ի Մարտ

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Առկա էր բավարար քանակությամբ սպասք: ՁՊՎ-ի բոլոր խցերի բնական լուսավորությունը շատ վատ էր, պատուհանների վատ որակի պատճառով: Խցերը կահավորված էին կենցաղային իրերի դարակով: ՁՊՎ-ում գտնվող երկու ձերբակալվածներն էլ ստացել էին ձերբակալման և խուզարկության արձանագրությունները: ՁՊՎ-ն չունի բուժ-սենյակ, բայց առկա է համապատասխան քանակությամբ դեղորայք: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր բարվոք վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Լոռու մարզի դատախազ՝ Ս.Օ. Առաքելյանի կողմից առկա էր գրություն առ այն, որ Հ. Գ.-ին և Մ. Պ.-ին պահեն ՁՊՎ-ում 05.03.2010 թ-ից մինչև 14.03.2010 թ-ը: /հիմքը՝ հավելված 7/
- Ձեր կատարվում ՁՊՎ ընդունված անձանց բուժզննությունը և համապատասխան գրառումները <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ չի լուծվել ջեռուցման խնդիրը և այցելության ընթացքում ունենալով երկու ձերբակալված, պահում էին ՁՊՎ-ում և օրենքով նախատեսված +18°C ապահովված չէր:

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում պարզվեց, որ ինչպես նախորդ անգամ, այնպես էլ այժմ սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Կրկին անգամ փաստում ենք, որ այդպիսի մեծ ՁՊՎ-ն չունի բուժսենյակ, բայց ռեժիմային գոտուց դուրս ունի չօգտագործվող խուց, որը կարելի

է վերափոխել և օգտագործել որպէս բուժսենյակ: Քննչական սենյակը գտնվում է անմխիթար վիճակում, որովհետև առկա է բարձր խոնավություն:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ն և գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ.

- Դիտորդական խմբի անդամները նկատեցին, որ Դիտորդական խմբի կողմից տրամադրված բուկլետները և գրքույկները, որով իրազեկում են ձերբակալված անձանց իրենց իրավունքների մասին, բացակայում էին խցերից և կարելի է ասել ՁՊՎ-ից: Մեր այն հարցին, թե ինչու է տրամադրվում ձերբակալվածներին վերը նշված նյութերը, որպեսզի ծանոթանան իրենց իրավունքներին, ՁՊՎ-ի պետի ժամանակավոր պաշտոնակատար պարոն Այվազյանը պատասխանեց. <<Դա ձերբակալված և կալանավորված անձանց անհրաժեշտ չէ, որովհետև մեր կողմից իրենց բացատրվում է իրենց իրավունքների մասին>>:
- Չի կատարվում ՁՊՎ ընդունված անձանց արտաքին զննություն և չի լրացվում համապատասխան <<Ձերբակալված անձանց բուժզննության և բուժօգնության>> գրանցամատյանում:
- Գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ 151 ձերբակալված և կալանավորված ունենալու դեպքում, կազմակերպվել էր 2 տեսակցություն, որոնք տրամադրվել էին Դիտորդական խմբի անդամների միջամտության արդյունքում:
- Լոգարանում տաք ջրի հարցը կապված է ջեռուցման հետ և կարելի է ասել, որ 2006 թ-ից մինչ օրս, ՁՊՎ-ն չունի լոգարանում տաք ջրի հնարավորություն, որպեսզի ձերբակալված և կալանավորված անձինք օգտվեն իրենց լոգանք ընդունելու իրավունքից:
- Սույն թվականի հունվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը, ունենալով 29 ձերբակալված և կալանավորված անձ, ոչ ոք դուրս չէր եկել զբոսանքի: Ավելացնենք նաև, որ նշված 29 անձի դեպքում 41 հնարավոր տարբերակ է եղել զբոսանքի դուրս բերելու: Հետագայում շատ կարճ ժամանակահատվածներով այլ ձերբակալված և կալանավորված անձինք էլ դուրս չեն բերվել զբոսանքի:
- Ունենալով 20 փաստաբանի հետ հանդիպման գրառում, բոլոր 20-ն էլ իրականացվել են քննիչի մասնակցությամբ:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր պայմանները գնալով ավելի են վատթարանում և համապատասխան գրանցամատյանները լրացվում են թերի:

2010-ի Մեպտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ 8 անձի համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր կեղտոտ վիճակում գտնվող 6 բաժակ, 7 ափսե:

Խախտումներ

ՁՊՎ-ում գտնվող ձերբակալվածի հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրան տրամադրվել է ձերբակալման արձանագրություն, իսկ խուզարկության արձանագրություն՝ ոչ:

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Շ.-ն, ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 21.08.2010 թ-ին ժամը 08⁵⁰-ին տեղափոխվել էր Ստեփանավանի ոստիկանության բաժին՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով, բայց ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ նրան ելք էին արել ու տեղափոխել Ստեփանավանի ոստիկանության բաժին, որից հետո՝ ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> մատյան, կրկին մուտք էր արվել 21.08.2010 թ-ի ժամը 15³⁰-ին:
/հիմքը՝ հավելված 4/
- Պ. Բ.-ն ձերբակալվել էր 11.05.2010 թ-ի ժամը 14⁵⁰-ին, 14.05.2010 թ-ին 14⁵⁰-ին ՁՊՎ-ից տեղափոխվել էր ՔԿՀ, բայց 12.05.2010 թ-ին ժամը 19²⁰-ին <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կար գրառում հրավիրված բժիշկ Սիմոնյանի կողմից, որ ոտքերի ոսկորների ջարդվածքներից ունի ցավեր, բողոքում է շնչառությունից և ընդհանուր սրտխառնոցից և տրամադրվել է սպազմալուցի դեղահաբ:

Համեմատության արդյունքները

Ընդհանուր ՁՊՎ-ում կատարվել էին բարելավման աշխատանքներ, բայց չի լուծվում բուժսենյակի հարցը: Ինչպես նշվել էր, առկա է ազատ խուց, որը չի օգտագործվում և որը կարելի է օգտագործել որպես բուժսենյակ:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ ինչպես միշտ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում նկար 24/: 8 անձի համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր 7 բաժակ, 9 խոր ավսե, 7 սովորական ավսե և 3 կեղտոտ պատառաքաղ: Խցերում թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր: Բնական լուսավորության վատ լինելու պատճառ էին հանդիսանում փոքր ապակիները և վանդակաճաղերը: Քննչական սենյակում խոնավությունից վնասվել էին պատերը: ՁՊՎ-ում ոչ մի կերպ չի լուծվում բուժսենյակի և համապատասխան արտաքին զննության գրառումների հարցը: Ընդհանուր սանհանգույցը գտնվում էր լավ վիճակում, բայց ուներ օդափոխության կարիք: Չէր գործում ՁՊՎ-ի ջրահեռացման համակարգը: Երկրորդ և չորրորդ խցերում չէին գործում ջրի ծորակները:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Վ. Մ.-ն, որպես հետախուզվող բերման էր ենթարկվել Վանաձորի ոստիկանության բաժին և հանձնվել է ՁՊՎ-ին 05.10.2010 թ-ի ժամը 01⁵⁰-ին և 05.10.2010 թ-ին ժամը 17²⁰-ին՝ առանց որևէ գործողություն իրականացնելու (առանց ձերբակալման արձանագրությունը կազմելու և խափանման միջոցը որպես կալանք վերահաստատելու) տեղափոխվել էր Վանաձորի ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 10/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ կրկին սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, սպասքը չէր համալրվել համապատասխան քանակությամբ: Չէին կատարվում համապատասխան գրառումները արտաքին զննության վերաբերյալ և ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը ավելի է վատացել: Բայց ՁՊՎ-ի վարչակազմի կողմից եղավ առաջարկ, որ շատ կարճ ժամանակահատվածում կվերացվեն բոլոր թերությունները և կլուծվի բուժսենյակի հարցը:

**ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ-ում
սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	3-ամիս	7-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	28	64	72	81
Կալանավոր	40	87	103	111
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	0	0	0	0
Բուժօգնություն	2	11	14	14
Մարմնական վնասվածք	0	0	1	1
Տեսակցություն	0	2	2	2
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	0	0	0	0
Հանձնուր	16	58	60	70
Զբոսանք	42	81	94	113
Փաստաբանի ծառայություններ	18	20	22	26

**ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	28.1%	+31°C	12.5 lux	25.4%	+30°C	14 lux	56.1%	+23°C	18.5 lux
2- խուց	28.2%	+31°C	21.3 lux	25%	+27°C	12.5 lux	55.4%	+23°C	19.8 lux
3- խուց	28.2%	+31°C	13.5 lux	25.2%	+27°C	9.5 lux	54.7%	+22°C	18.3 lux
4-խուց	28.6%	+31°C	7.5 lux	25.2%	+27°C	6 lux	55%	+22°C	8 lux
Ճաշասենյակ	28.1%	+31°C	0 lux	27.1%	+30°C	0 lux	55.9%	+24°C	0 lux
Տես. սենյակ	28.4%	+31°C	54.3 lux	29%	+26°C	53 lux	56%	+24°C	45 lux
Քննչ. սենյակ	28.3%	+31°C	0 lux	26.5%	+28°C	0 lux	56.5%	+24°C	0 lux
Բուժսենյակ	x	x	x	x	x	x	x	x	x

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն համալրված էր մաքուր սպիտակեղենով, բայց սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: Խցերի բնական լուսավորությունը շատ վատ էր, որովհետև պատուհանները երեք տարբեր տրամաչափերի ցանցերի շերտերով էին պատված: Բուժսենյակը համատեղված էր քննչական սենյակի հետ և համալրված էր համապատասխան քանակությամբ դեղորայքով: Սանհանգույցը, տեսակցության սենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Զբոսաբակը ամբողջովին կանաչապատ էր և կարելի էր ասել, որ ոչ ոքի ընդհանրապես զբոսանքի դուրս չեն բերում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Վ. Ս.-ն ՁՊՎ է ընդունվել 09.07.2010 թ-ին՝ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Ստեփանավանի ոստիկանության բաժնից: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 11.07.2010թ-ի ժամը 14⁰⁵-ին քննիչի գրության համաձայն տեղափոխվել է Ստեփանավանի ոստիկանության բաժին՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով և ետ չի վերադարձվել: Հետագա ճակատագիրը պարզ չէ: /հիմքը՝ հավելված 2.3/
- Մ. Ք.-ն ընդունվել է ՁՊՎ 25.05.2010 թ-ին՝ ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Ստեփանավանի ոստիկանության բաժնից և 28.05.2010 թ-ին քննիչի գրության համաձայն տեղափոխվել է Ստեփանավանի ոստիկանության բաժին՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով, բայց ետ չի վերադարձվել: Հետագա ճակատագիրը պարզ չէ: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Դ.-ն ՁՊՎ է ընդունվել 06.03.2010 թ-ին ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Ստեփանավանի ոստիկանության բաժնից և 09.03.2010 թ-ին՝ քննիչի գրության համաձայն տեղափոխվել է Ստեփանավանի ոստիկանության բաժին՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով: Հետագա ճակատագիրը պարզ չէ: /հիմքը՝ հավելված 2.3/

- Վ. Ս.-ն 09.07.2010 թ-ին ժամը 10³⁰-ից մինչև 21²⁰-ը տեղափոխվել է ՁՊՎ-ից՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով: /հիմքը՝ հավելված 2.3/
- Ա. Ս.-ն 11.03.2010 թ-ին ժամը 11⁰⁰-ին տեղափոխվել է ՁՊՎ-ից՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով և ետ չի վերադարձվել: Հետագա ճակատագիրը պարզ չէ: /հիմքը՝ հավելված 2.3/
- Է. Ն.-ն և Ա. Թ.-ն 22.02.2010 թ-ին 10⁵⁰-ին տեղափոխել են ՁՊՎ-ից՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով և ետ չեն վերադարձվել: Հետագա ճակատագրերը պարզ չեն: /հիմքը՝ հավելված 2.3/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ վերանորոգվել էր ընդհանուր ջրամատակարարման ցանցը, լոգարանում գործում էր ջրատաքացուցիչը, համալրվել էր համապատասխան դեղորայքով և ընդհանուր պայմանները բարելավվել էին:

2010-ի Սեպտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում /նկար 25/ իսկ դեղարկողը գտնվում էր ոչ թե բուժսենյակում, այլ հերթապահ ոստիկանի սենյակում, որտեղ էլ առկա էր ժամկետանց դեղորայք: Չեն կատարվում համապատասխան արտաքին զննության և դրանից բխող գրառումները: Ճաշասենյակում բացակայում էր սնունդ տաքացնելու համար նախատեսված տաքացուցիչը: Սպասքը կեղտոտ վիճակում գտնվում էր հատակին, որտեղ առկա էր 1 գդալ, 4 բաժակ, 1 պատառաքաղ և 4 փսե /նկար 26/: Լոգարանում և զուգարանում ջուր օգտագործելու դեպքում ջուրը դուրս էր գալիս միջանցքի հատակից: Երրորդ խցի լվացարանը գտնվում էր անմխիթար վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Ռ.-ն Տաշիրի ՁՊՎ-ից տեղափոխվել է Թումանյանի ոստիկանության բաժին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էր համապատասխան գրառումը:

- Ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի՝ չկար ոչ մի գրառում մարմանական վնասվածքներով ՁՊՎ մուտք գործած անձանց վերաբերյալ, բայց դեղորայքը ուսումնասիրելու ժամանակ արձանագրվեց, որ ժամկետանց և անմխիթար վիճակում էր գտնվում /ռեվանոլ/ տեսակի դեղ, որի անմխիթար վիճակում գտնվելու վերաբերյալ օրվա հերթապահ ոստիկանը բացատրեց, որ ունեցել են քերծվածքներով կալանավոր, որին օգնություն են ցույց տվել:
- Ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի, երեք տարբեր անձանց բուժօգնություն է ցուցաբերվել, որոնց վերաբերյալ համապատասխանաբար բացակայում էին գրառումները <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում:

Համեմատության արդյունքները

Պարզվեց, որ նախորդ այցելության ընթացքում արձանագրված ոչ մի թերություն վերացված չէր:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ բոլոր խցերի բնական լուսավորության հարցը շատ մտահոգիչ է: Ինչպես նախորդ անգամ նշել ենք, խցերի պատուհանները շատ փոքր էին և անվտանգության համար նախատեսված վանդակաճաղերը երեք շերտ էին, որն էլ խոչընդոտում էր խցերում բնական լույսի ներթափանցմանը: Երեք հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր 1 գդալ, 1 պատառաքաղ, 4 բաժակ և 4 ափսե: Ճաշասենյակում բացակայում էր համապատասխան տաքացուցիչը:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, դեղարկղը տեղադրված էր համապատասխան բուժսենյակում և բացակայում էին ժամկետանց դեղերը: Միայն չէր լուծվել սպասքի հարցը:

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ-ում
պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	7-ամիս	8-ամիս	10-ամիս
Ձերբակալված	12	13	13
Կալանավոր	8	9	9
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	0	3	3
Բուժօգնություն	3	3	3
Մարմանական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուք	5	5	5
Զբոսանք	18	18	18
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	32.5%	+27°C	3.8 lux	28.2%	+25°C	4 lux	50.8%	+23°C	4.2 lux
2- խուց	32.5%	+27°C	3.8 lux	28.2%	+25°C	4 lux	50.5%	+23°C	4.2 lux
3- խուց	32.5%	+27°C	4.3 lux	27.6%	+22°C	7.5 lux	50.5%	+23°C	5 lux
Ճաշասենյակ	32.3%	+28°C	95 lux	27.7%	+24°C	70.5 lux	51.7%	+23°C	68 lux
Տես. սենյակ	32.4%	+27°C	0 lux	29.5%	+24°C	0 lux	53.8%	+23°C	0 lux
Քննչ. սենյակ	32.6%	+28°C	211 lux	30%	+26°C	220 lux	50.5%	+23°C	180 lux
Բուժսենյակ	32.6%	+28°C	211 lux	30%	+26°C	220 lux	50.5%	+23°C	180 lux

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ

2010-ի Մարտ

Ընդհանուր ՁՊՎ-ն ուսումնասիրելուց պարզ դարձավ, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ վեց հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում սպասքից առկա էր վեց բաժակ, երեք գդալ, երեք ափսե: Խցերի բնական լուսավորությունը վատ էր, որովհետև պատուհանները փոքր են և պատված են շատ մանր ցանցով: Խցերում առկա էին կենցաղային իրերի դարակներ: ՁՊՎ-ն չունի բուժսենյակ, բայց համալրված էր բավարար քանակությամբ համապատասխան դեղորայքով: Սանհանգույցը, քննչական, տեսակցության սենյակները և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում:

2010-ի Հուլիս

Հերթական այցելության ընթացքում կրկին արձանագրվեց, որ առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Առկա էր բավարար քանակությամբ սպասք: Բուժսենյակը կահավորված էր համապատասխան գույքով և համատեղվել էր տեսակցության սենյակի հետ, իսկ ընդհանուր ՁՊՎ-ի պայմանները բարելավվել էին: Ճաշասենյակում բացակայում էր տաքացուցիչը:

Խախտումներ

Գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը լրացվում է թերի: Որպես կանոն, բոլոր քննչական գործողությունները կատարվում են ՁՊՎ-ի տարածքից դուրս և որպես կանոն, փաստաբանի հետ հանդիպումը կատարվում է միայն քննիչի մասնակցությամբ:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ համատեղության կարգով լուծվել էր բուժսենյակի հարցը, վերանորոգվել էր առաջին խցի ջրի ծորակը: Միայն չէր լուծվել սնունդը տաքացնելու համար նախատեսված տաքացուցիչի հարցը: Արտաքին զննության արդյունք-

ները կատարվում էին ըստ պատշաճի և լրացվում էին <<Ձերբակալված անձանց բուժ-
զննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

2010-ի Մեպտեմբեր

Տեղեկացնում ենք, որ ՁՊՎ-ում առկա սպիտակեղենը կրկին ամբողջությամբ գտնվում էր
կեղտոտ վիճակում: Խցերը չունեն ո՛չ համապատասխան կենցաղային իրերի դարակներ և ո՛չ
էլ փոխարինող խորշեր: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր լավ վիճակում, բայց ուներ
օդափոխության կարիք, որովհետև սանհանգույցի տհաճ հոտը տարածվում էր ամբողջ ՁՊՎ-
ում:

Խախտումներ

Այցելության ժամանակ պարզվեց, որ օրվա հերթապահ ոստիկանը բացակայում է ՁՊՎ-ից:

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Գ. Ն.-ն երեք օր պահվելով ՁՊՎ-ում՝ 17.07.2010-ից մինչև 20.07.2010 թ-ը, եղել է
վատառողջ և չորս անգամ շտապօգնություն է հրավիրվել՝ նրան բուժօգնություն
ցուցաբերելու համար, ստացել է համապատասխան դեղորայք, բայց չի տեղափոխվել
բուժհաստատություն: Ավելացնենք նաև, որ նշված չորս բուժօգնությունների դեպքում,
միայն մեկի վերաբերյալ է առկա գրառում <<Ձերբակալվածներին խցերից դուրս
բերելու>> գրանցամատյանում: */հիմքը՝ հավելված 4/*
- ՁՊՎ-ն սույն թվականի հունվարի 1-ից մինչև այցելության օրը ունենալով 26
ձերբակալված և կալանավորված անձ, միայն 14-ի նկատմամբ է իրականացրել
արտաքին զննություն և գրանցվել է համապատասխան գրանցամատյանում, որոնցից
12-ի գրառման ժամանակ օրը, ամիսը և ժամը չի նշվել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ չի լուծվում սպիտակեղենը լվանալու
խնդիրը: Լուծվել է ճաշասենյակում սնունդը տաքացնելու համար նախատեսված տաքա-
ցուցիչի հարցը:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված և մաքուր վիճակում: Նախորդ այցելությունից մինչ օրս ՁՊՎ-ում շարժ չի գրանցվել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր վիճակում, միայն չէին գործում առաջին խցի և լոգարանի ջրի ծորակները: Վարչակազմը խոստացավ, որ շատ կարճ ժամանակահատվածում դրանք կփոխարինվեն նորերով:

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>3-ամիս</i>	<i>7-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>10-ամիս</i>
Ձերբակալված	3	9	9	9
Կալանավոր	3	14	17	17
<i>Այլ տեղեկություններ</i>				
Բուժզննություն	0	17	14	14
Բուժօգնություն	0	1	7	7
Մարմնական վնասվածքներ	0	0	1	1
Տեսակցություն	0	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	0	0	10	10
Հանձնուր	1	6	6	6
Զբոսանք	6	25	28	28
Փաստաբանի ծառայություններ	0	2	3	3

ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակ ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Հուլիս ամսին</i>			<i>Սեպտեմբեր ամսին</i>			<i>Հոկտեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	30.9%	+28°C	8.5 lux	27.8%	+27°C	4.5 lux	46.6%	+22°C	7 lux
2- խուց	30.5%	+28°C	9 lux	27.7%	+27°C	4 lux	46.5%	+22°C	7.5 lux
3- խուց	30.5%	+29°C	7.3 lux	27.4%	+27°C	4 lux	46.3%	+22°C	6 lux
Ճաշասենյակ	30.4%	+28°C	0 lux	26.8%	+26°C	0 lux	46.6%	+23°C	0 lux
Տես. սենյակ	31%	+28°C	10.3 lux	28.4%	+26°C	8.5 lux	45.8%	+22°C	12 lux
Քննչ. սենյակ	31%	+28°C	0 lux	28.8%	+27°C	0 lux	46%	+22°C	0 lux
Բուժսենյակ	31%	+28°C	10.3 lux	28.4%	+26°C	8.5 lux	45.8%	+22°C	12 lux

Մոնիթորինգի արդյունքները Արարատի մարզում

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ

2010-ի Հունվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերի բնական լուսավորությունը շատ վատ էր: Չորրորդ և հինգերորդ խցերում էլեկտրական լուսավորությունը խափանված էր: Ընդհանուր ՁՊՎ-ն խոնավ էր: Քննչական սենյակը ամբողջովին պատված էր փոշով /նկար 27/, իսկ վարդակը գտնվում էր բաց վիճակում: Բժշկական սավանը կեղտոտ էր: Ավելացնենք, որ տեսակցության սենյակն էլ էր նույն անմխիթար վիճակում: Սանհանգույցը գտնվում էր հակասանիտարահիգիենիկ վիճակում: Համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում ճաշասենյակը, բայց տասնմեկ անձի համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր սպասք միայն վեց անձի համար:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանի սենյակի աղբամանի տակ դրված էր Դիտորդական խմբի կողմից հրատարակված բուկլետը:

Գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում ընդհանրապես ոչ մի գրառում չի կատարվում:

ՁՊՎ-ի հինգերորդ խուցը գտնվում էր ռեժիմային գոտուց դուրս և կահավորված էր ըստ պատշաճի:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի վիճակը ավելի էր վատթարացել, և այցելության ընթացքում ՁՊՎ-ի վարչակազմի հետ եկանք նույն հայտարարի, որպեսզի կարճ ժամանակահատվածում վերացվեն թերությունները:

2010-ի Հունիս

Ընդհանուր ՁՊՎ-ում սպիտակեղենը բացակայում էր, առկա էին միայն կեղտոտ վիճակում գտնվող սրբիչներ: Առկա էր շատ սակավ քանակությամբ դեղորայք: Տեսակցության սենյակը և սանհանգույցը գտնվում էին անմխիթար վիճակում: Տասնմեկ հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր երեք բաժակ և վեց գդալ: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս՝ հինգերորդ խուցը գործում էր ռեժիմային գոտուց դուրս:

Խախտումներ

Այցելության ընթացքում ՁՊՎ-ում հանդիպելով պահվող ձերբակալված անձի հետ պարզվեց, որ նրան չեն տրամադրել ո՛չ ձերբակալման և ո՛չ էլ խուզարկության արձանագրությունները:

Տվյալ պահին ՁՊՎ-ում պահվող ձերբակալված Ա. Բ-ն. երկու օր ՁՊՎ-ում պահելու ընթացքում չէր տրամադրվել սպիտակեղեն: Ինչպես նաև ըստ ձերբակալվածի՝ ստացել էր հանձնուք, որը գրանցված չէր <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում: /հիմքը՝ հավելված 4, 13, 14/

Միաժամանակ Ա. Բ-ն տեղեկացրեց, որ դիմել է քննիչին՝ փաստաբանով ապահովելու համար, իսկ քննիչը խոստացել է 72 ժամը լրանալուց հետո ապահովել: /հիմքը՝ հավելված 15/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում վերոնշյալ ՁՊՎ-ում նախկին այցելությունից հետո ոչ մի բան չէր փոխվել և դրա վերաբերյալ Դիտորդական խմբի անդամները ընթացիկ հաշվետվությունով դիմել են ՀՀ ոստիկանապետին՝ միջոցներ ձեռնարկելու նպատակով, որին ավելի մանրամասն կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

2010-ի Մեպտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն համալրվել էր համապատասխան քանակությամբ սպասքով, սպիտակեղենով և դեղորայքով: Սանհանգույցը ինչպես նախկինում, այնպես էլ տվյալ այցելության ընթացքում գտնվում էր անմխիթար, հակահիգիենիկ վիճակում, իսկ ընդհանուր ՁՊՎ-ի պայմանները կարելի էր բավարար գնահատել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախորդ բոլոր դիտողությունների արդյունքում թերությունները վերացվել են, միայն սանհանգույցը ուներ ախտահանման կարիք:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ դիտարկումների արդյունքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Խցերում կենցաղային իրերի համար նախատեսված խորշերը խոնավությունից բորբոսնել էին: Բուժսենյակում սավանը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ դեղարկղում առկա էր ժամկետանց դեղորայք: Լոգարանում գործում էր ջրատաքացուցիչը, բայց չէր ծառայում իր նպատակին՝ ջրի ճնշման և մղիչ պոմպի բացակայության պատճառով: Ոչ մի կերպ չի լուծվում գուգարանի ախտահանման հարցը, իսկ սպասքից՝ բաժակները գտնվում էին կեղտոտ վիճակում: Երկրորդ խցի պատուհանի ապակին կոտրված էր, այն էլ Հոկտեմբեր ամսին /նկար 28/:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Բ.-ն ՔԿՀ-ից տեղափոխվել է ՁՊՎ 27.09.2010 թ-ին ժամը 14²⁰-ին, դատական նիստին մասնակցելու համար, բայց ետ տեղափոխելու վերաբերյալ միայն նշված էր ժամը 14²⁰: /հիմքը՝ հավելված 4.7/
- Վ. Խ.-ն ՔԿՀ-ից տեղափոխվել է ՁՊՎ 28.09.2010 թ-ին ժամը 13⁴⁰-ին՝ դատական նիստին մասնակցելու համար և ետ տեղափոխելու վերաբերյալ նշված չէր ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը: /հիմքը՝ հավելված 4.7/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի ախտահանվում սանհան-գույցը և կարելի է ասել, որ նախորդ այցելության հետ համեմատած՝ ՁՊՎ-ի վիճակը ավելի է վատթարացել:

2010-ի Նոյեմբեր

Այցելության ընթացքում պարզ դարձավ, որ Դիտորդական խմբի կողմից տրամադրված նյութերը, որոնք տեղեկատվություն են տալիս ձերբակալվածների իրավունքների մասին, չեն տրամադրվում ՁՊՎ-ում պահվող անձանց, որպեսզի ծանոթանան իրենց իրավունքներին: Ընդհանուր ՁՊՎ-ի պայմանները ուսումնասիրելու արդյունքում արձանագրվեց, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, խցերի թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր: Առկա էր ժամկետանց դողդրայք: Սանհանգույցը գտնվում էր վատ վիճակում և կարելի է ասել, որ նույնիսկ ախտահանելու դեպքում արդյունքի հասնել հնարավոր չէ:

Խախտումներ

Ընդհանուր ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ համապատասխան այն փաստաթղթերը, որոնք պետք է գտնվեին ՁՊՎ-ում, բացակայում էին: Դրանք են. քննիչի կողմից կազմված հայտերը՝ կապված քննչական գործողությունների հետ, խափանման միջոցը որպես կալանք ընտրելու դեպքում դատարանի կողմից տրվող որոշումների պատճենները, որի վերաբերյալ էլ ՁՊՎ-ների վարչակազմը մեկնաբանեց, որ անձնական գործի հետ ուղարկում են ՔԿՀ:

Գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ, որ բուժօգնության նպատակով խցերից դուրս բերելիս գրանցում չեն կատարում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ բուժսենյակի սավանը փոխվել էր նորով, ճաշասենյակը գտնվում էր կեղտոտ վիճակում, ոչ մի կերպ չի լուծվում զուգարանի ախտահանման խնդիրը, վերանորոգվել էր երկրորդ խցի կոտրված ապակին, բայց մնացած խցերի ապակիները այնքան կեղտոտ էին, որ բնական լուսավորությունը ներս չէր թափանցում:

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ-ում
պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	1-ամիս	6-ամիս	9-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	6	19	31	41	46
Կալանավոր	0	35	47	58	65
Այլ տեղեկություններ					
Բուժզննություն	0	4	24	33	43
Բուժօգնություն	0	3	4	5	9
Մարմնական վնասվածք	0	0	0	0	1
Տեսակցություն	0	0	5	5	6
Հեռախոսազանգ	0	0	0	0	0
Լոգանք	0	0	3	3	3
Հանձնուր	2	19	25	25	25
Զբոսանք	10	123	148	159	171
Փաստաբանի ծառայություններ	0	0	2	2	3

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Ապրիլ ամսին			Մեյ ամսին			Հունիս ամսին			Հունիս ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	26%	+32°C	48 lux	23%	+37°C	30 lux	38%	+18°C	36 lux	43%	+19°C	36 lux
2- խուց	28%	+32°C	72 lux	23%	+37°C	62 lux	34%	+19°C	63 lux	42%	+19°C	59 lux
3- խուց	26%	+31°C	71 lux	22%	+36°C	70 lux	35%	+18°C	61 lux	42%	+19°C	60 lux
4-խուց	27%	+31°C	54 lux	23%	+36°C	53 lux	35%	+19°C	58 lux	41%	+20°C	50 lux
Ճաշասենյակ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
Տես. սենյակ	26%	+32°C	38 lux	23%	+35°C	43 lux	36%	+17°C	51 lux	44%	+18°C	44 lux
Քննչ. սենյակ	26%	+32°C	76 lux	24%	+35°C	80 lux	34%	+18°C	72 lux	43%	+19°C	77 lux
Բուժսենյակ	26%	+32°C	75 lux	23%	+35°C	79 lux	34%	+18°C	81 lux	41%	+20°C	81 lux

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ

2010-ի Հունվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ի պայմանները լավ էին: Առկա էր որոշակի քանակությամբ դեղորայք: Ջրի ճնշման, համապատասխան բաքի և մղիչ պոմպի բացակայության արդյունքում հնարավոր չէր ապահովել լոգանք: Ճաշասենյակում սպասքը գտնվում էր բաց և անմխիթար վիճակում, ինչպես նաև բացակայում էր սնունդը տաքացնելու համար նախատեսված համապատասխան տաքացուցիչը:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

<<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չի կատարվում համապատասխան գրառումներ՝ կալանավորված անձանց ՔԿՀ տեղափոխելու մասին: /հիմքը՝ հավելված 7.4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ զբոսաբաժնում տեղադրվել էր համապատասխան ծածկ, կահավորվել էր բուժսենյակը, դեղորայքը համալրվել էր բավարար քանակությամբ:

2010-ի Հունիս

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Քննչական սենյակը և բուժսենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակում առկա էր համապատասխան քանակությամբ դեղորայք: Սանհանգույցը և ճաշասենյակը գտնվում էին ախտահանված, մաքուր վիճակում: Ճաշասենյակում առկա էր բավարար քանակությամբ սպասք:

Համեմատության արդյունքները

Առկա թերությունների վերաբերյալ ՁՊՎ-ի վարչակազմի հետ եկանք փոխհամաձայնության, որ դրանք շատ կարճ ժամանակահատվածում կվերացվեն:

2010-ի Մեպտեմբեր

Տեղեկացնենք, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, իսկ սրբիչները կրկին բացակայում էին: Խցերում թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր: Սանհանգույցը ամբողջությամբ գտնվում էր կեղտոտ, անմխիթար վիճակում: Ընդհանուր ՁՊՎ-ի մնացած սենյակները կարելի է ասել, որ գտնվում էին բավարար վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախորդ այցելության ընթացքում արձանագրած կեղտոտ սպիտակեղենի փոխարեն առկա էր մաքուր սպիտակեղեն, բայց սրբիչները բացակայում էին: Նախկինում արձանագրված մաքուր սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ լավ վիճակում և կարելի է ասել, որ ոչ մի թերություն առկա չէր, միայն չորրորդ խցի պատուհանն էր կոտրված /նկար 29/:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախկինում արձանագրված թերությունները վերացվել էին:

2010-ի Նոյեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում և ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված և մաքուր վիճակում: Միայն չէր գործում չորրորդ խցի ջրի ծորակը:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ս. Գ.-ն 30.10.2010 թ-ին ժամը 10⁰⁰-ին տեղափոխվել է քննչական սենյակ՝ քննչական գործողություններ կատարելու նպատակով, իսկ ետ բերելու վերաբերյալ բացակայում

են գրառումները: ՁՊՎ-ի վարչակազմը մեկնաբանեց, որ քննիչը թուղթ էր մոռացել, չի կատարել համապատասխան գործողություններ և Ս. Գ.-ն նույն րոպեին ետ է վերադարձվել խուց: Ավելացնենք, որ քննչական գործողություններ չկատարելը և շատ կարճ ժամանակ անց ձերբակալվածին ետ խուց տեղափոխելը չի տալիս համապատասխան լիազորություն, որպեսզի նախատեսված գրառումները չկատարվեն գրանցամատյանում: /հիմքը՝ հավելված 4/

- Գ. Ի.-ն՝ լինելով հետախուզվող, ընդունվել է ՁՊՎ առանց ձերբակալման արձանագրության: Միաժամանակ ՁՊՎ-ի վարչակազմը մեկնաբանեց, որ Գ.Ի.-ն մեղայականով է նարկայացել Արտաշատի ոստիկանության բաժին, այդ իսկ պատճառով ձերբակալման արձանագրություն չենք կազմել: Ի հավելում այս ամենի տեղեկացնենք, որ մեղադրյալի մեղայականով ներկայանալը պատճառ չի հանդիսանում անձին առանց որևէ հիմքի ՁՊՎ ընդունել: /հիմքը՝ հավելված 10/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ մասնակի վերանորոգման աշխատանքներ էին կատարվել զուգարանում: Վերանորոգվել էր չորրորդ խցի պատուհանի ապակին: Գործում էր ՁՊՎ-ի ջեռուցումը:

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>1-ամիս</i>	<i>6-ամիս</i>	<i>9-ամիս</i>	<i>10-ամիս</i>	<i>11-ամիս</i>
Ձերբակալված	3	28	39	66	68
Կալանավոր	7	52	117	130	141
<i>Այլ տեղեկություններ</i>					
Բուժզննություն	0	71	144	165	177
Բուժօգնություն	0	12	22	24	24
Մարմնական վնասվածք	0	0	9	9	9
Տեսակցություն	0	0	4	4	4
Հեռախոսազանգ	0	0	7	10	13
Լոգանք	0	0	0	0	0
Հանձնուք	0	55	90	99	106
Զբոսանք	11	45	100	115	124
Փաստաբանի ծառայություններ	0	0	5	5	5

**ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Ապրիլ ամսին			Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	30%	+31°C	10 lux	24%	+34°C	14 lux	38%	+19°C	17 lux	38%	+21°C	13.8 lux
2- խուց	29%	+31°C	6 lux	24%	+34°C	8 lux	38%	+20°C	9.7 lux	38%	+21°C	8 lux
3- խուց	28%	+31°C	5 lux	24%	+33°C	8 lux	38%	+20°C	8.8 lux	39%	+21°C	9.3 lux
4- խուց	28%	+31°C	6 lux	22%	+33°C	7 lux	38%	+19°C	7.5 lux	38%	+22°C	10 lux
5- խուց	27%	+31°C	5 lux	22%	+34°C	4 lux	38%	+19°C	3.3 lux	39%	+21°C	4.4 lux
6- խուց	27%	+31°C	9 lux	22%	+35°C	8 lux	38%	+19°C	10 lux	38%	+21°C	11 lux
Ճաշասենյակ	28%	+31°C	24 lux	22%	+30°C	23 lux	38%	+18°C	21 lux	38%	+21°C	20.8 lux
Տես. սենյակ	28%	+31°C	27 lux	24%	+30°C	28 lux	38%	+19°C	26 lux	39%	+21°C	26.3 lux
Քննչ. սենյակ	28%	+31°C	27 lux	24%	+30°C	25 lux	38%	+18°C	24 lux	39%	+22°C	22 lux
Բուժսենյակ	28%	+31°C	142 lux	24%	+30°C	106 lux	38%	+18°C	134 lux	39%	+21°C	116 lux

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված և մաքուր վիճակում, իսկ բուժսենյակում սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում /նկար 30/, առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Քննչական, տեսակցության սենյակները և սանհանգույցը գտնվում էին լավ վիճակում: Ճաշասենյակում չէր գործում էլեկտրական լուսավորությունը և առկա էր բավարար քանակությամբ սպասք, միայն բացակայում էին գդալները:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի պայմանները ավելի են բարելավվել, բայց տեղեկացնենք, որ ՁՊՎ-ի թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր:

2010-ի Մեյսիսներ

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ տեսակցության սենյակում բացակայում էր հարազատների հետ շփվելու համար նախատեսված երկկողմանի կապի միջոցը /նկար 31/: Չորրորդ խցի պատուհանի ապակին կոտրված էր, իսկ մնացած խցերի պատուհանների ապակիները գտնվում էին շատ կեղտոտ վիճակում, որի արդյունքում էլ բնական լուսավորությունը խցերի ներս չէր թափանցում /նկար 32,33/:

Խախտումներ

Այցելության ընթացքում ՁՊՎ-ում արձանագրելով ձերբակալված Ա. Ա-ին, գրույցի ընթացքում պարզվեց, որ նրան ձերբակալելուց հետո չեն տրամադրել ո՛չ ձերբակալման և ո՛չ էլ խուզարկության արձանագրությունները:

Համեմատության արդյունքները

Համեմատության ընթացքում պարզվեց, որ ոչինչ չէր ձեռնարկվել ՁՊՎ-ի բնական և էլեկտրական լուսավորությունը վերականգնելու առումով: Լուծվել էին ճաշասենյակի

էլեկտրական լուսավորության հարցը, խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ երկրորդ խցի հատակը ամբողջությամբ խոնավությունից փտել էր: Ինչպես նախորդ այցելությունների ընթացքում, այնպես էլ ներկայումս՝ չորրորդ խցի պատուհանի ապակին չէր վերանորոգվել և գտնվում էր կոտրված վիճակում, իսկ մնացած խցերի պատուհանների ապակիները այնքան կեղտոտ էին, որ բնական լույսը ներս չէր թափանցում: Խցերում բացակայում էր սպիտակեղենը: Լոգարանում չէր գործում ջրատաքացուցիչը, իսկ ճաշասենյակը գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Կ. Հ.-ն 30.09.2010 թ-ին իր հարազատներից ստացել էր հանձնուք, համապատասխան հանձնուք ստանալու դիմումը առկա էր, բայց <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում բացակայում էր գրառումը: /հիմքը՝ հավելված 4.13/
- Մ. Ֆ.-ն, ՀՀ ՊՆ 8-րդ կայազորի քննչական բաժնի ավագ քննիչ Վ. Հակոբյանի ձեռքակալման արձանագրության հիման վրա մուտք էր գործել ՁՊՎ 14.05.2010թ-ին, ժամը 21⁰⁰-ին: ՁՊՎ ընդունելու ժամանակ համապատասխան արտաքին զննության արդյունքում արձանագրվել էր, որ Մ. Ֆ.-ի մարմնի տարբեր մասերում առկա էին վնասվածքներ՝ դեմքի աջ մասում այտուց, ձախ աչքի մոտ քերծվածք և այտուց, ձախ ականջին քերծվածք, թիկունքի ձախ և աջ մասերում քերծվածքներ, թևերի արմունկներին քերծվածք, աջ և ձախ ոտքերի ծնկներին և սրունքներին կապտուկներ, ջրթունքի ձախ մասում այտուց, գլխի աջ մասում այտուց, ծնոտի աջ մասում այտուց: 17.05.2010 թ-ի ժամը 20⁵⁰-ին ազատ է արձակվել նույն քննիչի որոշման հիման վրա: Ավելացնենք նաև, որ նշված փաստի վերաբերյալ Դիտորդական խմբի կողմից ընթացիկ գրությամբ տեսքով դիմվել է ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանին: Ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:
- Իսկ ՁՊՎ-ն ուսումնասիրելիս արձանագրվեց, որ ՁՊՎ-ում տվյալ պահին պահվող անձին չէին տրամադրել սպիտակեղեն: Մեր այն հարցին, թե ինչու ձեռքակալվածին

սպիտակեղեն չեն տրամադրել, ՁՊՎ-ի պետք մեկնաբանեց. <<Մենք կարծում ենք, որ ինքը հոգեկան հիվանդ է և կարող է իրեն վնասել>>: Բայց հիվանդությունը ապացուցող ոչ մի փաստաթուղթը առկա չէր: /հիմքը՝ հավելված 14/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի լուծվում տեսակցության սենյակի երկկողմանի կապի միջոցի հարցը: Չի լուծվում չորրորդ խցի պատուհանի կոտրված ապակու և մնացած խցերի ապակիների մաքրման խնդիրը:

2010-ի Նոյեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, խցերի թե՛ բնական և թե՛ էլեկտրական լուսավորությանը հարցը չէր լուծվել: Քննչական սենյակը գտնվում էր մաքուր վիճակում, բայց վերանորոգման կարիք էր զգացվում: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում բացակայում էր 6 հոգու նկատմամբ ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ ամիսը, օրը և ժամը: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Կ.-ն, ըստ գրանցամատյանների և ՁՊՎ-ում պահվող իր վերաբերյալ փաստաթղթերի, 20.10.2010 թ-ին ժամը 20³⁰-ին բերման է ենթարկվել Արարատի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժին՝ ոստիկան, օպեր-լիազոր Կ. Հովհաննիսյանի կողմից, որի վերաբերյալ կազմվել է բերման ենթարկելու արձանագրություն, որից հետո նույն օրը, կրկին նույն անձի վերաբերյալ կազմվել էր երկրորդ բերման ենթարկելու արձանագրությունը: Երկրորդ բերման ենթարկելու արձանագրության մեջ ժամը նշված էր 22⁵⁰-ին: Ավելացնենք նաև, որ երկրորդ բերման ենթարկելու արձանագրությունը կազմվել է նույն օպեր-լիազորի կողմից, իսկ ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի, նա ՁՊՎ է ընդունվել 20.10.2010 թ-ին ժամը 23²⁰-ին:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ գործում էր ՁՊՎ-ի ջեռուցումը, տեսակ-
ցության սենյակում բացկայում էր շփման համար նախատեսված կապի միջոցը, լոգարանում
գործում էր ջրատաքացուցիչը, իսկ ճաշասենյակում ափսեները գտնվում էին կեղտոտ
վիճակում: Վերանորոգվել էր չորրորդ խցի պատուհանի կոտրված ապակին:

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	6-ամիս	9-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	21	37	42	46
Կալանավոր	49	66	83	93
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	57	84	106	120
Բուժօգնություն	0	6	6	8
Մարմնական վնասվածք	0	1	1	2
Տեսակցություն	0	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	0	0	0	0
Հանձնուք	42	63	72	92
Զբոսանք	96	131	160	179
Փաստաբանի ծառայություններ	0	15	21	27

ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ՁՊՎ-ի խոնավության(ք), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Ապրիլ ամսին			Մեյ ամսին			Հունիս ամսին			Հուլիս ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	27%	+32°C	35 lux	29%	+42°C	34 lux	41%	+20°C	33 lux	45%	+18°C	29 lux
2- խուց	27%	+31°C	22 lux	29%	+42°C	20 lux	42%	+21°C	18 lux	44%	+18°C	20 lux
3- խուց	26%	+32°C	28 lux	28%	+41°C	31 lux	40%	+21°C	30 lux	44%	+19°C	24 lux
4- խուց	27%	+31°C	25 lux	30%	+40°C	27 lux	42%	+20°C	24 lux	43%	+19°C	26 lux
Ճաշասենյակ	27%	+31°C	14 lux	28%	+40°C	13.4 lux	43%	+19°C	11 lux	42%	+19°C	14 lux
Տես. սենյակ	26%	+32°C	19 lux	28%	+40°C	19.3 lux	40%	+21°C	18 lux	46%	+18°C	22 lux
Քննչ. սենյակ	26%	+32°C	73 lux	28%	+38°C	82 lux	44%	+29°C	87 lux	41%	+20°C	90 lux
Բուժսենյակ	27%	+32°C	29 lux	28%	+38°C	24.3 lux	40%	+21°C	25 lux	41%	+19°C	25 lux

Մոնիթորինգի արդյունքները Կոտայքի մարզում

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ճաշասենյակը գտնվում էր բարվոք վիճակում և առկա էր համապատասխան քանակությամբ սպասք: Տեսակցության, քննչական սենյակները և սանհանգույցը ախտահանված և մաքուր վիճակում էին: Բուժսենյակը համատեղված էր քննչական սենյակի հետ, և առկա էր բավարար քանակությամբ դեղորայք:

Խախտումներ

Այցելության ընթացքում ՁՊՎ-ում հանդիպելով ձերբակալված և կալանավորված անձանց պարզվեց, որ նրանց ոչ մեկին չէր տրվել համապատասխան խուզարկության, ձերբակալման արձանագրությունները և կալանավորվածին՝ կալանավորման որոշումը:

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ քննչական գործողությունները կատարվում են անկանոն, օրինակ՝

- Ա. Հ.-ն ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 20.01.2010թ-ին ժամը 13²⁵-23⁰⁰ և 21.01.2010թ-ին ժամը 12⁴⁵-23³⁰ /հիմքը՝ հավելված 2, 3/
- Հ. Ա.-ն ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 20.01.2010թ-ին ժամը 13²⁵-23⁰⁰: /հիմքը՝ հավելված 2, 3/
- Հ. Ն.-ն ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 02.02.2010թ-ին ժամը 15¹⁵-ին և ետ բերելու վերաբերյալ չկար ոչ մի գրառում: /հիմքը՝ հավելված 2, 3, 4/
- Հ. Թ.-ն ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով՝ 15.02.2010թ-ին ժամը 15⁵⁵-ին և ետ բերելու վերաբերյալ չկար ոչ մի գրառում: /հիմքը՝ հավելված 2, 3, 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը բարելավվել էր, բայց համապատասխան գրանցամատյաններում գրառումները կատարվում էին թերի:

2010-ի Հուլիս

Կրկին այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Առկա էր համապատասխան քանակությամբ սպասք: Ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը բավարար էր:

Խախտումներ

Ինչպես նախորդ այցելության ժամանակ, երբ արձանագրվել էր, որ ՁՊՎ-ում պահվող ձերբակալված և կալանավորված անձանց չէին տրամադրում ձերբակալման, խուզարկության արձանագրությունները և կալանավորման որոշումը, նույնը արձանագրվեց հերթական այցելության ընթացքում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը բարելավվել է և բոլոր թերությունները վերացվել են:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ այցելության ընթացքում ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված, մաքուր վիճակում: Միայն կարելի է ասել, որ ՁՊՎ-ում առկա էր շատ բարձր խոնավություն:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի նախորդ անգամվա վիճակը պահպանվել էր:

2010-ի Նոյեմբեր

Տեղեկացնենք, որ այցելության ընթացքում արձանագրվեց, որ առաջին և երկրորդ խցերի ջրի ծորակները չէին գործում, և առաջին խցի ջրահեռացման համակարգը վնասված էր: Սանհանգույցում չէր գործում երկրորդ ջրահեռացման համակարգը: Ընդհանուր ՁՊՎ-ի սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Ճաշասենյակում առկա սրբիչը գտնվում էր կեղտոտ վիճակում: ՁՊՎ-ն նախատեսված լինելով 10 հոգու համար՝ ճաշասենյակում առկա էր 5 խոր ափսե, 5 սովորական ափսե և 10-ական տարբեր չափսի գդալներ:

Ընդհանուր ՁՊՎ-ն ուներ մաքուր և կոկիկ տեսք:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ.

- Ա. Գ.-ն, որպես հետախուզվող ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ոստիկանության բաժին բերման է ենթարկելուց հետո՝ 12.10.2010 թ-ի ժամը 01³⁰-ին տեղափոխվել է ՁՊՎ, առանց ՁՊՎ ընդունելու հիմքերի, որը նշված դեպքում ձերբակալման արձանագրությունն է: /հիմքը՝ հավելված 10/
- Ա. Խ.-ն, որպես հետախուզվող ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ոստիկանության բաժին բերման է ենթարկելուց հետո՝ 12.11.2010 թ-ի ժամը 07⁵⁵-ին տեղափոխվել է ՁՊՎ, առանց ՁՊՎ ընդունելու հիմքերի, որը նշված դեպքում ձերբակալման արձանագրությունն է: /հիմքը՝ հավելված 10/
- Ա. Ս.-ն, որպես հետախուզվող ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ոստիկանության բաժին բերման է ենթարկելուց հետո՝ 27.09.2010 թ-ի ժամը 21⁴⁵-ին տեղափոխվել է ՁՊՎ, առանց ՁՊՎ ընդունելու հիմքերի, որը նշված դեպքում ձերբակալման արձանագրությունն է: /հիմքը՝ հավելված 10/

**ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ՁՊՎ-ում
պահված անձանց մասին բնդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	2-ամիս	7-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	15	29	33	42
Կալանավոր	49	147	196	218
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	64	173	228	252
Բուժօգնություն	1	1	7	9
Մարմնական վնասվածք	0	5	8	10
Տեսակցություն	1	5	6	7
Հեռախոսազանգ	0	0	1	1
Լոգանք	9	24	31	34
Հանձնուր	1	14	37	60
Զբոսանք	69	167	221	245
Փաստաբանի ծառայություններ	0	1	6	8

**ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Հոկտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	28.3%	+30°C	7 lux	39.7%	+26°C	6 lux	49.5%	+17°C	5.25 lux
2- խուց	28.4%	+30°C	6.5 lux	38.9%	+26°C	7.7 lux	49.8%	+16°C	6.25 lux
3- խուց	28.3%	+30°C	6.25 lux	39.6%	+26°C	8.5 lux	49.8%	+16°C	7.5 lux
4-խուց	28.4%	+30°C	6.25 lux	39.7%	+26°C	7.5 lux	49.8%	+16°C	8.25 lux
5-խուց	28.3%	+30°C	11.3 lux	39.8%	+26°C	10 lux	49.6%	+16°C	12.5 lux
Ճաշասենյակ	28.3%	+30°C	0 lux	39.7%	+25°C	0 lux	50.1%	+17°C	0 lux
Տես. սենյակ	28.6%	+30°C	18.3 lux	39.7%	+26°C	13 lux	50.1%	+17°C	15.4 lux
Քննչ. սենյակ	28.4%	+30°C	15.3 lux	39.7%	+26°C	14.5 lux	49.8%	+17°C	14.5 lux
Բուժսենյակ	28.4%	+30°C	15.3 lux	39.7%	+25°C	14.5 lux	49.8%	+17°C	14.5 lux

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախրիի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի առաջին խցում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում և ընդհանրապես բացակայում էին սրբիչները: Քննչական սենյակի բարձր խոնավության հետևանքով՝ միշտ խափանված վիճակում է գտնվում էլեկտրական լուսավորությունը: Առաջին խուցը վերափոխվել էր բուժսենյակի, բայց ամբողջովին կահավորված չէր: Տեսակցության և քննչական սենյակները համատեղված լինելու հետ մեկտեղ՝ կահավորված չեն ըստ պատշաճի: Սանհանգույցը գտնվում էր ախտահանված լավ վիճակում, բայց բացակայում էր տաք ջրի հնարավորությունը: Ճաշասենյակում բացակայում էր տաքացուցիչը, բայց առկա էր բավարար քանակությամբ սպասք՝ մաքուր վիճակում:

Խախտումներ

Տեղեկացնենք, որ ՁՊՎ-ն չէր ջեռուցվում և ջեռուցման սեզոնին ձերբակալված և կալանավորված անձանց տեղափոխում էին համապատասխան Կոտայքի ՁՊՎ, բայց գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ս. Մ.-ին ձերբակալել են 14.01.2010թ-ին ժամը 20¹⁰-ին, բայց Կոտայքի ՁՊՎ է տեղափոխվել 15.01.2010թ-ին ժամը 18²⁰-ին:
- Հ. Ա.-ն ձերբակալվել էր 18.01.2010թ-ին ժամը 18⁰⁰-ին, տեղափոխվել էր Կոտայքի ՁՊՎ 19.01.2010թ-ին ժամը 13¹⁰-ին, բայց Կոտայքի ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց, որ նա ընդունվել է 2.5 ժամ հետո՝ ժամը 15⁴⁰-ին: Տեղեկացնենք, որ Նախրիի ՁՊՎ-ից Կոտայքի ՁՊՎ հեռավորության ժամանակը կազմում է մոտ 20-30 րոպե:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ վատ վիճակում, որի արդյունքում էլ ՁՊՎ-ի վարչակազմը պարտավորվեց մինչ հաջորդ այցելությունը վերացնել բոլոր թերությունները:

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ մաքուր վիճակում: Սանհանգույցը ամբողջովին ախտահանված էր: Բուժսենյակը համալրված էր համապատասխան դեղորայքով:

Խախտումներ

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Հ. Խ.-ն ձերբակալվել էր 02.07.2010թ-ին և ՔԿՀ էր տեղափոխվել 06.07.2010թ-ին ժամը 11³⁰-ին, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի չկար գրառում առ այն, թե երբ էր նա տեղափոխվել դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: /հիմքը՝ հավելված 4/
- Ն. Ս.-ն, որպես հետախուզվող ձերբակալվել էր 03.07.2010թ-ին և 04.07.2010թ-ին տեղափոխվել էր ՔԿՀ՝ առանց դատարան տեղափոխելու և խափանման միջոցը որպես կալանք վերահաստատելու: /հիմքը՝ հավելված 10/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի վարչակազմը հետևողական լինելով իր խոստմանը՝ վերացրել էր բոլոր թերությունները: Լուծվել էր լոգարանի տաքացուցիչի հարցը: Վերացվել էին լուսավորության հետ կապված բոլոր խնդիրները: Քննչական սենյակը կահավորվել էր այնպես, որ օգտագործվեր նաև որպես տեսակցության սենյակ: Բուժսենյակը կահավորվել էր համապատասխան գույքով: Բայց երրորդ խցում կար միայն բարձի երես, որն էլ գտնվում էր կեղտոտ վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ բարվոք, մաքուր վիճակում: Խցերում առկա չէր սպիտակեղենը, միայն երրորդ խցում կար միայն բարձի երես, որը նորից գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Ա.-ն 08.09.2010 թ-ին ժամը 19⁴⁵-ին մուտք է գործել ՁՊՎ, բայց ՁՊՎ-ի <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էին գրառումները նրա շարժի վերաբերյալ, միայն <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում առկա էր գրառում նրան բուժօգնություն ցուցաբերելու մասին, որը նույնպես գրանցված չէր <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում: Երեք օր անց՝ 11.09.2010 թ-ին ժամը 13³⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Պ.-ն ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 09.09.2010 թ-ին, ժամը 18¹⁰-ին և 14.09.2010 թ-ին ժամը 11³⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: Այդ 5 օրերի ընթացքում Ա. Պ.-ի վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էին համապատասխան շարժի վերաբերյալ գրառումները և պարզ չէր նրա կալանավորման օրը և ժամը, այնինչ ՁՊՎ-ի պետը հայտնեց, որ քննիչը առանց դատարան տեղափոխելու բերում է կալանավորման որոշումը: Ավելացնենք նաև, որ վերը նշված ՁՊՎ-ի պետի խոսքերը հաստատվել են հենց իր իսկ ստորագրությամբ: /հիմքը՝ հավելված 4,16/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ նախկին այցելության ընթացքում արձանագրած լոգարանի ջրատաքացուցչի վերանորոգումից հետո, այժմ երկար ժամանակ է պահանջվում ջուրը տաքացնելու համար, իսկ ընդհանուր ՁՊՎ-ում պահպանվում էր կոկիկ և մաքուր վիճակը:

2010-ի Նոյեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Երրորդ խցի ջրի ծորակը չէր գործում: Ճաշասենյակում առկա էր համապատասխան քանակությամբ սպասք:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզվեց.

- ՁՊՎ-ում պահվող անձանցից 3-ին բուժօգնություն էր ցուցաբերվել, բայց <<ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էր համապատասխան շարժի գրառումները: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Մ.-ն, որպես հետախուզվող ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո՝ 21.10.2010 թ-ին ժամը 01⁰⁰-ին ընդունվել էր ՁՊՎ, առանց համապատասխան հիմքերի, որն էլ տվյալ դեպքում ձերբակալման արձանագրությունն է: /հիմքը՝ հավելված 10/
- Հ. Հ.-ն, որպես հետախուզվող ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո՝ 26.09.2010 թ-ին ժամը 05⁵⁰-ին ընդունվել էր ՁՊՎ, առանց համապատասխան հիմքերի, որն էլ տվյալ դեպքում ձերբակալման արձանագրությունն է: /հիմքը՝ հավելված 10/

Սույն թվականի Հունվար ամսից մինչ օրս Նաիրիի ՁՊՎ է ընդունվել 12 հետախուզվող, որոնցից ոչ մեկի նկատմամբ ձերբակալման արձանագրություն չեն կազմել և ՁՊՎ են ընդունել առանց համապատասխան փաստաթղթերի:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ սույն թվականի հոկտեմբերի 20-ին Դիտորդական խմբի անդամները ահազանգի հիման վրա այցելություն էին կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի ՁՊՎ և այնտեղ ուսումնասիրելով Ա. Ղ.-ի անձնական գործը նկատել են, որ արտաքին զննության արդյունքում արձանագրվել է, որ նա ՁՊՎ է ընդունվել հետևյալ մարմանական վնասվածքներով. մեջքի հատվածում կար 10 հատ տարբեր չափերի քերծվածքներ, երկու ոտքերին առկա էին 8 հատ քերծվածք և կապտուկ: Բայց վերոնշյալ մարմնական վնասվածքները գրանցված չէին <<ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախրիի ԶՊՎ-ում
սլաքիված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	2-ամիս	7-ամիս	10-ամիս	11-ամիս
Ձերբակալված	2	20	28	33
Կայանավոր	0	1	3	3
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	2	2	10	16
Բուժօգնություն	0	0	9	9
Մարմնական վնասվածք	0	2	3	4
Տեսակցություն	0	2	4	7
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	0	0	2	2
Հանձնուր	1	9	17	18
Զբոսանք	2	47	69	76
Փաստաբանի ծառայություններ	0	1	3	6

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախրիի ԶՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Հուլիս ամսին			Հոկտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	26.8%	+31°C	27.3 lux	38.7%	+26°C	31.5 lux	47.4%	+15°C	35.5 lux
2- խուց	26.8%	+31°C	26.3 lux	38.8%	+26°C	32.5 lux	47.3%	+15°C	35.3 lux
3- խուց	26.8%	+31°C	27 lux	39.1%	+26°C	31 lux	47.6%	+15°C	34.5 lux
Ճաշասենյակ	26.9%	+31°C	31 lux	40.2%	+26°C	27.5 lux	47.5%	+15°C	38.3 lux
Տես. սենյակ	27.2%	+31°C	21.5 lux	35.5%	+24°C	39.7 lux	46.6%	+16°C	30.8 lux
Քննչ. սենյակ	27.2%	+31°C	21.5 lux	35.5%	+24°C	41.2 lux	46.6%	+16°C	30.8 lux
Բուժսենյակ	26.9%	+31°C	23.5 lux	36.5%	+26°C	31 lux	48.5%	+16°C	30.8 lux

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրագրանի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Տեղեկացնենք, որ ՁՊՎ-ի խցերից մեկը գտնվում է ռեժիմային գոտուց դուրս: Այցելության ժամանակ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ընդհանուր ՁՊՎ-ն կահավորված էր ըստ պատշաճի: Առկա էր համապատասխան քանակությամբ դեղորայք և սպասք: Սանհանգույցը գտնվում էր ախտահանված, մաքուր վիճակում, բայց առկա էր տհաճ հոտ, որը պայմանավորված էր օդափոխության հետ:

Համեմատության արդյունքները

ՁՊՎ-ի վարչակազմը պատրաստակամություն հայտնեց, որ շատ սեղմ ժամկետում կվերացվեն բոլոր թերությունները:

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ սպիտակեղենը կրկին գտնվում էր կեղտոտ վիճակում, որն էլ Դիտորդական խմբի անդամների ներկայությամբ փոխվեց: Միայն կարելի է նշել, որ ՁՊՎ-ն ընդհանուր գտնվում էր լավ վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ բոլոր թերությունները վերացված են: Միայն չէր լուծվել ռեժիմային գոտուց դուրս գտնվող յոթերորդ խցի հարցը:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն գտնվում էր անթերի վիճակում:

2010-ի Նոյեմբեր

Տեղեկացնենք, որ ինչպես Հոկտեմբեր ամսին, այնպես էլ ներկայիս այցելության ժամանակ, ՁՊՎ-ն գտնվում էր անթերի վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզվեց, որ ինչպես մարզի բոլոր ՁՊՎ-ներում, այնպես էլ այստեղ՝ հետախուզվողին բերման ենթարկելուց

հետո, առանց որևէ հիմքի ընդունում են ՁՊՎ և պահում են: Նվաճ դեպքում պետք է հիմք հանդիսանա ձերբակալման արձանագրությունը: Ավելացնենք նաև, որ սույն թվականի հունվարի 1-ից մինչ օրս, նման ձևով՝ առանց հիմքի 21 հետախուզվող է ընդունվել և պահվել ՁՊՎ-ում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախկին յոթերորդ խուցը, որը գտնվում էր վարչական տարածքից դուրս, վերափոխվել է և ծառայում է որպես հերթապահ ոստիկանի հանգստի սենյակ:

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>2-ամիս</i>	<i>7-ամիս</i>	<i>10-ամիս</i>	<i>11-ամիս</i>
Ձերբակալված	1	15	30	42
Կալանավոր	52	179	264	312
<i>Այլ տեղեկություններ</i>				
Բուժզննություն	53	192	392	352
Բուժօգնություն	2	2	3	5
Մարմնական վնասվածք	0	6	10	14
Տեսակցություն	5	11	20	33
Հեռախոսազանգ	0	0	3	5
Լոգանք	13	25	37	49
Հանձնուր	10	51	85	112
Զբոսանք	71	215	357	544
Փաստաբանի ծառայություններ	0	2	6	8

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի ՁՊՎ-ի խոնավության(քի), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Հուլիս ամսին</i>			<i>Հոկտեմբեր ամսին</i>			<i>Նոյեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	27.3%	+31°C	44 lux	39.5%	+26°C	62 lux	42.7%	+18°C	53 lux
2- խուց	27.5%	+31°C	50 lux	39.5%	+26°C	60.5 lux	41.7%	+17°C	58 lux
3- խուց	27.5%	+31°C	62 lux	39.5%	+26°C	62.5 lux	43.2%	+18°C	62.3 lux
4- խուց	27.6%	+31°C	60 lux	39.5%	+26°C	64.7 lux	43.6%	+19°C	50.4 lux
5- խուց	27.4%	+31°C	44 lux	36.7%	+25°C	50 lux	43.1%	+19°C	41 lux
6- խուց	27.4%	+31°C	32 lux	35.5%	+25°C	37 lux	41.5%	+17°C	33 lux
7- խուց	27.5%	+31°C	80 lux	x	x	x	x	x	x
Ճաշասենյակ	27.1%	+31°C	39 lux	34.3%	+26°C	33.5 lux	41.5%	+17°C	32.1 lux
Տես. սենյակ	27.6%	+31°C	161 lux	36.4%	+27°C	112 lux	42.4%	+17°C	102 lux
Քննչ. սենյակ	27.3%	+31°C	54.3 lux	34.5%	+25°C	55 lux	42.1%	+17°C	51 lux
Բուժսենյակ	27.1%	+31°C	63 lux	34.5%	+26°C	58 lux	42.6%	+17°C	48 lux

Մոնիթորինգի արդյունքները Տավուշի մարզում

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ

2010-ի Մայիս

Այցելության ընթացքում պարզվեց, որ խցերը ապահովված էին անձնական հիգիենայի պարագաներով: ՁՊՎ-ում առկա էին բավարար քանակությամբ մաքուր սպիտակեղեն և սպասք: Ընդհանուր ՁՊՎ-ի բնական լուսավորությունը շատ վատ է շենքային դիրքի պատճառով: Քննչական սենյակը, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Սանհանգույցը ամբողջովին ախտահանված էր և գտնվում էր մաքուր վիճակում: Միայն ՁՊՎ-ում բացակայում էր սննդի պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնենք, որ ՁՊՎ-ն չունի տեսակցության սենյակ:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Ս. Կ.-ն, որպես հետախուզվող 18.03.2010 թ-ին բերման էր ենթարկվել ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի ոստիկանության բաժին և ձերբակալվել էր: Սակայն խափանման միջոցը վերահաստատելու նպատակով դատարան էր տեղափոխվել միայն 23.03.2010թ-ին: Վերը նշվածի վերաբերյալ Դիտորդական խմբի կողմից կազմվել է ընթացիկ հաշվետվություն և համապատասխանաբար ներկայացվել է ՀՀ ոստիկանապետին, որին կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ որ նախկինում արձանագրված վիճակը չէր փոխվել:

2010-ի Մեպտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ քննչական սենյակի էլեկտրական լուսավորությունը խափանված էր: Բուժսենյակը, որը համատեղված էր հերթապահ ոստիկանի սենյակի հետ, առանց բացատրության հնարավոր չէր պատկերացնել, որ ծառայում էր որպես բուժսենյակ /նկար 34/: Ընդհանուր դեղարկող ուսումնասիրելուց պարզվեց, որ ՁՊՎ-ում առկա էին ժամկետանց մի քանի դեղորայք: ՁՊՎ-ում բացակայում էր տեսակցության սենյակը: Սանհանգույցը և ճաշասենյակը գտնվում էին մաքուր վիճակում, բայց ճաշասենյակում առկա սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ թե՛ բնական, թե՛ էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր, բայց ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված, մաքուր վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերից մեկը կահավորված չէր և օգտագործման նպատակը անհասկանալի էր: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում /նկար 35/, իսկ բուժսենյակում առկա դեղորայքը շատ քիչ էր: Ճաշասենյակը, քննչական սենյակը և սանհանգույցը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Գ. Մ.-ն ՁՊՎ ընդունվել է 08.09.2010 թ-ի ժամը 12⁵⁰-ին, բայց արտաքին գննության է ենթարկվել ժամը 14⁵⁰-ին:
- ՁՊՎ-ի գրանցամատյանները լրացվում են անհասկանալի ձևով, օրինակ՝ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հշվառման>> գրանցամատյանում Մ. Խ.-ի գրառումների ժամանակ /ում կողմից է ձերբակալվել/ աղյուսակում նշված էր Տավուշի մարզի առաջին աստանի դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանի , 08.2010թ./ամսաթիվը գրված էր հետևյալ կերպ/ խափանման միջոց կալանքի միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ որոշում, իսկ <<ՁՊՎ ընդունելու հիմքը>> բաժնում նշված էր Դիլիջանի քննչական բաժանմունքի պետի ժ/պ Ս. Սադաթեյանի 31.08.2010թ-ի 7123-2-538 գրության պահանջով քննչական փորձաքննություն: Եվ նման ձևով առկա էին մի քանի գրառումներ կապված Գ. Մ.-ի և Ս.Պ.-ի վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ չէր լուծվել քննչական սենյակի էլեկտրական լուսավորության հարցը: Բուժսենյակը մնացել էր նույն անմխիթար վիճակում՝ հերթապահ ոստիկանի սենյակի հետ համատեղ, Չէր լուծվել տեսակցության սենյակի հարցը: Ոչ մի կերպ չի լուծվում սպիտակեղենի լվանալու հարցը և ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում է խոնավ վիճակում:

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	5-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	5	8	8
Կալանավոր	8	25	32
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	13	33	40
Բուժօգնություն	4	5	5
Մարմնական վնասվածք	0	1	1
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	4	4
Հանձնուր	1	3	3
Զբոսանք	19	56	62
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՁՊՎ-ի խոնավության(ρh), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Մայիս ամսին			Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	22.8%	+27.2°C	5.5 lux	25.6%	+28°C	4 lux	47.4%	+21°C	7.3 lux
2- խուց	22.5%	+27.5°C	6.75 lux	25.5%	+27°C	4.8 lux	46.7%	+21°C	6.3 lux
3- խուց	22.2%	+27.7°C	5.75 lux	25.3%	+26°C	4.5 lux	46.9%	+20°C	6.8 lux
4-խուց	22.2%	+28.3°C	8.75 lux	24.4%	+26°C	5.3 lux	46.4%	+20°C	7 lux
Ճաշասենյակ	26.1%	+25.6°C	0 lux	24.3%	+26°C	0 lux	47.8%	+21°C	0 lux
Տես. սենյակ	x	x	x	x	x	x	x	x	x
Քննչ. սենյակ	26.9%	+25.3°C	0 lux	24.3%	+21°C	0 lux	46.7%	+20°C	0 lux
Բուժսենյակ	29.3%	+24°C	0 lux	25.5%	+31°C	0 lux	47.4%	+20°C	0 lux

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ

2010-ի Մայիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ առկա էր համապատասխան քանակությամբ մաքուր սպիտակեղեն, միայն բացակայում էին սրբիչները: Սպասքը բավարար քանակությամբ էր, բայց գտնվում էր անմխիթար վիճակում /նկար 36/: Քննչական սենյակը և բուժսենյակը համատեղված էին և գտնվում էին լավ վիճակում և առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Ընդհանուր ՁՊՎ-ի լուսավորությունը շատ վատ էր: Առկա տեսակցության սենյակը օգտագործման ենթակա չէր, քանի որ իր չափսերով շատ փոքր էր, որի ընդհանուր մակերեսը կազմում է 2մ² և այնտեղ ՁՊՎ-ում պահվող անձի և նրա հարազատների հետ տեսակցությունը անհնարին է ապահովել: Սանհանգույցը գտնվում էր լավ վիճակում, իսկ ճաշասենյակը՝ անմխիթար:

Խախտումներ

Այցելության ընթացքում ուսումնասիրությունները ցույց տվեցին.

- Խցերում տեղակայված մահճակալները ամրացված չէին հատակին: /հիմքը՝ հավելված 18/
- Ջեռուցում չունենալով՝ արդեն հինգ տարի է, ինչ ՁՊՎ-ն գործում է ջեռուցման սեզոնին:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում ջեռուցման խնդիրը:

2010-ի Սեպտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում գտնվող սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: ՁՊՎ-ն կահավորված լինելով ութ անձի համար՝ առկա էր յոթ բաժակ, մեկ ափսե, յոթ գդալ, բոլորն էլ կեղտոտ վիճակում: Ավելացնենք նաև, որ որտեղ պահվում էր համապատասխան սպասքը, այդ դարակն էլ էր գտնվում շատ կեղտոտ վիճակում: Սանհանգույցը գտնվում էր կեղտոտ վիճակում և ուներ ախտահանման կարիք: Լոգարանում չէր գործում համապատասխան ջրատաքացուցիչը:

Խցերում չէր գործում համապատասխան ջրի ծորակը և ընդհանուր ՁՊՎ-ի ջրամատակարարումը գտնվում էր թերի վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզ դարձավ.

- <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում առկա էր վեց գրառում՝ ՁՊՎ-ում պահված անձանց ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ և որոնց վերաբերյալ համապատասխան՝ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում, իսկ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր երեք այլ անձանց բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ գրառում, որոնց վերաբերյալ էլ համապատասխան գրառումները բացակայում էին <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: /հիմքը՝ հավելված 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում ՁՊՎ-ի ջրամատակարարման և ջեռուցման հարցը և հերթական այցելության ընթացքում ՁՊՎ-ի վիճակը ավելի էր վատթարացել:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա սպիտա-կեղերը և սպասքը գտնվում էին կեղտոտ վիճակում, բայց ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը կարելի էր գնահատել բավարար:

Խախտումներ

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելուց պարզվեց.

- <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը լրացվում է թերի. մուտք գործած անձանց մուտքերի և ելքերի ժամերը չեն նշվում: /հիմքը՝ հավելված 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում սպիտակեղենի և սպասքի մաքուր պահելու հարցը և չի լուծվում ջեռուցման խնդիրը:

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին քնդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	5-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	5	6	6
Կալանավոր	12	24	30
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	2	12	18
Բուժօգնություն	6	15	23
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուր	0	0	0
Զրուսանք	20	40	46
Փաստաբանի ծառայություններ	0	0	1

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Մայիս ամսին			Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	30.9%	+27°C	23.3 lux	14%	+31°C	23.2 lux	54.7%	+22°C	21.3 lux
2- խուց	31.4%	+27°C	34.5 lux	15.3%	+31°C	36.5 lux	54.7%	+22°C	33.5 lux
3- խուց	32.1%	+27°C	15.8 lux	15.4%	+31°C	22.7 lux	54.9%	+22°C	22 lux
Ճաշասենյակ	37.6%	+24°C	0 lux	16.8%	+33°C	0 lux	55.3%	+23°C	0 lux
Տես. սենյակ	37%	+24°C	24.8 lux	17.7%	+34°C	24 lux	55.8%	+23°C	23.5 lux
Քննչ. սենյակ	37.2%	+25°C	30 lux	17.3%	+31°C	37.7 lux	55.9%	+23°C	36 lux
Բուժսենյակ	37.2%	+25°C	30 lux	17.3%	+31°C	37.7 lux	55.9%	+23°C	36 lux

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ

2010-ի Մայիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ առկա էր բավարար քանակությամբ մաքուր սպիտակեղեն, սպասք և դեղորայք: Խցերում բացակայում էին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կենցաղային իրերի դարակները: Իսկ ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը կարելի է համարել լավ: Սանհանգույցը ախտահանված էր:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում Դիտորդական խմբի անդամները համոզվեցին, որ նախկինում արձանագրված բարվոք վիճակը ավելի է լավացել:

2010-ի Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, բայց սրբիչները բացակայում էին: Առկա էր համապատասխան քանակությամբ դեղորայք: Պատշաճ կերպով կատարվում էր արտաքին զննությունը և համապատասխան գրառումները: ՁՊՎ-ն նախատեսված լինելով ինը անձի համար, այնտեղ առկա էր չորս բաժակ, երկու ափսե, մեկ գդալ՝ բոլորն էլ կեղտոտ վիճակում /նկար 37/: Չորրորդ և հինգերորդ խցերում ջրի ծորակները չէին գործում: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր վիճակում:

Խախտումներ

Այցելության ընթացքում փաստացի ՁՊՎ-ում գտնվող կալանավոր Ա. Հ.-ի հետ զրույցի ընթացքում և գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ, որ 03.09.2010թ-ին նրան բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոն ոստիկանության բաժին՝ Երևանի Նորքի հոգեբուժարանից, որովհետև նա գտնվում էր հետախուզման մեջ:

04.09.2010թ-ին ժամը 04⁰⁵-ին վերոնշված անձը տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ոստիկանության բաժին և հանձնվել է ՁՊՎ-ին թիվ 43/2 2970 գրության համաձայն: Նշված կալանավորը ուներ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որը ներկայացրել էր ՀՀ ոստիկանության աշխատակիցներին և հետո էլ Դիտորդական խմբի անդամներին, որ նա

առաջին կարգի հոգեկան հիվանդ է և ըստ ՀՀ Օրենսդրության նրան իրավունք չունենին ՁՊՎ ընդունելու և պահելու: հիմքը՝ հավելված 6/

Դիտորդական խմբի անդամները պնդեցին, որ վերոնշված կալանավորին կամ անհապաղ ազատ արձակեն, կամ տեղափոխեն համապատասխան հաստատություն:

Նշվածի վերաբերյալ վարչակազմը մեկնաբանեց, որ ազատ արձակել չեն կարող և տեղափոխումը միայն հնարավոր կլինի իրականացնել 06.09.2010թ-ին, քանի որ սույն թվականի սեպտեմբերի 4-ը և 5-ը՝ շաբաթ և կիրակի օրեր են և ուղեկցումը հնարավոր է կազմակերպել միայն երկուշաբթի օրը:

Ավելացնենք նաև, որ վերոնշված անձի առողջության և գանգատների վերաբերյալ ոչ մի գրառում կատարված չէր <<ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում: հիմքը՝ հավելված 4.6/

Ընդհանուր գրանցամատյանը ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Ն. Գ.-ն 04.03.2010թ-ին 20⁰⁰-ից մինչև 21²⁰-ը ՁՊՎ-ից տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով և նույն օրը ժամը 21²⁰-ից մինչև 21⁵⁰-ը, միաժամանակ ՁՊՎ-ից տեղափոխվել է Ռ. Ա.-ն՝ նույն քննիչի մոտ: Այսպիսով, երկու ձերբակալվածների հետ համատեղ է կատարվում քննչական գործողությունները՝ վարչական տարածքից դուրս: հիմքը՝ հավելված 3/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ նախկին անթերի վիճակում գտնվող ՁՊՎ-ում ներկայումս բազում թերություններ են ի հայտ եկել:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Խցերում բացակայում էին անձնական իրերի դարակները կամ համապատասխան խորշերը: ՁՊՎ-ում բուժսենյակը, տեսակցության և քննչական սենյակները համատեղված են մեկ սենյակում և ոչ մի կերպ չի լուծվում նրանց առանձնացնելու հարցը: Բայց ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր բարվոք վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ սպասքը համալրվել է անհրաժեշտ քանակությամբ: Ոչ մի կերպ չի լուծվում սպիտակեղենը մաքուր պահելու խնդիրը, վերանորոգվել էին նախկինում խափանված ջրի ծորակները և համապատասխան գրանցամատյաններում գրառումները կատարվում էին ըստ պատշաճի:

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին քնդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	5-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	11	12	16
Կալանավոր	106	192	211
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	116	203	226
Բուժօգնություն	3	4	4
Մարմնական վնասվածք	0	0	1
Տեսակցություն	15	22	22
Հեռախոսազանգ	4	4	4
Լոգանք	4	6	6
Հանձնուր	34	44	44
Զբոսանք	150	287	387
Փաստաբանի ծառայություններ	13	14	15

ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Մայիս ամսին			Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	30%	+29°C	18 lux	28.2%	+30°C	13 lux	55.8%	+22°C	22.8 lux
2- խուց	31%	+29°C	18.5 lux	28.2%	+30°C	13 lux	55.8%	+22°C	22.5 lux
3- խուց	31%	+28°C	25.8 lux	29.6%	+30°C	23.5 lux	55.7%	+22°C	23.3 lux
4-խուց	32.5%	+28°C	32 lux	29.7%	+30°C	27.7 lux	55.7%	+22°C	30 lux
5-խուց	32.8%	+28°C	33.5 lux	28.4%	+29°C	27 lux	55.7%	+22°C	26 lux
Ճաշասենյակ	34.4%	+27°C	0 lux	30%	+30°C	0 lux	55.9%	+22°C	0 lux
Տես. սենյակ	28.9%	+30°C	86.3 lux	31%	+33°C	74 lux	55.6%	+23°C	64 lux
Քննչ. սենյակ	28.9%	+30°C	86.3 lux	31%	+33°C	74 lux	55.1%	+23°C	64 lux
Բուժսենյակ	28.9%	+30°C	86.3 lux	31%	+33°C	74 lux	55.1%	+23°C	64 lux

Մոնիթորինգի արդյունքները Շիրակի մարզում

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախտորյանի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ տաս հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր 5 ափսե, 5 գդալ, 1 բաժակ և բոլորն էլ գտնվում էին կեղտոտ վիճակում: Պահեստային մասում առկա էր բավարար քանակությամբ մաքուր սպիտակեղեն: Դիտորդական խմբի միջնորդությամբ՝ նախկին 6-րդ խուցը վերափոխվել էր ճաշասենյակի, իսկ բուժսենյակը համատեղվել էր տեսակցության սենյակի հետ: ՁՊՎ-ն համալրված էր բավարար քանակությամբ դեղորայքով: Սանհանգույցում ախտահանման և օդափոխության կարիք էր զգացվում, իսկ ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը կարելի էր բավարար գնահատել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ 6-րդ խուցը վերափոխվել և օգտագործվում էր որպես ճաշասենյակ, իսկ բուժսենյակը համատեղվել էր տեսակցության սենյակի հետ:

2010-ի Սեպտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ սպասքը որոշակի չափով համալրվել էր և ներկայումս 10 հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում արդեն առկա էր 8 խոր ափսե, 5 սովորական ափսե, 5 գդալ և 4 բաժակ: Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում, որի տիպիկ հոտը տարածվում էր ամբողջ ՁՊՎ-ում: Բուժսենյակում դեղարկղի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ առկա էր ժամկետանց դեղորայք, իսկ 5-րդ խցի պատուհանի ապակին կոտրված էր:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- 8 տարբեր մարմնական վնասվածքներով ՁՊՎ մուտք գործած անձինք միաժամանակ նշել էին, որ մարմնական վնասվածքները ստացել են մինչև ոստիկանության բաժին բերման ենթարկվելը:
- Ա. Հ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 18.08.2010 թ-ի ժամը 11⁵⁵-ին, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի նրան խցից հանել և դատարան էին տեղափոխվել խափանման միջոց կիրառելու նպատակով՝ 21.08.2010 թ-ի ժամը 12⁵⁵-ին, որի արդյունքում ձերբակալվածին դատարան են տեղափոխել ձերբակալումից միայն 73 ժամ անց: /հիմքը՝ հավելված 11/
- Ա. Մ.-ն, որպես հետախուզվող ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել 23.06.2010 թ-ի ժամը 22⁴⁰-ին, որը ուղղվել և դարձվել է ժամը 11⁴⁰ և միաժամանակ նույն գրանցամատյանում առկա էր գրառում, որ նույն օրը նա տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Արթիկ>> ՔԿՀ, ՁՊՎ մուտք գործելուց 10 րոպե անց՝ այսինքն 23.06.2010 թ-ին ժամը 11⁵⁰, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր գրառում, առ այն, որ նա տեսակցություն է ունեցել կնոջ հետ՝ 23.06.2010 թ-ի ժամը 10⁰⁰-ից մինչև 11⁰⁰-ն, այնինչ այդ ժամանակ ինքը ՁՊՎ-ում չի գտնվել: /հիմքը՝ հավելված 4/
- Մ. Պ.-ն, ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի, ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 13.08.2010 թ-ի ժամը 23⁴⁵-ին և 16.08.2010 թ-ին ժամը 19²⁰-ին տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Գյումրու ոստիկանության բաժին: Միաժամանակ տեղեկացնենք, որ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա չէր ոչ մի գրառում՝ նրան խցից դուրս բերելու և տեղափոխելու վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ընդհանուր գրառումները գրանցամատյաններում կատարվում են թերի: Սպասքը համալրվել էր ոչ ամբողջությամբ, բայց Դիտորդական խմբի անդամների ներկայությամբ ՁՊՎ-ի վարչակազմը սպասքը համալրեց 10 - ական նոր գդալներով և պատահաբաղներով:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ այցելության ընթացքում երրորդ խցի էլեկտրական լուսավորությունը չէր գործում: Հինգերորդ խցի ջրի ծորակը խափանված էր: Չորրորդ խցի առաստաղը խոնավ էր և

կարելի է ասել, որ դա շատ երկար ժամանակ էր, որովհետև խոնավությունից արդեն սնկեր էին առաջացել /նկար 38/: Բուժսենյակում ևս չէր գործում ջրի ծորակը: Նախկին այցելության ընթացքում բուժսենյակի դեղարկում արձանագրած ժամկետանց դեղորայքը վերացված չէր: Լոգարանում համապատասխան ջրի ճնշման և մղիչ պոմպի բացակայության պատճառով հնարավոր չէր լոգանք ապահովել: Սպասքը ամբողջությամբ չէր համալրվել և օգտագործվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- <<ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում առկա բուժօգնություն ցուցաբերելու 5 գրառումներից միայն 2-ի վերաբերյալ էր կատարված համապատասխան գրառումները գրանցված <<ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Շ.-ն 11.10.2010 թ-ին ժամը 18⁰⁰-ին ՁՊՎ էր ընդունվել <<Աբովյան>> ՔԿՀ-ից՝ լուրջ մարմնական վնասվածքներով. պարանոցին, որովայնին, ձախ ուսազլիսին, ձախ ծնկի վերի շրջանում առկա էին կտրվածքներ: Վերոնշված փաստի կապակցությամբ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվությունով դիմել էր ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին, որին ավելի մանրամասն կարող էր ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:
- Հ. Հ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 28.09.2010 թ-ի ժամը 03⁰⁰-ին: Խափանման միջոց կիրառելու նպատակով 30.09.2010 թ-ին ժամը 12¹⁵-ին տեղափոխվել էր ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան, դրանից հետո համապատասխան գործողությունների վերաբերյալ բացակայում էին գրառումները: /հիմքը՝ հավելված 4/
- Ս. Ս.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 24.09.2010 թ-ին ժամը 23¹⁰-ին: 27.09.2010 թ-ին ժամը 14¹⁰-ին տեղափոխվել էր ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան, դրանից հետո համապատասխան գործողությունների վերաբերյալ բացակայում էին գրառումները: /հիմքը՝ հավելված 4/

Այցելության ընթացքում փաստացի հանդիպելով և զրուցելով ՁՊՎ-ում պահվող անձանց հետ պարզվեց.

- Ս. Ե.-ն տեղեկացրեց, որ 25.10.2010 թ-ին ցանկություն է հայտնել լոգանք ընդունելու, բայց ՁՊՎ-ի վարչակազմը մերժել է բացատրելով, որ ջրի ճնշումը բացակայում է և հնարավոր չէ լոգանք ընդունել:
- Ա. Ե.-ն տեղեկացրեց, որ ցանկացել է մագերը կտրել, որը մերժվել է ՁՊՎ-ի վարչակազմի կողմից: Ավելացնենք, որ նշված գործառույթը ՀՀ օրենսդրությամբ չի կանոնակարգվում:
- Յ. Հ.-ն տեղեկացրեց, որ իրեն չեն տրամադրել ոչ ձերբակալման և ոչ էլ խուզարկության արձանագրությունները: Յ. Հ.-ն միաժամանակ տեղեկացրեց, որ երկու օր իրեն պահել են ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Գյումրու 2-րդ ոստիկանության բաժնում և այնտեղ քննիչից խնդրել է, որ իրեն տրամադրեն հանրային պաշտպան: Քննիչը պարզաբանել է. <<Այդպիսի բան գոյություն չունի, կամ ինքդ պետք է քեզ պաշտպանես, կամ պետք է վարձես վճարովի փաստաբան>>: /հիմքը՝ հավելված15/

Յ. Հ.-ի անձնական գործի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ որպես հետախուզվող ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց հետո չէր կազմվել ձերբակալման արձանագրություն և առանց որևէ հիմքի տեղափոխվել էր ՁՊՎ: Այս ամենի հիման վրա ՁՊՎ-ի վարչակազմը Դիտորդական խմբին ներկայացրեց անձին ՁՊՎ ընդունելու հիմքը, որը կազմված էր սույն թվականի Հոկտեմբերի 13-ով, որն էլ ձերբակալման արձանագրություն չէր, այլ որոշում անձին ձերբակալելու մասին, որը ընդհանրապես կապ չուներ հետախուզում հայտարարելուց և բերման ենթարկվելուց հետո ձերբակալման հետ: Ավելացնենք, որ Յ. Հ.-ն բերման է ենթարկվել Գյումրու 2-րդ ոստիկանության բաժին՝ 25.10.2010 թ-ի ժամը 08³⁰-ին, բայց վերը նշված անձի ձերբակալման որոշման մեջ նշվում է. <<Պարզվել է 2010 թ-ի Հոկտեմբերի 25-ին ժամը 18⁰⁰-ի սահմաններում Յ. Հ.-ն գնացել է մոր՝ Մ. Հ.-ի բնակարան և ծեծի է ենթարկել վերջինիս>>: Բայց նշված փաստի ժամանակահատվածում Յ. Հ.-ն արդեն բերման է ենթարկված եղել Գյումրու ոստիկանության բաժին:

Նշվածի վերաբերյալ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվության տեսքով դիմել էր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, Քննչական գլխավոր վարչության պետ՝ Գ. Համբարձումյանին: Գրությանը կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ գրանցամատյաններում գրառումները կրկին կատարվում էին թերի: Չէր համալրվել սպասքը, իսկ նախկին այցելության ընթացքում արձանագրած ժամկետանց դեղորայքը չէր վերացվել:

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	7-ամիս	9-ամիս	10-ամիս	12-ամիս
Ձերբակալված	53	68	72	81
Կալանավոր	10	22	29	41
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	15	16	27	41
Բուժօգնություն	16	28	33	38
Մարմնական վնասվածք	3	8	13	20
Տեսակցություն	34	36	39	46
Հեռախոսազանգ	7	7	7	0
Լոգանք	9	12	12	13
Հանձնուր	50	69	73	89
Զբոսանք	102	147	162	181
Փաստաբանի ծառայություններ	11	21	22	23

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին			Դեկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	31 %	+28°C	20 lux	37%	+22°C	24 lux	43%	+19°C	18 lux	48%	+17°C	12 lux
2- խուց	31%	+28°C	19 lux	38%	+22°C	29lux	44%	+18°C	18 lux	49%	+17°C	13 lux
3- խուց	31%	+28°C	19 lux	38%	+22°C	25 lux	44%	+18°C	18 lux	49%	+16°C	17 lux
4-խուց	28%	+28°C	19 lux	38%	+23°C	25 lux	43%	+19°C	19 lux	50%	+16°C	24 lux
5-խուց	30%	+28°C	21 lux	38%	+23°C	23 lux	43%	+19°C	19 lux	50%	+16°C	12 lux
Ճաշասենյակ	x	x	x	x	x	x	43%	+18°C	20 lux	53%	+15°C	11 lux
Տես. սենյակ	31%	+28°C	37 lux	37%	+22°C	40 lux	43%	+20°C	38 lux	46%	+18°C	45 lux
Քննչ. սենյակ	31%	+28°C	0 lux	37%	+22°C	0 lux	43%	+20°C	0 lux	45%	+18°C	23 lux
Բուժսենյակ	x	x	x	x	x	x	43%	+20°C	38 lux	47%	+18°C	55Lux

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն համալրված էր համապատասխան քանակությամբ սպասքով և անձնական հիգիենայի պարագաներով: Խցերը կահավորված էին անձնական իրերի դարակներով և առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում: Քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին մաքուր վիճակում: Սանհանգույցում պահպանված էին հիգիենայի բոլոր կանոնները: Զբոսաբակը համալրվել էր մարզագույքով, տեղադրվել էր նստարան և ապահովված էր ծածկով:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախկինում Դիտորդական խմբի կողմից արված բոլոր դիտողությունները ընդունվել են և թերությունները վերացվել են:

2010-ի Մեյտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ դեղարկող ուսումնասիրելու ընթացքում արձանագրվեց ժամկետանց դեղորայք: Զուգարանում խափանված էր ջրամատակարարման համակարգը:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Գ. Ե.-ն, Ա. Ու.-ն և Ա. Ու.-ն ձերբակալվել և ՁՊՎ են ընդունվել 05.06.2010 թ-ին ժամը 07⁰⁰-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ 07.06.2010 թ-ին ժամը 17³⁰-ին բոլոր երեք ձերբակալվածներին էլ տեղափոխվել էին դատարան, խափանման միջոց կիրառելու նպատակով, և արդյունքում չպարզվեց, թե ինչ խափանման միջոց է կիրառվել: Որից հետո անհասկանալի պատճառներով նշված անձանց տեղափոխվել էին Ախուրյանի ՁՊՎ: Ավելացնենք նաև, որ

<<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էին նշված երեք անձանց շարժի վերաբերյալ գրառումները:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում և զուգարանում չէր գործում ջրմատակարարման համակարգը:

2010-ի Հոկտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր ախտահանված և մաքուր վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում արձանագրվեց, որ նախկին այցելության ընթացքում արձանագրված բոլոր թերությունները վերացված էին, և ՁՊՎ-ն գտնվում էր լավ վիճակում:

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ-ում սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>7-ամիս</i>	<i>9-ամիս</i>	<i>10-ամիս</i>	<i>12-ամիս</i>
Ձերբակալված	6	7	8	15
Կալանավոր	5	6	7	10
<i>Այլ տեղեկություններ</i>				
Բուժզննություն	4	5	7	14
Բուժօգնություն	1	1	1	1
Մարմնական վնասվածք	0	0	0	1
Տեսակցություն	0	1	1	1
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	4	5	6	7
Հանձնուր	1	3	4	6
Զրուսանք	13	17	19	34
Փաստաբանի ծառայություններ	1	1	3	3

**ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին			Դեկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	27%	+31°C	40 lux	31%	+23°C	29 lux	41%	+16°C	32 lux	44%	+19°C	20lux
2- խուց	27%	+31°C	24 lux	32%	+22°C	23 lux	40%	+16°C	20 lux	46%	+19°C	14lux
3- խուց	26%	+31°C	20 lux	32%	+22°C	23 lux	40%	+16°C	21 lux	43%	+19°C	14lux
4-խուց	26%	+31°C	32 lux	32%	+23°C	28 lux	40%	+15°C	31 lux	43%	+19°C	17lux
5-խուց	26%	+31°C	38 lux	32%	+23°C	35 lux	43%	+16°C	32 lux	43%	+19°C	16lux
Ճաշասենյակ	26%	+31°C	36 lux	33%	+22°C	40 lux	41%	+17°C	41 lux	45%	+18°C	17lux
Տես. սենյակ	26%	+31°C	0 lux	34%	+21°C	0 lux	41%	+16°C	0 lux	48%	+17°C	14lux
Քննչ. սենյակ	26%	+31°C	15 lux	34%	+22°C	15 lux	41%	+17°C	20 lux	47%	+18°C	16lux
Բուժսենյակ	26%	+31°C	0 lux	32%	+22°C	0 lux	41%	+17°C	0 lux	44%	+19°C	0Lux

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մարայիկի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ սպասք: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, բայց բացակայում էին սրբիչները: Քննչական սենյակը, բուժսենյակը, տեսակցության սենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակում առկա դեղորայքը շատ սակավ էր: Սանհանգույցը գտնվում էր մաքուր վիճակում, բայց ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր խոնավ վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ վերանորոգվել էր սանհանգույցը, առանձնացվել էր բուժսենյակը, իսկ առաջին խուցը խոնավության պատճառով չէր գործում:

2010-ի Սեպտեմբեր

Կրկին այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ խոնավ վիճակում, որի պատճառով ամեն տարի խոնավության հետևանքները վերացնելու նպատակով կատարվում է կոսմետիկ վերանորոգում: Չորրորդ խցի հատակը ամբողջությամբ փտած է և չի օգտագործվում: Հաստատում ենք, որ ընդհանուր վերանորոգման աշխատանքներ կատարվում են, բայց ընդհանուր ՁՊՎ-ն խոնավությունից քայքայվում է: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր և կահավորված վիճակում, միայն ճաշասենյակում բացակայում էր տաքացուցիչը:

Դիտորդական խումբը, ՁՊՎ-ի խոնավության բարձր աստիճանը հաշվի առնելով, ընթացիկ հաշվետվությունով դիմել է ՀՀ ոստիկանապետին՝ ՁՊՎ-ն փակելու վերաբերյալ: Ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Մ. Գ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 21.07.2010 թ-ի ժամը 12³⁰-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ 21.07.2010 թ-ի ժամը 15⁰⁰-ին տեղափոխվել է Արթիկի ՁՊՎ, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>>

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ն գործում էր և ընդհանուր վիճակը խոնավությունից ավելի էր վատթարացել: Մինչ այցելության օրը ՁՊՎ-ում պահվել են 4 ձերբակալված անձ: Ընդհանուր ՁՊՎ-ի ջերմաստիճանը այցելության պահին տատանվում էր +15 - +16°C: /հիմքը՝ հավելված 16/

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մարայիկի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>7-ամիս</i>	<i>9-ամիս</i>	<i>10-ամիս</i>
Ձերբակալված	4	4	4
Կալանավոր	0	0	0
<i>Այլ տեղեկություններ</i>			
Բուժզննություն	0	0	0
Բուժօգնություն	0	0	0
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուրք	0	0	0
Զբոսանք	6	6	6
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մարայիկի ՁՊՎ-ի խոնավության(ըհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Հուլիս ամսին</i>			<i>Սեպտեմբեր ամսին</i>			<i>Հոկտեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	28.2%	+30°C	22.3 lux	48.8%	+24°C	28.3 lux	62.2%	+16°C	25.3 lux
2- խուց	28.1%	+30°C	28.7 lux	48.8%	+24°C	32.3 lux	61.5%	+16°C	30.3 lux
3- խուց	27.9%	+30°C	26.7 lux	48.8%	+24°C	26.8 lux	62%	+16°C	26.8 lux
4-խուց	28.1%	+29°C	25.5 lux	x	x	x	x	x	x
Ճաշասենյակ	28%	+30°C	77.3 lux	49.4%	+24°C	85 lux	58%	+15°C	75 lux
Տես. սենյակ	28.6%	+29°C	38.5 lux	49.1%	+24°C	45 lux	56.2%	+15°C	42 lux
Քննչ. սենյակ	28.1%	+29°C	62.2 lux	48.8%	+24°C	55 lux	57%	+15°C	65 lux
Բուժսենյակ	28.3%	+29°C	26 lux	48.8%	+24°C	29.3 lux	62%	+15°C	29 lux

Մոնիթորինգի արդյունքները Վայոց Ձորի մարզում

ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ սպասք, իսկ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Խցերի բնական լուսավորությունը վատ էր: Բուժսենյակում բացակայում էր համապատասխան սավանը, դեղարկողում առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Քննչական սենյակը, տեսակ-ցության սենյակը, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ.

- Ս. Վ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 27.01.2010թ-ին: 30.01.2010թ-ին ժամը 11³⁰-ից մինչև 12⁵⁰ տեղափոխվել էր դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով, բայց դատավորը չէր ընդունել քննիչի կողմից ներկայացրած հիմնավորումները և անձին ազատ էր արձակել, որից հետո անհասկանալի պատճառներով անձին տեղափոխել են ՁՊՎ և պահել են մինչև ժամը 19⁰⁰:
- Փ. Բ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 04.02.2010թ-ին: 06.02.2010թ-ին ժամը 12⁰⁰-ից մինչև 13⁰⁰ տեղափոխվել էր դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով, բայց դատավորը չէր ընդունել քննիչի կողմից ներկայացրած հիմնավորումները և անձին ազատ էր արձակել, որից հետո նրան տեղափոխել են ՁՊՎ և պահել են մինչև 07.02.2010թ-ը:

Վերը նշված երկու դեպքերի վերաբերյալ Դիտորդական խմբի կողմից ՀՀ Ոստիկանա-պետին ներկայացվել են ընթացիկ հաշվետվություններ, որին ավելի մանրամասն կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

- Գ. Գ.-ն 07.02.2010թ-ին ազատ է արձակվել ՁՊՎ-ից՝ խափանման միջոց չկիրառվելու արդյունքում, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա էր դատարան տեղափոխելու վերաբերյալ գրառում, բայց ետ բերելու մասին չկար ոչ մի գրանցում: Փաստենք, որ Գ. Գ.-ն դատարան տեղափոխվելուց հետո հետ է ընդունվել ՁՊՎ, որովհետև <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կար գրառում նրան զուգարան տեղափոխելու վերաբերյալ:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ն վերանորոգվել էր: Առանձանցվել էր բուժսենյակը և համալրվել էր անհրաժեշտ քանակությամբ դեղորայքով: Համապատասխան գույքով համալրվել էր ճաշասենյակը, միայն չէր լուծվել մեզ շատ ծանոթ տարօրինակ ջրի ծորակի հարցը:

2010-ի Օգոստոս

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, բուժսենյակում բացակայում էր բժշկական սավանը, բայց ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը կարելի է գնահատել բավարար:

Համեմատության արդյունքները

Ինչպես նախորդ այցելության ժամանակ, այնպես էլ ներկայումս՝ բուժսենյակում բացակայում էր բժշկական սավանը, սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում, լուծվել էր միայն ջրի ծորակի հարցը:

2010-ի Հոկտեմբեր

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ բուժսենյակում բացակայում էր համապատասխան բժշկական սավանը: Ընդհանուր խցերում ներքին հարդարանքը գտնվում էր լավ վիճակում, բայց բացակայում էին կենցաղային իրերի դարակները: Տեսակցության սենյակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին: Առկա էր բավարար քանակությամբ մաքուր սպիտակեղեն և սպասք: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր բարվոք վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ միայն չի լուծվում բուժսենյակի սավանի հարցը, իսկ մնացած թերությունները վերացված էին:

ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ-ում սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	6-ամիս	8-ամիս	10-ամիս
Ձերբակալված	10	11	16
Կալանավոր	3	8	9
<i>Այլ տեղեկություններ</i>			
Բուժզննություն	0	0	4
Բուժօգնություն	1	1	2
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	0	0
Հեռախոսագանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուր	0	0	0
Զբոսանք	13	17	20
Փաստաբանի ծառայություններ	0	1	3

ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Վայքի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Օգոստոս ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	26.6%	+30°C	6.8 lux	44.1%	+19°C	7 lux
2- խուց	26.8%	+29°C	7.8 lux	43.3%	+20°C	8 lux
Ճաշասենյակ	26.7%	+30°C	111 lux	46%	+19°C	120 lux
Տես. սենյակ	26.8%	+29°C	0 lux	41.7%	+20°C	0 lux
Քննչ. սենյակ	26.6%	+29°C	154 lux	47.7%	+19°C	132 lux
Բուժսենյակ	26.9%	+30°C	0 lux	48%	+20°C	0 lux

ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ

2010-ի Հունիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ մաքուր վիճակում գտնվող սպիտակեղեն և սպասք: Խցերը կահավորված էին անհրաժեշտ կենցաղային իրերի դարակներով: Քննչական սենյակը, տեսակցության սենյակը, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակը համալրված էր համապատասխան բավարար քանակությամբ դեղորայքով: Սանհանգույցը ախտահանված և մաքուր վիճակում էր: Տրամադրվող սննդի պայմանագիրը ՁՊՎ-ում առկա չէր, և վարչակազմը խոստացավ, որ հաջորդ այցելության ընթացքում կպատճենահանեն և կտրամադրեն պայմա-նագիրը:

Խախտումներ

Այցելության ընթացքում ՁՊՎ-ում փաստացի պահվող կալանավորված անձանց հետ գրույցի ընթացքում պարզվեց, որ նրանց չեն տրամադրվել ո՛չ խուզարկության, ո՛չ ձերբա-կալման արձանագրությունները և ո՛չ էլ կալանավորման որոշումը:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ՁՊՎ-ն գտնվում է ավելի բարվոք վիճակում, քան նախկինում: Համապատասխան գրառումները և գրությունները կատարվում են ըստ պատշաճի, միայն չի լուծվել ջեռուցման խնդիրը, որը շատ կարևոր է:

2010-ի Օգոստոս

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, բայց ընդհանուր ՁՊՎ-ն բավարար վիճակում էր:

Խախտումներ

Ընդհանուր ուսումնասիրությունների արդյունքում ոչ մի խախտում չի հայտնաբերվել, և ավելին՝ Դիտորդական խմբին տրամադրվեց սննդի պայմանագրի պատճենը:

2010-ի Հոկտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ում առկա սպիտակեղենը գտնվում էր շատ կեղտոտ վիճակում, խցերի բնական լուսավորությունը շատ թույլ էր՝ պատուհանների փոքր լինելու պատճառով: Առաջին խցի ջրի ծորակը չէր գործում, իսկ բուժսենյակը համատեղված էր հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ, որտեղի սպիտակեղենը նույնպես գտնվում էր կեղտոտ վիճակում: Առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Սանհանգույցը գտնվում էր մաքուր և ախտահանված վիճակում: Ճաշասենյակում չէր գործում ջրի ծորակը:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- ՁՊՎ-ն նախատեսված լինելով 3 անձի համար՝ սույն թվականի սեպտեմբերի 27 -ին ՁՊՎ-ում պահվել էր 5 անձ, իսկ սեպտեմբերի 28-ին և 29-ին 4-ական անձ: Նշված փաստի կապակցությամբ Դիտորդական խմբի անդամները ընթացիկ հաշվետվության տեսքով դիմել են ՀՀ ոստիկանապետին: Ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:
- Է. Վ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 01.10.2010 թ-ի ժամը 22³⁰-ին և ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի, կալանավորվել էր 04.10.2010 թ-ի ժամը 17⁰⁵-ին, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 04.10.2010 թ-ի ժամը 16⁰⁰-ից մինչ 17³⁰-ը նա գտնվել է քննչական սենյակում՝ քննիչի հետ, որտեղ էլ կատարվել են քննչական գործողություններ: <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էր նրան դատարան տեղափոխելու վերաբերյալ գրառումները: Այսպիսով պարզ է դառնում, որ նշված անձի կալանավորումը կատարվել է առանց իր մասնակցության: /հիմքը՝ հավելված 4.16/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ոչ մի կերպ չի լուծվում օրենքով նախատեսված քննչական սենյակի դռան վրայի համապատասխան դիտանցքը տեղադրելու հարցը, որը միաժամանակ հանդիսանում է փաստաբանի հետ տեսակցելու սենյակ, որտեղից էլ հերթապահ ոստիկանը պետք է հետևի գործողություններին՝ առանց լսելու:

**ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ-ում
սլահված անձանց մասին բնդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	6-ամիս	8-ամիս	10-ամիս
Ձերբակալված	1	5	10
Կալանավոր	18	30	35
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	19	35	42
Բուժօգնություն	8	27	36
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	3	12	16
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	5	25	34
Հանձնուր	7	25	33
Զբոսանք	17	31	50
Փաստաբանի ծառայություններ	0	7	10

**ՀՀ Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Օգոստոս ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	20.5%	+33°C	15 lux	35.9%	+19°C	13.3 lux
2- խուց	20.8%	+33°C	14.8 lux	34.7%	+19°C	13 lux
3- խուց	21%	+33°C	14 lux	34.4%	+20°C	14.2 lux
Ճաշասենյակ	21.2%	+33°C	7.2 lux	33.8%	+19°C	7 lux
Տես. սենյակ	20.8%	+32°C	0 lux	38%	+17°C	0 lux
Քննչ. սենյակ	20.8%	+31°C	72 lux	38.6%	+17°C	65 lux
Բուժսենյակ	20.7%	+33°C	20 lux	37.2%	+18°C	22 lux

Մոնիթորինգի արդյունքները Արագածոտնի մարզում

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ՁՊՎ

2010-ի Մայիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր մաքուր վիճակում գտնվող բավարար քանակությամբ սպիտակեղեն և սպասք: Միաժամանակ տեղեկացնենք, որ խցերից մեկը գտնվում էր վարչական տարածքից դուրս, իսկ ընդհանուր ՁՊՎ-ի վիճակը կարելի է գնահատել բավարար:

Խախտումներ

Այցելության ընթացքում փաստացի հանդիպելով կալանավոր Վ. Հ.-ի հետ տեղեկացանք, որ նա տառապում էր տուբերկուլյոզ հիվանդությամբ, որը հաստատվեց նաև կալանավորի մոտ գտնվող, բժշկի կողմից տրված համապատասխան եզրակացություններով: ՀՀ Օրենսդրության պահանջները և այս ամենը հաշվի առնելով՝ Դիտորդական խմբի անդամները պահանջեցին ՁՊՎ-ի վարչակազմից, վերոնշյալ կալանավորին կամ ազատ արձակել, կամ տեղափոխել համապատասխան բուժհաստատություն: Ավելացնենք, որ Դիտորդական խմբի պահանջը չանտեսվեց, և վերոնշյալ անձը տեղափոխվեց Աբովյանի համապատասխան բուժհաստատություն: /հիմքը՝ հավելված 6/

Համեմատության արդյունքները

Ընդհանուր համեմատության արդյունքում ՁՊՎ-ն կարելի է ասել, որ ամբողջությամբ բարելավվել էր:

2010-ի Օգոստոս

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ում առկա սպիտակեղենը ամբողջությամբ կեղտոտ էր: Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում, բացակայում էր լոգանքի համար նախատեսված ցնցուղը և ջրամատակարարումը:

Ճաշասենյակում բացակայում էր համապատասխան տաքացուցիչը, և նախորդ անգամ նշված՝ ռեժիմային գոտուց դուրս գտնվող խուցը ներկայումս էլ գործում էր:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ նախկին այցելության ընթացքում արձանագրված՝ լավ վիճակում գտնվող ՁՊՎ-ում ընդհանուր վիճակը վատթարացել էր:

2010-ի Մեպտեմբեր

Տեղեկացնենք, որ ինը հոգու համար նախատեսված ՁՊՎ-ում առկա էր 6 բաժակ, 6 գդալ, 1 պատառաքաղ և 12 և 7-ական տարբեր ափսեներ: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում /նկար 39,40/: Հինգերորդ խցի ջրի ծորակը չէր գործում: Բուժսենյակը համատեղված էր ՁՊՎ-ի պետի սենյակի հետ և բարձի երեսը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ինչպես նախորդ անգամ, այնպես էլ ներկայիս այցելության ընթացքում արձանագրվեց, որ լոգարանում ջրատաքացուցիչի ցնցուղը պոկված էր և չէր վերանորոգվել:

Խախտումներ

ՁՊՎ-ի <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանի ուսումնասիրությունը ցույց տվեց.

- Ա. Պ.-ն տառապելով տուբերկուլյոզ հիվանդությամբ՝ ՔԿՀ-ից տեղափոխվել է ՁՊՎ դատական նիստին մասնակցելու համար և 3 օր պահվել է ՁՊՎ-ում: /հիմքը՝ հավելված 6/
- Վ. Հ.-ն՝ լինելով հոգեկան հիվանդ, պահվել էր ՁՊՎ-ում: /հիմքը՝ հավելված 6/
- Բ. Բ.-ն Աշտարակի ՁՊՎ էր ընդունվել Ապարանի ՁՊՎ-ից հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով, և արտաքին զննության արդյունքում արձանագրվել էին կապտուկներ, այն էլ այն դեպքում, երբ Ապարանի <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանը ուսումնասիրելու ժամանակ համապատասխան գրառումները բացակայում էին: /հիմքը՝ հավելված 4/

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզվեց.

- Հ. Հ.-ն, որպես հետախուզվող ՁՊՎ է ընդունվել 20.04.2010 թ-ի ժամը 20³⁵-ին: 23.04.2010 թ-ի ժամը 11⁰⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: Հետագայում անհայտ պատճառներով, որը ՁՊՎ-ի վարչակազմը չկարողացավ մեկնաբանել, 23.04.10 թ-ի ժամը 13³⁰-ին նորից հետ է վերադարձվել ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ից ՁՊՎ և պահվել է մինչև 27.04.2010 թ-ի ժամը 10⁰⁰-ն, որից հետո կրկին տեղափոխվել է ՔԿՀ: Ավելացնենք նաև, որ ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ 23.04.2010 թ-ից մինչև 27.04.2010 թ-ը նշված անձին ընդհանրապես խցից դուրս չեն բերել և նրան չեն տեղափոխել դատարան կամ էլ քննչական գործողության: Անհասկանալի է նրան ետ՝ ՁՊՎ վերադարձնելու և պահելու պատճառները: /հիմքը՝ հավելված 7/
- Հ. Մ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 01.04.2010 թ-ի ժամը 11⁴⁰-ին: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ տեղափոխվել էր դատարան խափանման միջոց կիրառելու նպատակով 02.04.2010 թ-ի ժամը 15⁰⁰-ից մինչև 15⁵⁵-ը: Արդյունքում պարզ չէր, խափանման միջոց կիրառվել էր թե ոչ: Եթե խափանման միջոց չէր կիրառվել, ապա ձերբակալվածին պարտավոր էին ազատ արձակել մինչև 04.04.2010 թ-ի ժամը 11⁴⁰, իսկ եթե կիրառվել էր, ապա ինչպես է հնարավոր 4 օր անց, 06.04.2010 թ-ին ժամը 16³⁰-ին ՀՀ Արագածոտնի մարզի քննչական բաժնի պետ՝ պրն. Երիցյանի որոշմամբ կալանավորին ազատ արձակել: /հիմքը՝ հավելված 7,11/
- Հ. Կ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 27.02.2010 թ-ին ժամը 16⁰⁰-ին: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ դատարան է տեղափոխվել խափանման միջոց կիրառելու նպատակով 02.03.2010 թ-ի ժամը 17²⁰-ին: Արդյունքում ձերբակալվածին 73 ժամ 20 րոպե հետո են դատարան տեղափոխել, այնինչ ձերբակալվածը 02.03.2010 թ-ին ժամը 16⁰⁰-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ոստիկանության բաժնի պետի որոշմամբ պետք է ազատ արձակված լիներ: /հիմքը՝ հավելված 11/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում կարելի է նշել, որ ոչ մի կերպ չի լուծվում ռեժիմային գոտուց դուրս գտնվող խուցը չշահագործելու հարցը: Չի լուծվում մաքուր սպիտակեղեն և սպասք ապահովելու խնդիրը /նկար 41/: Կարելի է ասել, որ ՁՊՎ-ի պայմանները գնալով վատթարանում են:

2010-ի Նոյեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի խցերի ջերմաստիճանը +16° C էր: Կրկին սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Առաջին և հինգերորդ խցերի ջրի ծորակները չէին գործում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում կարելի է նշել, որ սպիտակեղենը մաքուր պահելու հարցը արդեն մտահոգիչ է: Չէր վերանորոգվել հինգերորդ խցի ջրի ծորակը և ավելին՝ խափանվել էր առաջին խցի ջրի ծորակը ևս: Ընդհանուր սանհանգույցում օդափոխության կարիք էր զգացվում, իսկ զուգարանում՝ լուրջ ախտահանման:

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ՁՊՎ-ում սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

<i>2010թվականի տվյալները</i>	<i>5-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>9-ամիս</i>	<i>11-ամիս</i>
Ձերբակալված	14	16	21	27
Կալանավոր	89	170	214	249
<i>Այլ տեղեկություններ</i>				
Բուժզննություն	103	184	229	266
Բուժօգնություն	9	10	38	39
Մարմնական վնասվածք	0	3	5	5
Տեսակցություն	4	5	5	5
Հեռախոսազանգ	0	0	0	1
Լոգանք	0	0	0	0
Հանձնուր	27	41	50	53
Զբոսանք	306	403	500	593
Փաստաբանի ծառայություններ	9	10	10	13

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

<i>2010թվականի</i>	<i>Օգոստոս ամսին</i>			<i>Սեպտեմբեր ամսին</i>			<i>Նոյեմբեր ամսին</i>		
	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>	<i>Խոն.</i>	<i>Ջեր.</i>	<i>Լուս.</i>
1- խուց	23%	+30°C	17.7 lux	29.5%	+22°C	14.5 lux	38.3%	+16°C	13 lux
2- խուց	23%	+30°C	25.5 lux	29.4%	+22°C	13.3 lux	37.2%	+16°C	12.8 lux
3- խուց	22%	+28°C	14.2 lux	29.4%	+23°C	16 lux	41.4%	+17°C	13.5 lux
4-խուց	22%	+26°C	22 lux	29.4%	+23°C	19.8 lux	38.1%	+17°C	13.5 lux
5-խուց	22%	+26°C	24 lux	29.4%	+23°C	13.7 lux	37.6%	+17°C	11.5 lux
Ճաշասենյակ	22%	+26°C	0 lux	29.5%	+22°C	0 lux	38.4%	+17°C	0 lux
Տես. սենյակ	22%	+27°C	0 lux	29.6%	+22°C	0 lux	38.8%	+17°C	0 lux
Քննչ. սենյակ	22%	+30°C	285 lux	30%	+23°C	289 lux	39%	+17°C	201 lux
Բուժսենյակ	22%	+28°C	218 lux	29.6%	+23°C	221 lux	39.2%	+16°C	160 lux

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ

2010-ի Մայիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա էր սպիտակեղենը, բայց բացակայում էին սրբիչները: Ճաշասենյակը, քննչական և տեսակցության սենյակները գտնվում էին լավ վիճակում, իսկ սանհանգույցը ախտահանված, մաքուր վիճակում էր :

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ խոհանոցում բացակայում էր համապատասխան տաքացուցիչը: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր խոնավ և քայքայված վիճակում և ՁՊՎ-ի խցերի ջրի ծորակները խափանված էին:

2010-ի Օգոստոս

Տեղեկացնենք, որ հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ կրկին խցերի սրբիչները բացակայում էին: Ճաշասենյակը, քննչական սենյակը և բուժսենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակը համալրվել էր համապատասխան քանակությամբ դեղորայքով: Տեսակցության սենյակում տեղադրվել էր քարտաֆոն հեռախոս:

Խախտումներ

Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ, որ կալանավորն անձանց տեղափոխում են Աշտարակի ՁՊՎ՝ հետագա ուղեկցումը ՔԿՀ կազմակերպելու նպատակով և անձը, որը Ապարանի ՁՊՎ-ում որպես ձերբակալված պահվել էր երեք օր և որպես կալանավոր ևս 2-3 օր, տեղափոխվելով Աշտարակի ՁՊՎ, պահվում է այնտեղ ևս 2-3 օր, հետո կազմակերպվում է ուղեկցումը: Օրինակ՝

- Ս. Մ.-ն և Ա. Ո.-ն Ապարանի ՁՊՎ-ից տեղափոխվել են Աշտարակի ՁՊՎ 20.01.2010թ-ին, իսկ Աշտարակի ՁՊՎ-ից ուղեկցումը ՔԿՀ կատարվել է 22.01.2010թ-ին: Հիմքը՝ հավելված 7/

- Գ. Մ.-ն, Գ. Մ.-ն և Գ. Հ.-ն Ապարանի ՁՊՎ-ից տեղափոխվել են Աշտարակի ՁՊՎ 22.01.2010թ-ին, իսկ Աշտարակի ՁՊՎ-ից ուղեկցումը ՔԿՀ կատարվել է 25.01.2010թ-ին:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ում կատարվել են որոշակի բարելավումներ:

2010-ի Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի երրորդ խցի ջրի ծորակը չէր գործում, խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Բուժսենյակում էլ չէր գործում ջրի ծորակը: Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր մաքուր և ախտահանված վիճակում: Ավելացնենք նաև, որ ՁՊՎ-ի զբոսաբակի վերին ցանցային մասը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 3 մ բարձրության փոխարեն 2մ 20 սմ էր, իսկ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ խոնավ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Բ. Բ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 20.03.2010 թ-ի ժամը 22²⁰-ին, կալանավորվել էր 23.03.2010 թ-ի ժամը 17¹⁰-ին: 25.03.10 թ-ի ժամը 17³⁰-ին տեղափոխվել էր Աշտարակի ՁՊՎ՝ ուղեկցման նպատակով, բայց ըստ Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ ՁՊՎ է ընդունվել 25.03.2010 թ-ի ժամը 17⁰⁰-ին, որը ջնջվել և սարքվել է 19⁰⁰: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Վ.-ն ձերբնակալվել և ՁՊՎ էր ընդունվել 25.02.2010 թ-ի ժամը 11¹⁵-ին: 28.02.2010 թ-ի ժամը 10⁰⁵-ից մինչ 16¹⁰-ը տեղափոխվել է Աշտարակի ընդհանուր իրավասությունների դատարան՝ խափանման միջոց կիրառելու համար և խափանման միջոցը կալանք ընտրելուց հետո նորից հետ է տեղափոխվել Ապարանի ՁՊՎ: 01.03.2010 թ-ի ժամը 16²⁰-ին՝ հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով տեղափոխվել է Աշտարակի ՁՊՎ: Իսկ Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելուց պարզվեց, որ նշված ձերբակալվածը Աշտարակի

ՁՊՎ է ընդունվել 01.03.2010 թ-ի 13⁰⁰-ին: Այսինքն, 3 ժամ 20 րոպե շուտ էր հասել Աշտարակի ՁՊՎ, քան դուրս էր եկել Ապարանի ՁՊՎ-ից: /հիմքը՝ հավելված 4/

- Դ. Ս.-ն ձերբակալվել է ՁՊՎ էր ընդունվել 24.02.2010 թ-ի ժամը 20³⁰-ին: Կալանավորվել է 26.02.2010 թ-ի ժամը 17⁴⁵-ին: 01.03.2010 թ-ի ժամը 16²⁰-ին՝ հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով տեղափոխվել է Աշտարակի ՁՊՎ: Իսկ Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելուց պարզվեց, որ նշված ձերբակալվածը Աշտարակի ՁՊՎ է ընդունվել 01.03.2010 թ-ի 13⁰⁰-ին: Այսինքն, տվյալ դեպքում էլ անձը 3 ժամ 20 րոպե շուտ էր հասել Աշտարակի ՁՊՎ, քան դուրս էր եկել Ապարանի ՁՊՎ-ից: /հիմքը՝ հավելված 4/
- Ս. Մ.-ն ձերբակալվել է ՁՊՎ էր ընդունվել 17.01.2010 թ-ին ժամը 19²⁰-ին: 20.01.2010 թ-ին ժամը 11⁰⁵-ին հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով տեղափոխվել է Աշտարակի ՁՊՎ, իսկ Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելուց պարզ դարձավ, որ նշված ձերբակալվածը Աշտարակի ՁՊՎ էր ընդունվել 20.01.2010 թ-ի 21⁰⁰-ին: Այսինքն, անձը 10 ժամ ուշացումով էր հասել Աշտարակի ՁՊՎ: /հիմքը՝ հավելված 4/

Վերը նշված փաստերի կապակցությամբ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվությունով դիմել է ՀՀ ոստիկանապետին, որին ավելի մանրամասն կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում սրբիչների առկայության և մաքուր սպիտակեղենի տրամադրման խնդիրը:

2010-ի Նոյեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ինչպես միշտ բացակայում էին: Չէր գործում երկրորդ խցի ջրի ծորակը: Առկա սպասքից բացակայում էին գդալները և պատառաքաղները, իսկ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր միջին վիճակում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ նախորդ բոլոր թերությունները առկա էին և ոչ մի թերություն չի վերացվել:

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ-ում պահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն

2010թվականի տվյալները	5-ամիս	8-ամիս	9-ամիս	11-ամիս
Ձերբակալված	9	10	10	11
Կալանավոր	2	3	3	3
Այլ տեղեկություններ				
Բուժզննություն	11	11	11	12
Բուժօգնություն	0	1	1	1
Մարմնական վնասվածք	0	0	0	0
Տեսակցություն	0	0	0	0
Հեռախոսազանգ	1	2	2	2
Լոգանք	0	1	1	1
Հանձնուր	4	4	4	5
Զրուսանք	21	24	24	26
Փաստաբանի ծառայություններ	1	1	1	3

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Օգոստոս ամսին			Սեպտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	24%	+28°C	6.8 lux	37%	+18°C	7.3 lux	40.4%	+19°C	8.3 lux
2- խուց	25%	+27°C	12.5 lux	36.9%	+18°C	12.5 lux	40%	+19°C	4.8 lux
3- խուց	26%	+27°C	10.5 lux	37%	+18°C	8 lux	38.3%	+19°C	5 lux
4- խուց	26%	+26°C	14.3 lux	37.1%	+18°C	12.2 lux	37.8%	+20°C	5 lux
Ճաշասենյակ	27%	+26°C	8.5 lux	37.9%	+18°C	8.2 lux	37.2%	+21°C	4.3 lux
Տես. սենյակ	27%	+26°C	0 lux	37.5%	+18°C	0 lux	36.6%	+20°C	0 lux
Քննչ. սենյակ	26%	+27°C	0 lux	37.2%	+18°C	0 lux	37.5%	+19°C	0 lux
Բուժսենյակ	26%	+26°C	8 lux	37.2%	+18°C	9.5 lux	40.8%	+19°C	4.8 lux

ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ

2010-ի Փետրվար

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ սպասք, բայց գտնվում էր կեղտոտ վիճակում: Բուժսենյակը կահավորված չէր համապատասխան գույքով, և ընդհանուր հաշվով առկա էր չորս տեսակի դեղ: Քննչական և տեսակցության սենյակները գտնվում էին լավ վիճակում: Սանհանգույցը հակահիգիենիկ վիճակում էր:

ՁՊՎ-ի վարչակազմը պարտավորվեց, որ վերոնշյալ թերությունները շատ կարճ ժամանակում կվերացվեն:

2010-ի Օգոստոս

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Բուժսենյակը համալրվել էր համապատասխան գույքով և առկա էր բավարար քանակությամբ դեղորայք: Սանհանգույցը գտնվում էր անմխիթար վիճակում և ուներ օդափոխության խնդիր: Միաժամանակ ավելացնենք, որ լոգարանում չէր գործում ջրատաքացուցիչը: ՁՊՎ-ն համալրվել էր քարտաֆոն հեռախոսով: Քննչական, տեսակցության սենյակները և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Ա. Մ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 25.02.2010թ-ին ժամը 17²⁰-ին: 28.02.2010թ-ին ժամը 13⁰⁵-ից մինչև 17³⁰ տեղափոխվել է դատարան՝ խափանաման միջոց կիրառելու նպատակով: 01.03.2010թ-ին ժամը 16⁰⁰-ին քննիչի պահանջագրով տեղափոխվել էր Աշտարակի ՁՊՎ՝ հետագա ուղեկցումը ՔԿՀ կազմակերպելու նպատակով, բայց Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելու արդյունքում պարզ դարձավ, որ ուղեկցումը կազմակերպվել էր 04.03.2010թ-ին, որի արդյունքում էլ վերոնշյալ կալանավորը 4 օր պահվել էր ՁՊՎ-ում՝ կալանավորի կարգավիճակով: /հիմքը՝ հավելված 7/

Վերոնշյալ երևույթը Թալինի ՁՊՎ-ում սովորական երևույթ էր. բոլոր ձերբակալվածներին երեք օր որպես ձերբակալված և երեք օր որպես կալանավոր պահելուց հետո տեղափոխում են Աշտարակի ՁՊՎ՝ ուղեկցումը կազմակերպելու նպատակով, որտեղ էլ պահվում են ևս 1-3 օր:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի կերպ չի լուծվում մաքուր սպիտակեղեն ապահովելու խնդիրը: Բուժսենյակը կահավորվել և համալրվել էր համապատասխան քանակությամբ դեղորայքով: Ճաշասենյակում չէր գործում ջրի ծորակը և սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում: Ոչ մի կերպ չի լուծվում սանհանգույցի ախտահանման և օդափոխության հարցը:

2010-ի Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ի երրորդ խցի սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Խցերում բնական լուսավորությունը շատ վատ էր, որովհետև անվտանգության նպատակով նախատեսված և տեղադրված պաշտպանիչ ցանցերը շատ խիտ են և խոչընդոտում են բնական լույսի խուց ներթափանցմանը: Քննչական սենյակում բացակայում էր նախատեսված երրորդ աթոռը, բայց ընդհանուր քննչական սենյակը, բուժսենյակը, ճաշասենյակը և տեսակցության սենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակում առկա էր ժամկետանց դեղորայք: Լոգարանում չէր գործում համապատասխան ջրատաքացուցիչը, իսկ զուգարանը ուներ ախտահանման կարիք: ՁՊՎ-ն նախատեսված լինելով 6 անձի համար, առկա էր 6 բաժակ, 4-ական տարբեր ափսեներ, 4 պատառաքաղ և 4-ական տարբեր գդալներ:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Դիտորդական խմբի կողմից հաճախակի հեռախոսագանգի միջոցով կատարվում է հարցում, թե մինչ տվյալ օրը քանի ձերբակալված և կալանավորված անձինք են պահվել ՁՊՎ-ում և այդ ամենը հաշվի առնելով տեղեկացնենք, որ 01.09.2010 թ-ին Թալինի ՁՊՎ-ից տեղեկացրել են, որ մինչ վերը նշված օրը ՁՊՎ-ում պահվել են 9 անձ, բայց հերթական այցելության ընթացքում պարզվեց, որ 01.09.2010 թ-ի դրությամբ ՁՊՎ

մուտք գործած անձանց քանակը եղել է 10, ավելացնենք, որ 10-րդ ձեռքարկվածը ՁՊՎ է մուտք գործել 30.08.2010 թ-ի ժամը 16²⁵-ին: Այսպիսով անհասկանալի է 10-րդ անձի ՁՊՎ-ում պահելու հանգամանքները թաքցնելու և նման գործառույթի սկզբունքները: /հիմքը՝ հավելված 4/

- Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ Գ. Ս.-ն կալանավորվել էր դատարանի դահլիճից: Բայց, երբ ցանկացանք ուսումնասիրել կալանավորման ամիսն ու ամսաթիվը և հետագա գործողությունների շարժը, նկատեցինք, որ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասությունների դատարանի դատավոր Ս.Մնոյանի կայացրած վճռում նշված չէր վճռի և կալանավորման ո՛չ ամիսը, ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը:
- Հ. Պ.-ն ձեռքարկվել և ՁՊՎ էր ընդունվել 10.04.2010 թ-ի ժամը 23⁵⁵-ին: Կալանավորվել էր 13.04.2010 թ-ի ժամը 11⁴⁵-ին և 13.04.2010 թ-ի ժամը 20⁰⁵-ին տեղափոխվել էր Աշտարակի ՁՊՎ՝ հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով: Իսկ Աշտարակի ՁՊՎ-ում <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ նշված անձը ՁՊՎ է մուտք գործել 13.04.2010 թ-ի ժամը 19⁵⁰-ին, այսպիսով նշված կալանավորը 15 րոպե շուտ էր հասել Աշտարակի ՁՊՎ, քան դուրս էր եկել Թալինի ՁՊՎ-ից: /հիմքը՝ հավելված 4/
- Ա. Ա.-ն որպես հետախուզվող ձեռքարկվել է 16.06.2010 թ-ին ժամը 15⁰⁰-ին: 18.06.2010 թ-ին ժամը 13⁰⁰-ին խափանման միջոցը որպես կալանք վերահաստատելու համար տեղափոխվել է դատարան: 21.06.2010 թ-ին ժամը 09⁵⁵-ին տեղափոխվել է Աշտարակի ՁՊՎ՝ հետագա ուղեկցումը կազմակերպելու նպատակով: Իսկ Աշտարակի ՁՊՎ-ի <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ Ա. Ա.-ն ընդունվել է Աշտարակի ՁՊՎ 21.06.2010 թ-ին ժամը 10⁰⁰-ին: Այսինքն 5 րոպե անց, բայց Թալինից ՁՊՎ-ից Աշտարակի ՁՊՎ տեղափոխումը հնարավոր է կազմակերպել նվազագույնը 1 ժամվա ընթացքում: /հիմքը՝ հավելված 4/

Վերը նշված փաստերի կապակցությամբ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվությունով դիմել է ՀՀ ոստիկանապետին, որին ավելի մանրամասն կարող էք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:

- Գ. Հ.-ն ձեռքարկվել և ՁՊՎ էր ընդունվել 08.06.2010 թ-ին, բայց բացակայում էր նրա ընդունման ժամը, որի արդյունքում էլ հնարավոր չէ հետագա գործողությունները հաշվարկել և իմանալ, թե նշված անձի իրավունքները խախտվել են թե ոչ: /հիմքը՝ հավելված 4/

- Ն. Գ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 09.06.2010 թ-ին, որտեղ նշված չէր ընդունման ժամը, որի արդյունքում էլ հնարավոր չէ հետագա գործողությունները հաշվարկել և իմանալ, թե նշված անձի իրավունքները խախտվել են թե ոչ: /հիմքը՝ հավելված 4/
- Ռ. Ս.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 19.03.2010 թ-ի ժամը 08⁴⁰-ին: 21.03.2010 թ-ի ժամը 01¹⁵-ին հանկարծակի սրտի կաթվածի հետևանքով անհապաղ տեղափոխվել էր քաղաք Երևան՝ <<Արմենիա>> բժշկական կենտրոն: Վերը նշված անձի վերաբերյալ բացակայում էին հետագա գրառումները: Դիտորդական խմբի անդամների այն հարցին, թե նշված անձի նկատմամբ դատարանի կողմից խափանման միջոց կիրառվել է թե ոչ, ՁՊՎ-ի վարչակազմը պատասխանեց, որ խափանման միջոց չի կիրառվել և քննիչի կողմից չի կազմվել ոչ մի որոշում՝ անձին ազատ արձակելու վերաբերյալ: Նշված անձը մինչ օրս մնացել է ձերբակալվածի կարգավիճակում, բայց ըստ ՁՊՎ-ի վարչակազմի բանավոր խոսքի՝ նա գտնվում է ազատության մեջ: /հիմքը՝ հավելված 11/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ճաշասենյակում առկա սպասքը գտնվում էր մաքուր վիճակում: Բուժսենյակում առկա էր ժամկետանց դեղորայք: Սանհանգույցը կրկին օդափոխության կարիք ուներ: Ճաշասենյակում վերանորոգվել էր ջրի ծորակը:

2010-ի Նոյեմբեր

Կրկին այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում կատարվել էին ընդհանուր բարելավման աշխատանքներ և ՁՊՎ-ի վիճակը կարելի էր գնահատել բավարար:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Մ. Ի.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 30.10.2010թ-ին ժամը 23³⁰-ին, 02.11.2010 թ-ին ժամը 15³⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա չէր ոչ մի գրառում առ այն, թե նա երբ է տեղափոխվել դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: /հիմքը՝ հավելված 4/

- Կ. Ի.-ն ձեռքակալվել և ՁՊՎ էր ընդունվել 30.10.2010թ-ին ժամը 23³⁰-ին և 02.11.2010 թ-ին ժամը 15³⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: <<Ձեռքակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա չէր ոչ մի գրառում առ այն, թե նա երբ է տեղափոխվել դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: /հիմքը՝ հավելված 4/
- Վ. Հ.-ն ձեռքակալվել և ՁՊՎ էր ընդունվել 31.10.2010թ-ին ժամը 24⁰⁰-ին և 02.11.2010 թ-ին ժամը 15³⁰-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ: <<Ձեռքակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա չէր ոչ մի գրառում առ այն, թե նա երբ է տեղափոխվել դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով: /հիմքը՝ հավելված 4/

Արդյունքում կարելի է եզրակացնել, որ այս երեք անձանց առանց դատարան տեղափոխելու և կալանավորելու՝ ձեռքակալվածի կարգավիճակով տեղափոխել են ՔԿՀ:

**ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ-ում
սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

<i>2010թվականի տվյալները</i>	<i>2-ամիս</i>	<i>8-ամիս</i>	<i>9-ամիս</i>	<i>11-ամիս</i>
Ձեռքակալված	1	9	10	15
Կալանավոր	0	0	0	0
<i>Այլ տեղեկություններ</i>				
Բուժզննություն	0	6	6	10
Բուժօգնություն	0	0	4	4
Մարմնական վնասվածք	0	0	1	1
Տեսակցություն	0	0	0	0
Հեռախոսազանգ	0	0	0	0
Լոգանք	0	0	0	0
Հանձնուք	0	0	0	0
Զբոսանք	0	10	11	22
Փաստաբանի ծառայություններ	0	2	2	2

**ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի ՁՊՎ-ի
խոնավության(ρh), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Օգոստոս ամսին			Սեպտեմբեր ամսին			Նոյեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	27%	+31°C	3.8 lux	35.2%	+25°C	8.5 lux	55%	+15°C	3.5 lux
2- խուց	26%	+31°C	7.8 lux	35.2%	+25°C	9 lux	54.9%	+15°C	4.8 lux
3-խուց	26%	+31°C	7.5 lux	35.2%	+25°C	8.7 lux	54.2%	+15°C	5 lux
Ճաշասենյակ	25%	+32°C	13.3 lux	35.2%	+25°C	15 lux	53.6%	+15°C	10.2 lux
Տես. սենյակ	25%	+32°C	15.3 lux	36.1%	+28°C	17.5 lux	51.8%	+17°C	21 lux
Քննչ. սենյակ	24%	+32°C	34.8 lux	36.2%	+28°C	33 lux	51.1%	+17°C	40 lux
Բուժսենյակ	25%	+32°C	11 lux	35.4%	+28°C	9.2 lux	51%	+17°C	9.8 lux

Մոնիթորինգի արդյունքները Գեղարքունիքի մարզում

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր բավարար քանակությամբ սպասք և դեղորայք: Ընդհանուր խցերում առկա սպիտակեղենը ամբողջությամբ գտնվում էր կեղտոտ վիճակում, քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Ճաշասենյակում բացակայում էր սնունդը տաքացնելու համար նախատեսված տաքացուցիչը: Սանհանգույցում զգացվում էր ախտահանման և օդափոխության կարիք, իսկ ՁՊՎ-ում առկա մնացած սենյակների վիճակը կարելի է գնահատել բավարար: ՁՊՎ-ի խցերը համալրվել էին ռադիոընդունիչներով և տաքսաֆոն հեռախոսներով:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ՁՊՎ մուտք գործած անձանց արտաքին զննության գրառումները կատարվում են թերի:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ՁՊՎ-ն համալրվել էր ռադիոընդունիչներով, զբոսաբակը համալրվել էր մարմնամարզությանը զբաղվելու պարագաներով և տեղադրվել էր անհրաժեշտ ծածկ՝ պատսպարվելու համար: ՁՊՎ-ում տեղադրվել էր տաքսաֆոն հեռախոս:

2010-ի Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ կրկին սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Խցերում էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր, իսկ սանհանգույցը ինչպես միշտ գտնվում էր անմխիթար հակահիգիենիկ վիճակում: ՁՊՎ-ի մնացած պայմանները կարելի էր գնահատել բավարար:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ նախկին թերություններից ոչինչ չի վերացվել:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա էին սրբիչներ, բայց ամբողջությամբ գտնվում էին կեղտոտ վիճակում: Բուժսենյակի և չորրորդ խցի էլեկտրական լուսավորությունը խափանված էր: Ոչ մի կերպ չի լուծվում սանհանգույցի անմխիթար, հակահիգիենիկ վիճակի հարցը /նկար 42/, իսկ ՁՊՎ-ի համապատասխան սենյակները ինչպես միշտ գտնվում էին բարվոք վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Օ.-ն կալանավորման որոշման հիման վրա ընդունվել էր ՁՊՎ 15.10.2010 թ-ին ժամը 18²⁰-ին և 4 օր անց՝ 19.10.2010 թ-ը ժամը 9³⁰ տեղափոխվել էր ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 7/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, համալրվել էին սրբիչները, որոնք գտնվում էին կեղտոտ վիճակում, չէր վերացվել սանհանգույցի հակահիգիենիկ և անմխիթար վիճակը:

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ-ում
սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	7-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	5	6	7
Կալանավոր	85	135	153
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	90	141	160
Բուժօգնություն	8	7	7
Մարմանական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	7	7	7
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	2	2	2
Հանձնուք	53	79	84
Զբոսանք	187	309	353
Փաստաբանի ծառայություններ	7	9	10

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	26.8%	+32°C	68.5 lux	39.5%	+26°C	72 lux	48.6%	+18°C	81 lux
2- խուց	26.3%	+32°C	62.7 lux	38.9%	+26°C	72.5 lux	48.4%	+17°C	81.5 lux
3- խուց	26.6%	+32°C	72.7 lux	38.6%	+26°C	74.5 lux	48.5%	+18°C	83.7 lux
4-խուց	26.6%	+31°C	48.7 lux	38.5%	+26°C	40 lux	48.1%	+17°C	43.1 lux
Ճաշասենյակ	28%	+31°C	31.5 lux	39.2%	+26°C	29 lux	50.3%	+16°C	32 lux
Տես. սենյակ	27.1%	+31°C	0 lux	38.3%	+26°C	0 lux	49.1%	+16°C	0 lux
Քննչ. սենյակ	28.1%	+31°C	0 lux	38.8%	+26°C	0 lux	49%	+16°C	0 lux
Բուժսենյակ	27.2%	+31°C	53 lux	39.8%	+25°C	48 lux	49.3%	+17°C	61 lux

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիրտակեղերը գտնվում էր կեղտոտ վիճակում: Քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: Բուժսենյակը համալրվել էր համապատասխան քանակությամբ դեղորայքով, բայց բացակայում էր ջրի ծորակը: Խցերը համալրվել էին անձնական հիգիենայի պարագաներով, ռադիոընդունիչներով: ՁՊՎ-ի բնական լուսավորությունը շատ վատ էր, իսկ ՁՊՎ-ի մնացած խցերը և սանհանգույցը գտնվում էին մաքուր վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Խ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 11.02.2010 թ-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էր դատարան տեղափոխելու վերաբերյալ անհրաժեշտ գրառումը, սակայն գրանցամատյանում առկա էր գրառում՝ ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 4/
- Կ.Հ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 26.01.2010 թ-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում էր դատարան տեղափոխելու վերաբերյալ անհրաժեշտ գրառումը, սակայն գրանցամատյանում առկա էր գրառում՝ ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ: /հիմքը՝ հավելված 4/

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ՁՊՎ-ն համալրվել էր ռադիոընդունիչներով, զբոսաբակը համալրվել էր մարմնամարզությամբ զբաղվելու պարագաներով: Տեղադրվել էր տաքսաֆոն հեռախոս:

2010 Մեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր անթերի վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ռ. Հ.-ն ձերբակալվել և ՁՊՎ էր ընդունվել 26.08.2010 թ-ին, բայց 28.08.2010 թ-ին ժամը 13⁴⁰ ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի՝ քննիչի գրության համաձայն տեղափոխվել էր հոգեբուժական դիսպանսեր, իսկ ՁՊՎ-ի պետը պնդում էր, որ տեղափոխվել էր դատարան՝ կալանքի որոշում ստանալու համար:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ համալրվել էր սպասքը: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում:

2010-ի Հոկտեմբեր

Տեղեկացնենք, որ ընդհանուր ՁՊՎ-ն ինչպես միշտ, այնպես էլ ներկայիս այցելության ընթացքում գտնվում էր անթերի վիճակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելու ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ-ում
սլահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	7-ամիս	9-ամիս	10-ամիս
Զերբակալված	5	5	8
Կալանավոր	47	54	61
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	52	59	69
Բուժօգնություն	1	1	1
Մարմնական վնասվածք	0	1	1
Տեսակցություն	1	1	1
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	44	53	65
Հանձնուր	7	7	8
Զբոսանք	99	116	140
Փաստաբանի ծառայություններ	3	3	3

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	27.3%	+31°C	25.5 lux	39.6%	+25°C	37.3 lux	50.5%	+15°C	33 lux
2- խուց	27.2%	+31°C	25.5 lux	39.4%	+25°C	38 lux	50.3%	+15°C	34 lux
3- խուց	27.4%	+31°C	22.5 lux	39.4%	+22°C	27.3 lux	59.7%	+15°C	28.4 lux
Ճաշասենյակ	29%	+31°C	172 lux	39.1%	+24°C	190 lux	50%	+17°C	188 lux
Տես. սենյակ	28.8%	+31°C	74 lux	39.2%	+23°C	65.3 lux	59.7%	+17°C	82 lux
Քննչ. սենյակ	28%	+31°C	235 lux	39.3%	+23°C	192 lux	51.6%	+16°C	206 lux
Բուժսենյակ	29%	+31°C	0 lux	39.8%	+23°C	0 lux	59.3%	+17°C	0 lux

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ութ անձի համար նապատեսված ՁՊՎ-ում առկա էր 4 բաժակ, 38 ափսե և 8 գդալ, իսկ խցերում առկա սպիրտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, այն էլ այն դեպքում, երբ ՁՊՎ-ում առկա էին երկու կալանավորված անձինք: Քննչական, տեսակցության սենյակները, բուժսենյակը և ճաշասենյակը գտնվում էին լավ վիճակում: ՁՊՎ-ն համալրված էր բավարար քանակությամբ դեղորայքով: Սանհանգույցը գտնվում էր հիգիենիկ վիճակում:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ՁՊՎ մուտք գործած անձանց արտաքին զննության գրառումները <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվում են թերի:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզվեց, որ ճաշասենյակը համալրվել էր սնունդը տաքացնելու համար նախատեսված տաքացուցիչով, ՁՊՎ-ի խցերը համալրվել էր ռադիոընդունիչներով, զբոսաբակը համալրվել էր մարմնամարզությամբ զբաղվելու պարագաներով: Տեղադրվել էր տաքսաֆոն հեռախոս:

2010-ի Սեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիրտակեղենը կրկին գտնվում էր կեղտոտ վիճակում: Ինչպես նշվել էր, ՁՊՎ-ն նախատեսված է ութ հոգու պահման համար, իսկ այցելության ընթացքում արձանագրվեց, որ առկա է 4 հոգու համար նախատեսված սպասք: Ընդհանուր ՁՎՊ-ի վիճակը կարելի է գնահատել բավարար:

Խախտումներ

ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզ դարձավ.

- Ա. Ս.-ն 27.07.2010 թ-ի ժամը 22³⁰-ին քննիչի պահանջագրի հիման վրա խցից դուրս է բերվել և տեղափոխվել է քննչական գործողությունների, բայց ետ բերելու վերաբերյալ բացակայում էին համապատասխան բոլոր գրառումները: /հիմքը՝ հավելված 4/

Ավելացնենք նաև, որ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանը ուսումնասիրելու արդյունքում կարելի է հաճախակի հանդիպել ձերբակալված կամ կալանավորված անձանց խցերից դուրս բերելու ամիս-ամսաթվի կամ ժամի պատշաճ գրառումները, իսկ հետ ընդունելու գրառումները ընդհանրապես չեն կատարվում:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ոչ մի փոփոխություն չի կատարվել: Էլեկտրական լուսավորությունը գտնվում էր վատ վիճակում, խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սպասքը չէր համալրվել:

2010 Հոկտեմբեր

Կրկին անգամ այցելության ընթացքում արձանագրվեց, որ ընդհանուր ՁՊՎ-ի պայմանները գտնվում էին շատ լավ վիճակում: Այցելության ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ համալրվել էր սպասքը, խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, իսկ խցերի լուսավորությունը չէր փոխվել:

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ում
սլաիված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	7-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	14	17	19
Կալանավոր	70	99	110
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	46	77	89
Բուժօգնություն	13	20	20
Մարմնական վնասվածք	0	0	0
Տեսակցություն	0	4	4
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	3	13
Հանձնուր	34	51	60
Զբոսանք	38	54	60
Փաստաբանի ծառայություններ	0	0	0

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Հուլիս ամսին			Սեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	22.2%	+33°C	18 lux	40.1%	+23°C	19.5 lux	50.7%	+18°C	18.2 lux
2- խուց	22.7%	+33°C	11.5 lux	39.6%	+23°C	20 lux	50.8%	+18°C	14 lux
3- խուց	22.5%	+33°C	16.3 lux	39.3%	+21°C	20 lux	50.6%	+19°C	17.2 lux
4-խուց	22.7%	+33°C	12 lux	39.3%	+24°C	18 lux	51.8%	+20°C	15.6 lux
Ճաշասենյակ	20.7%	+33°C	0 lux	39.2%	+23°C	0 lux	59%	+18°C	0 lux
Տես. սենյակ	21%	+33°C	117 lux	39.2%	+24°C	104 lux	50.5%	+18°C	113 lux
Քննչ. սենյակ	21%	+33°C	117 lux	39.2%	+23°C	105 lux	50.5%	+17°C	112 lux
Բուժսենյակ	20.6%	+33°C	178 lux	38.8%	+25°C	160 lux	51.8%	+18°C	174 lux

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ

2010-ի Հուլիս

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ ՁՊՎ-ում առկա էր համապատասխան քանակությամբ սպասք և դեղորայք: Խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սրբիչները ընդհանրապես բացակայում էին: Ընդհանուր խցերի բնական և էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր, որին խոչընդոտ էր հանդիսանում անվտանգությունը ապահովելու նպատակով նախատեսված և առկա խցերի պատուհանների և զբոսաբակի համապատասխան, շատ փոքր տրամաչափեր ունեցող պաշտպանիչ ցանցերի առկայությունը և ապակիների շատ կեղտոտ լինելը: Երրորդ խցում ջրի ծորակը չէր գործում, իսկ ՁՊՎ-ում ընդհանրապես բացակայում էր ճաշասենյակը: ՁՊՎ-ի մնացած սենյակների վրձակը կարելի է բավարար համարել:

Խախտումներ

Ընդհանուր ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ քննչական սենյակը իր նպատակին չի ծառայում և ծառայում էր որպես պահեստային սենյակ:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ տեսակցության սենյակում տեղադրվել էր օրգանական ապակի, բացակայում էր աթոռը, տեղադրվել էր տաքսաֆոն հեռախոս, խցերը համալրվել էին ռադիոընդունիչներով:

2010-ի Սեպտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ խցերում առկա սպիտակեղենը և սրբիչները կրկին գտնվում էին կեղտոտ վիճակում: Սանհանգույցը ուներ ախտահանման կարիք:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքնում պարզ դարձավ, որ բարելավվել էր ՁՊՎ-ի ընդհանուր վիճակը: Համալրվել էին սրբիչները, բայց գտնվում էին կեղտոտ վիճակում: Նորոգվել էր երրորդ խցի ջրի ծորակը: Աշխատանքներ էին տարվում նախկինում վարչական կալանքի համար նախատեսված խուցը ճաշասենյակի փոխարինելու համար:

2010-ի Հոկտեմբեր

Կրկին այցելության ընթացքում արձանագրվեց, որ ինչպես միշտ՝ սպիտակեղենը գտնվում էր կոդտոտ վիճակում: Անվտանգությունը ապահովող՝ պատուհանների վրա ամրացված մանր ցանցերը խոչընդոտում էին բնական լույսի ներթափանցմանը: Խցերում էլեկտրական լուսավորությունը գտնվում էր շատ վատ վիճակում, ավելին՝ դիտանցքով խուցը ուսումնասիրելիս հնարավոր չէր խցի ներսում առկա շարժը արձանագրել: Խափանված էր նաև ՁՊՎ-ի միջանցքի էլեկտրական լուսավորությունը: Չէր լուծվել ճաշասենյակի հարցը, որի արդյունքում հնարավոր չէր կանոնակարգել սննդի տաքացումը, սպասքի լվացումը, իսկ սպասքը գտնվում էր հերթապահ ոստիկանի սենյակում:

Խախտումներ

Ընդհանուր ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելիս պարզվեց.

- Ա. Խ.-ն 07.10.2010 թ-ին ժամը 16¹⁰-ին տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով, իսկ հետ վերադարձի մասին բացակայում էին համապատասխան գրառումները <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում, բայց նույն անձը՝ ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի, 07.10.2010 թ-ին ժամը 17³⁰-ին ՁՊՎ-ից տեղափախվել էր ՔԿՀ: /հիմքը՝ հավելված 4/
- Վ. Գ.-ն 07.10.2010 թ-ին ըստ <<Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժ-զննության>> գրանցամատյանի, ստացել է բուժօգնություն հրավիրված բժշկի կողմից, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկար ոչ մի գրառում անձին խցից դուրս բերելու և բուժսենյակ տեղափոխելու մասին: Նշվածի

վերաբերյալ ՁՊՎ-ի վարչակազմը տվեց իր մեկնաբանությունը, որ բժիշկը բուժ-
օգնություն է ցուցաբերել հիվանդին խցում, որն էլ գտնվում է ռեժիմային գոտում, իսկ
դա ՀՀ օրենսդրության խախտում է:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ սպիտակեղենը և սրբիչները կրկին
գտնվում էին նույն կեղտոտ վիճակում: Սանհանգույցում չէր կատարվել ախտահանում և այն
գտնվում էր անմխիթար վիճակում:

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ-ում սլաքիված անձանց մասին քննիչանույր տեղեկություն

2010թվականի տվյալները	7-ամիս	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	5	11	13
Կալանավոր	53	65	76
Այլ տեղեկություններ			
Բուժզննություն	58	75	78
Բուժօգնություն	6	10	11
Մարմնական վնասվածք	0	3	3
Տեսակցություն	2	4	4
Հեռախոսազանգ	0	0	0
Լոգանք	0	0	0
Հանձնուր	62	80	86
Զբոսանք	63	84	88
Փաստաբանի ծառայություններ	2	4	4

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի ՁՊՎ-ի խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին

2010թվականի	Հուլիս ամսին			Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	27.5%	+31°C	28 lux	36.8%	+26°C	31.5 lux	45.2%	+18°C	32 lux
2- խուց	27.3%	+31°C	28 lux	36.8%	+27°C	30.8 lux	45.6%	+18°C	30.5 lux
3- խուց	27.5%	+31°C	33 lux	36.4%	+26°C	38.8 lux	45.4%	+17°C	34.3 lux
Ճաշասենյակ	x	x	x	x	x	x	x	x	x
Տես. սենյակ	28.7%	+30°C	65.5 lux	38%	+26°C	64.3 lux	46.9%	+16°C	69.7 lux
Քննչ. սենյակ	28.5%	+31°C	114 lux	37.1%	+27°C	152 lux	46.5%	+16°C	110 lux
Բուժսենյակ	28.2%	+30°C	33 lux	36.9%	+27°C	29.8 lux	48.8%	+17°C	28.3 lux

ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ

2010-ի Սեպտեմբեր

Տեղեկացնենք, որ նշված ՁՊՎ-ն վերաբացվել էր 2010թ-ի հուլիսի 30-ին: Այցելության ընթացքում արձանագրվեց, որ մինչ այցելության օրը ՁՊՎ-ն չի պահել ձերբակալված և կալանավորված անձանց, բայց խցերում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: Տեսակցության սենյակը համատեղված էր քննչական սենյակի հետ, բուժսենյակը՝ հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ: Սանհանգույցը գտնվում էր անմխիթար, կեղտոտ վիճակում /նկար 43,44/: Ընդհանուր ՁՊՎ-ի ուսումնասիրությունից հետո դժվար է պատկերացնել, որ ՁՊՎ-ն նոր է վերաբացվել:

2010-ի Հոկտեմբեր

Հերթական այցելության ընթացքում արձանագրվեց, որ բնական և էլեկտրական լուսավորությունը շատ վատ էր: Բուժսենյակը համատեղված էր հերթապահ ոստիկանի սենյակի հետ: Լոգարանում ջրի ճնշման և մղիչ պոմպի բացակայության պատճառով հնարավոր չէր լոգանք ապահովել: Ճաշասենյակը գտնվում էր անմխիթար վիճակում /նկար 45/, իսկ մինչ Հոկտեմբեր ամիսը ունենալով մեկ ձերբակալված անձ՝ համապատասխան մատյաններում գրառումները կատարված էին սխալ:

Համեմատության արդյունքները

Համեմատության արդյունքում արձանագրվեց, որ սպիտակեղենը գտնվում էր մաքուր վիճակում, իսկ սանհանգույցը նույն անմխիթար և կեղտոտ վիճակում էր, որն էլ Դիտորդական խմբի անդամների համար շատ զարմանալի էր:

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ում
սպահված անձանց մասին ընդհանուր տեղեկություն**

2010թվականի տվյալները	9-ամիս	10-ամիս
Ձերբակալված	0	1
Կալանավոր	0	0
Այլ տեղեկություններ		
Բուժզննություն	0	0
Բուժօգնություն	0	0
Մարմնական վնասվածք	0	0
Տեսակցություն	0	0
Հեռախոսազանգ	0	0
Լոգանք	0	0
Հանձնուր	0	0
Զբոսանք	0	1
Փաստաբանի ծառայություններ	0	0

**ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի ՁՊՎ-ի
խոնավության(քհ), ջերմաստիճանի(°C) և բնական լուսավորության(lux) մասին**

2010թվականի	Մեպտեմբեր ամսին			Հոկտեմբեր ամսին		
	Խոն.	Ջեր.	Լուս.	Խոն.	Ջեր.	Լուս.
1- խուց	37.5%	+27°C	33.7 lux	55.9%	+15°C	38.5 lux
2- խուց	38.2%	+26°C	27.3 lux	56.8%	+15°C	29.3 lux
Ճաշասենյակ	39.2%	+26°C	31.3 lux	55.2%	+15°C	41.7 lux
Տես. սենյակ	39.4%	+26°C	0 lux	58%	+17°C	0 lux
Քննչ. սենյակ	39.4%	+26°C	0 lux	58%	+16°C	0 lux
Բուժսենյակ	36.7%	+26°C	44.5 lux	58.4%	+17°C	43.5 lux

Առկա խնդիրները և թերությունները

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի 2010 թվականի աշխատանքները ուսումնասիրելով, կարելի է նկատել ՁՊՎ-ներում որոշ բարելավումներ՝ կատարված ընթացիկ աշխատանքների տեսքով: Արդյունքում ժամանակ առ ժամանակ կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, լուծվել են որոշ ՁՊՎ-ների ջեռուցման խնդիրները, հաճախակի նորացվում է սպասքը, սպիտակեղենը, դեղորայքը և ամենակարևորը, որ ՁՊՎ-ի վարչակազմը միշտ էլ պատրաստակամություն է հայտնում կարճ ժամանակահատվածում վերացնել այն թերությունները, որոնք ՁՊՎ-ի և տվյալ ոստիկանության բաժնի ուժերով հնարավոր է վերացնել: Բայց այսօրվա ՀՀ ոստիկանության համակարգում գործող բոլոր ՁՊՎ-ներն էլ ունեն լուրջ խնդիրներ և թերություններ, որոնց լուծման համար պահանջվում են իրավիճակի ճիշտ գնահատում, ցանկություն և ֆինանսական միջոցներ: Ներկայացնում ենք վերոհիշյալ խնդիրները և թերությունները:

- Ինչպես տեղեկացրել ենք, բացի ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ից, ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ-ից և ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Վանաձորի ՁՊՎ-ից, մնացած մարզային բոլոր ՁՊՎ-ները գործում են օրական մեկ հերթապահ ոստիկանի սկզբունքով և ունեն մեկական ՁՊՎ-ի պետեր, որի արդյունքում էլ ինքնաբերաբար խախտվում են ՁՊՎ-ում պահվող անձի իրավունքները: Օրինակ՝ մեկ հերթապահ ոստիկանը, ՁՊՎ-ում մի քանի անձանց պահման ընթացքում, ֆիզիկապես չի կարող ապահովել նրանց զբոսանքով, սննդի տրամադրմամբ, հանձնառվի ընդունմամբ, տեսակցության տրամադրմամբ, զուգարանով և լոգանքով:
- ՀՀ ոստիկանության գործող ՁՊՎ-ներից միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում է, որ գործում է բուժակ, իսկ մարզային մնացած բոլոր ՁՊՎ-ներում նշված հաստիքը բացակայում է և առաջնակարգ տրվող՝ առաջին բուժօգնությունը թողնվում է օրվա հերթապահ ոստիկանի վրա, հետո էլ շտապօգնության աշխատակազմի վրա /եթե առկա է շտապօգնություն՝ տվյալ քաղաքում կամ գյուղում/: Տվյալ դեպքում առաջին բուժօգնությունը թողնել օրվա հերթապահ ոստիկանի վրա, որը չունի տարրական բժշկական գիտելիքներ՝ անթույլատրելի է:

- ՀՀ ոստիկանության մարզային ՁՊՎ-ներում չունենալով բուժաշխատողներ՝ ունենում են ՀՀ ոստիկանության բուժվարչության կողմից հաստատված և տրամադրված դեղեր, որոնք ունեն խիստ մասնագիտական մոտեցման կարիք:
- ՀՀ ոստիկանության գործող 33 ՁՊՎ-ներից 15-ում բուժսենյակը ընդհանրապես բացակայում է, կամ համատեղված է այլ սենյակների հետ, որը այնքան էլ ընդունելի չէ, որովհետև խոսքը գնում է բուժսենյակի մասին:
- ՀՀ ոստիկանության ոչ մի գործող ՁՊՎ-ում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ախտահանման սենյակներ գոյություն չունեն և նշված սանիտարամշակման և ախտահանման գործողությունները չեն կատարվում:
- Շատ լուրջ է ՁՊՎ-ների մաքրման և ախտահանման հետ կապված խնդիրը, որը կրկին կանոնակարգված չէ: Ներկայիս վիճակում, ախտահանման և համապատասխան նյութերի օգտագործման հարցը կրկին թողնված է օրվա հերթապահ ոստիկանի վրա, որն էլ ըստ պատշաճի չի կատարվում՝ հասականալի պատճառներով:
- Շատ լուրջ խնդիր է հանդիսանում ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում համատարած կեղտոտ սպիտակեղենի առկայությունը, որի ընդհանուր տրամադրումը և լվացումը կանոնակարգված չէ:
 - ✓ Սպիտակեղենի տրամադրումը ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից կատարվում է կես տարվա կտրվածքով՝ տվյալ ՁՊՎ-ում առկա մահճակալների թվի կրկնակիի չափով: Տվյալ դեպքում հաշվի չի առնվում ՁՊՎ-ում պահվող անձանց քանակը, որովհետև առկա է ՁՊՎ, որտեղ նույն ժամանակահատվածում, նույն քանակի մահճակալներով կահավորված լինելու դեպքում պահվում են 3-ից 15 անձ, իսկ մեկ այլ ՁՊՎ-ում՝ 250-ից 300:
 - ✓ ՀՀ ոստիկանության գործող ՁՊՎ-ներից միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ն է, որ Հոկտեմբեր ամսին համալրվել է լվացքի մեքենայով, իսկ ՀՀ ոստիկանության մարզային բոլոր ՁՊՎ-ներում նշված հարցը լուծված չէ: Մարզերի ոչ բոլոր քաղաքներում են առկա լվացքատներ և ավելին՝ սպիտակեղենը լվանալու համար չեն տրամադրվում համապատասխան ֆինանսական միջոցներ, այն էլ այն դեպքում, երբ առկա են ՁՊՎ-ներ, որտեղ տարեկան պահվում են 600-ից 700 անձ և նրանց սպասարկման համար տրամադրվում է 32 լրակազմ սպիտակեղեն:

Նշված դեպքում խախտվում է ՁՊՎ-ում պահվող անձի իրավունքները, որը կանոնակարգված է ՀՀ օրենսդրությամբ: /հիմքը՝ հավելված 14/

- Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքները ցույց են տվել, որ շատ վատ վիճակում է գտնվում ՁՊՎ-ում լոգանքի ապահովման հարցը: Շատ քիչ ՁՊՎ-ներում կարելի է հանդիպել լոգարաններ, որտեղ տաք ջրի ապահովման և լոգանք ընդունելու համար ոչ մի խոչընդոտ չկա, իսկ մնացած ՁՊՎ-ներում լոգանքի ընդունման համար խոչընդոտ են հանդիսանում ջրատաքացուցիչի, ցնցուղի, ջրի ճնշման, համապատասխան բաքերի և մղիչ պոմպի բացակայությունը:
- Շատ ցավոտ վիճակում է գտնվում ՁՊՎ-ում պահվող անձի սննդի տրամադրման հարցը, որովհետև ոչ մի կերպ չի լուծվում ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նավագագույն չափաբաժնի տրամադրման հարցը: Բազմիցս Դիտորդական խումբը բարձրաձայնել է, որ նշված սննդակարգի ցանկի տրամադրման համար 450դր. բավարար չէ: Միաժամանակ ավելացնենք, որ ՀՀ մարզերում առկա են ՁՊՎ-ներ, որոնց գործունեության տարածքում բացակայում են համապատասխան սննդի օբյեկտները, որոնց հետ հնարավոր է համագործակցել: Միաժամանակ կարող ենք նշել, որ ՁՊՎ-ներում առկա ոչ բոլոր պայմանագրերն են ծառայում իրենց նպատակին:

Տեղեկացնենք, որ իհարկե ոչ բոլոր, բայց ՁՊՎ-ների մեծ մասում, սնունդը ՁՊՎ-ում պահվող անձին երեք անգամի փոխարեն տրամադրվում է մեկ անգամ :
- Բարձրիթողի վիճակում է գտնվում ՁՊՎ-ների սպասքի խնդիրը: ՁՊՎ-ներում սպասքը հաճախ գտնվում է կեղտոտ վիճակում, իսկ մեծամասամբ՝ սպասքի քանակը չի բավականացնում ՁՊՎ-ներում պահվող անձանց քանակին: Անհասկանալի է .
 - ✓ եթե ՁՊՎ-ում պահվող անձը օգտագործել է սպասքը, ինչու՞ այն չի լվացվել իր իսկ կողմից
 - ✓ համապատասխան քանակությամբ սպասք ստանալուց հետո ինչպես է, որ սպասքը անհետանում է՝ այն էլ այն դեպքում, որ սպասքը մետաղյա է և կոտրման ենթակա չէ, գողանալ հնարավոր չէ, որովհետև ՁՊՎ-ում պահվող անձանց ընդունելուց և տեղափոխելուց առաջ խուզարկում են :
- Տեղեկացնենք, որ ՀՀ ոստիկանության գործող ոչ մի ՁՊՎ-ում չկա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ համապատասխան հանձնույթների ընդունման սենյակ և փակցված չէ հանձնույթով փոխանցվող թույլատրելի սննդամթերքների ցանկը՝ քաղաքացուն հասանելի տեղ, որի արդյունքում ՁՊՎ-ում պահվող անձի հարազատը տեղեկացված չէ, թե ինչ ձևով, երբ և ինչ կարող է փոխանցել հանձնույթով: /հիմք՝ հավելված 21/

Ավելացնենք նաև, որ Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքները ցույց են տվել, որ ոչ միշտ է, որ հանձնությունները հասնում են հասցեատերերին, իսկ հասնելու դեպքում էլ չեն թողնվում նրանց մոտ, որի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը այլ բան է ասում: /հիմք՝ հավելված 22/

- ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում շատ մտահոգիչ է բարձր խոնավության աստիճանը, որը ոչ միայն վնաս է ՁՊՎ-ում 3-ից 6 օր պահվող անձի առողջությանը, այլ նաև ՁՊՎ-ում հերթապահություն իրականացնող ոստիկանի առողջությանը:
- ՀՀ ոստիկանության գործող որոշ ՁՊՎ-ներում չի ապահովվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված $+18^{\circ}\text{C}$ -ը՝ թե՛ ջեռուցում ունենալու և թե՛ չունենալու դեպքում, և դա այն պարագայում, երբ արձանագրվել է, որ այնտեղ պահվել են անձինք:
- Միանշանակ կարելի է նշել, որ ՀՀ-ում գործող ոչ մի ՁՊՎ-ում չի լուծվում անհրաժեշտ օդափոխության խնդիրը: Միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում է, որ խնդիրը որոշակի չափով կարելի է լուծված համարել՝ խցերի պատուհանների դեպի ներս բացվելու և խցում պահվող անձին հասանելի լինելու արդյունքում:
- Շատ կարևոր խնդիր է հանդիսանում ՁՊՎ-ների խցերի բնական լուսավորության հարցը, որը ներկայիս դրությամբ գտնվում է վատ վիճակում: Բնական լույսի ներթափանցումը խցեր խոչընդոտում են թե՛ շենքային դիրքը և թե՛ անվտանգության նորմերից ելնելով՝ նախատեսված տարբեր տրամաչափերի ցանցերի 2-4 շերտերի առկայությունը: Ինչպես նշել էինք, առկա 33 ՁՊՎ-ների 143 խցերից 27-ում միայն, կարելի է լուսավորությունը բավարար համարել:
- Շատ դեպքերում ՁՊՎ-ներում պահվող անձինք զրոսանքի դուրս չեն բերվում, որի արդյունքում էլ խախտվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում իրենց իրավունքներից օգտվելու սկզբունքը : /հիմք՝ հավելված 8/
- ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում տեսակցության կազմակերպման խնդիրները տարբեր են.
 - ✓ ՁՊՎ-ների տեսակցության սենյակների կեսը չեն համապատասխանում ներկայիս ՀՀ օրենսդրության պահանջներին /հիմք՝ հավելված 19/, իսկ մյուս կեսը ՀՀ օրենսդրությանը համապատասխանում են: ՀՀ օրենսդրության նշված կետը կիրառելու դեպքում՝ խնդիր է առաջանում ՁՊՎ-ում անվտանգություն ապահովելու առումով, որովհետև ՁՊՎ-ի տեսակցության սենյակների մուտքը հարազատների համար նախատեսված է ռեժիմային գոտիով, իսկ <<Ձերբակալված և կալանավորված անձանց մասին>> ՀՀ օրենքով հստակ սահմանվում է

ՁՊՎ մուտքի ու ելքի հատուկ թույլտվություն ունեցող անձանց ցանկը, որտեղ ՁՊՎ-ում պահվող անձի հարազատների մասին ոչինչ չի նշվում:

- ✓ ՁՊՎ-ներում տեսակցության կազմակերպումը կարելի է գնահատել վատ, որովհետև եթե ուսումնասիրենք մոնիթորինգային բաժնում ներկայացված աղյուսակային տվյալները կնկատենք, որ հանձնույթների ընդունումը 2-ից մինչև 35 անգամ գերազանցում է տեսակցությունների կազմակերպմանը: Ավելացնենք նաև, որ Դիտորդական խմբի անդամները ընդհանուր արձանագրած նյութերը ուսումնասիրելուց և վերլուծություն կատարելուց հետո եկել են մի եզրահանգման, այն է.
- ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմը, տեսակցությունները կազմակերպելու ժամանակ, շատ դեպքերում խուսափում է նշված ՀՀ օրենսդրության կետի թերի լինելու պատճառով, որի դեպքում էլ ՁՊՎ-ում պահվող անձանց հարազատները պետք է մուտք գործեն ՁՊՎ-ի վարչական տարածք, որտեղ ծառայություն է իրականացնում մեկ հերթապահ ոստիկան: Եկեք պատկերացնենք մի իրավիճակ, երբ տեսակցությունը կազմակերպելու նպատակով ՁՊՎ-ում պահվող անձը և նրան տեսակցության եկած վեց հարազատները նշված օրվա հերթապահ ոստիկանի հետ գտնվում են նույն սենյակում, այն էլ ՁՊՎ-ի վարչական տարածքում: Ավելացնենք նաև, որ նշված հերթապահ ոստիկանի պարտականություններից է համարվում տվյալ պահին ՁՊՎ-ում պահվող անձանց միաժամանակ ապահովել զբոսանքով, սննդի տրամադրմամբ, հանձնույթի ընդունմամբ, քննիչի կողմից անցկացվող՝ քննչական գործողություններին հետևելով, սանհանգույցով, լոգանքով և այլ ուրիշ իրավունքներից օգտվելու տրամադրմամբ:
- Շատ ժամանակ հարազատների տեսակցության ապահովմանը խոչընդոտում է իրենց իսկ իրավունքների չիմացությունը: Միաժամանակ ավելացնենք նաև, երբ Դիտարդական խմբի կողմից ՁՊՎ-ում պահվող անձը և նրա հարազատները տեղեկանում են, որ իրենք ՁՊՎ-ում տեսակցելու իրավունք ունեն՝ զարմանքով են ընդունում նշված փաստը:
- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում պահվող անձի հեռախոսագնացից օգտվելու իր իսկ իրավունքին, դա հենց սահմանափակվում է ՀՀ օրենսդրությամբ: /հիմքը՝ հավելված 2.3/ Այս ամենից ելնելով՝ եկեք պատկերացնենք մի իրավիճակ, երբ ՁՊՎ-ում պահվող անձի հարազատը բացակայում է հանրապետությունից կամ չունի համապատասխան

ֆինանսական միջոցներ՝ այցելելու նրան և ըստ օրենքի՝ համապատասխան դիմում ներկայացնի նրան տեսակցելու վերաբերյալ և դա մերժվի ՁՊՎ-ում պահվող անձի կողմից, նշանակում է նա հեռախոսազանգից օգտվելու իրավունք չունի:

- Շատ լուրջ խնդիր է հանդիսանում այն հանգամանքը, որ գրեթե բոլոր ՀՀ-ում գործող ՁՊՎ-ներում պահվել են կալանավորված անձինք, որոնք չեն ունեցել բավարար հիմքեր ՁՊՎ ընդունվելու և պահվելու համար: Խոսքը հատկապես վերաբերվում է այն կալանավորված անձանց, որոնց որպես ձերբակալված երեք օր ՁՊՎ-ում պահելուց հետո, վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ՝ դատարանի կողմից խափանման միջոց է ընտրվել կալանք և կրկին դատարանից տեղափոխվել են ՁՊՎ՝ առանց բավարար հիմքերի, որի վերաբերյալ համապատասխան ընթացիկ հաշվետվության տեսքով դիմվել է ՀՀ Արդարադատության նախարար Գ. Դանիելյանին՝ վերոնշյալ խնդիրը պարզաբանելու նպատակով: Ընթացիկ հաշվետվությանը և ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրված պատասխաններին կարող եք ծանոթանալ <<Ընթացիկ հաշվետվություններ>> բաժնում:
- Շատ լուրջ խնդիր է հանդիսանում քննիչների կողմից առանց հիմնավորման անկանոն քննչական գործողությունների կազմակերպումը և ՀՀ օրենսդրության որոշ կետերի անտեսումը: Քննիչների կողմից կատարվող խախտումները հետևյալն են.
 - ✓ Դիտորդական խմբի մոնիթորինգների արդյունքում շատ դեպքերում արձանագրվել է, որ քննիչների կողմից անձին ձերբակալելուց 5-55 ժամ հետո է կազմակերպվում տեղափոխումը ՁՊՎ:
 - ✓ Շատ լուրջ խնդիր է հանդիսանում ՁՊՎ-ի տարածքից դուրս քննչական գործողությունների կազմակերպումը, որն էլ տևում է մինչև 25 ժամ, որի արդյունքում էլ ՁՊՎ-ում պահվող անձը չի օգտվում ՀՀ օրենսդրությամբ նապատեսված իր որոշ իրավունքներից:
 - ✓ Դիտորդական խմբի արձանագրած փաստերից ոչ մեկի դեպքում էլ քննիչի կողմից հաշվի չի առնվել գիշերային ժամերին քննչական գործողություններ կատարելու դեպքում, տվյալ պահին քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտության կարևորությունը համապատասխան ներկայացվող հայտում նշելը: /հիմք՝ հավելված 3/
 - ✓ Որպես կանոն՝ բոլոր քննչական գործողությունները կատարվում են ՁՊՎ-ի տարածքից դուրս և չի հիմնավորվում դրա կարևորությունը: Նշված փաստերը ՀՀ օրենսդրությունը մեկնաբանում է այլ կերպ: /հիմք՝ հավելված 20/

- Դիտորդական խումբը ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելուց հետո եկել է մի եզրահանգման, որ Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի երկու և մարզային մնացած ՁՊՎ-ների մեկական քննչական սենյակներ ունենալու փաստը, որոնք որոշակի տեղերում համատեղված են այլ սենյակների հետ, խոչընդոտում է ՁՊՎ-ում քննչական գործողություններ կատարելու աշխատանքներին, որի պարագայում հնարավոր չէ ՁՊՎ-ում պահվող անձանց հետ միաժամանակ քննչական գործողություններ կատարել տարբեր քննչական սենյակներում:
- ՀՀ ոստիկանության կողմից մեծամասամբ չի իրականացվում հետախուզվողին հայտանաբերելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան գործառնությունների իրականացումը: Նշված դեպքում խոսքը վերաբերվում է հետախուզվողին հայտաբերելուց հետո համապատասխան ձերբակալման արձանագրություն կազմելու մասին, իսկ տվյալ դեպքում ձերբակալման հիմք է համարվում խափանման միջոցը որպես կալանք ընտրելու և հետախուզումը հայտարարելու՝ քննիչի կողմից համապատասխան որոշումը: /հիմք՝ հավելված 10/
- Դիտորդական խմբի ինչպես 2009թ-ի, այնպես էլ 2010թ-ի աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ շատ ցավոտ վիճակում է գտնվում ՁՊՎ-ում պահվող անձանց փաստաբանական ծառայությունից օգտվելու իրենց իրավունքների հարցը: Ձերբակալվածի փաստաբանական ծառայությունից չօգտվելու պատճառներ են հանդիսանում.
 - ✓ Ձերբակալվածների՝ իրենց իսկ իրավունքների չիմացությունը :
 - ✓ Քննիչների կողմից պարտադրումը, որ ձերբակալվածը հրաժարվի փաստաբանից :
 - ✓ Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների կողմից՝ իրենց իսկ պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, որը հաստատվում է կամ նրանց չներկայանալու սկզբունքով, կամ միայն քննիչի ուղեկցությամբ ներկայանալով :
- Միանշանակ կարող ենք պնդել, որ անուշադրության է մատնված ձերբակալված անձանց ձերբակալման և խուզարկության արձանագրությունների պատճենների և համապատասխան խափանման միջոց կիրառելու դեպքում, արդեն կալանավորվածին տրվող կալանքի որոշման պատճենների տրամադրումը, որի արդյունքում էլ սահմանափակվում են ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները:

- Ներկայիս գործող ՁՊՎ-ների վարչակազմը լիովին չի ընկալում ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք էլ չի կիրառում համապատասխանաբար: Շատ լուրջ թերություններ կան ՁՊՎ-ների գրանցամատյանների լրացման հարցում:

Առաջարկություններ խնդիրների և թերությունների վերաբերյալ

ՀՀ ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբը՝ կատարած աշխատանքների արդյունքում, ներկայացրած բոլոր խնդիրները և թերությունները վերացնելու համար ներկայացնում է լուծման իր տարբերակը, որը կարելի է բաժանել երկու փուլի :

Առաջնակարգ պետք է վերացնել այն խնդիրները և թերությունները, որոնք հրատապ են և իրատեսորեն այսօր հնարավոր է դա իրականացնել:

Երկրորդային են համարվում այն խնդիրները, որոնք լուրջ ֆինանսական և աշխատանքային ներդրումներ են պահանջում և որի արդյունքում կբարելավվեն ՁՊՎ-ների ընդհանուր պահման պայմանները, իսկ դրա արդյունքում էլ կնվազեն ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների խախտումները:

Առաջնային լուծելի խնդիրներ

- Անհապաղ պետք է լուծվի ՁՊՎ-ներում համապատասխան բուժակի հաստիքի հարցը կամ հերթապահություն կատարող բոլոր ոստիկանների հետ պետք է իրականացվեն վերապատրաստման աշխատանքներ՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու առումով, որից հետո միայն թույլատրել հերթապահություն կատարել ՁՊՎ-ներում :
- Անհապաղ պետք է վերանայվի ՀՀ ոստիկանության բուժվարչության կողմից հաստատված դեղորայքի ցանկը և դրա վերաբերյալ համապատասխան ցուցումներ տրվի ՁՊՎ-ի վարչակազմին, թե որ դեղը ինչի համար է նախատեսված և որ դեպքում պետք է տրամադրվի :
- Պետք է լուրջ ուշադրություն դարձվի բուժսենյակների առկայության և ախտահանման խնդրին, և առանձնացվեն այն 15 բուժսենյակները, որոնք մինչ օրս համատեղված են այլ սենյակների հետ :
- ՁՊՎ-ներում ախտահանման աշխատանքներ կատարելու և համապատասխան նյութերի օգտագործման համար պետք է անհապաղ պայմանագիր կնքել սանիտարահամաճարակային տեսչության հետ, որի ժամանակ էլ համապատասխան աշխատակիցները կայցելեն և կկատարեն բոլոր ախտահանման գործողությունները, որի արդյունքում էլ կարելի է ՁՊՎ-ներում հսկողություն սահմանել սանիտարական

վիճակի նկատմամբ, որն էլ թողնված է ՀՀ կառավարությանն առընթեր, ՀՀ ոստիկանության բժշկական հաստատության և պետական սանիտարահամաճարակային հսկողության մարմինների վրա :

- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ներում համատարած կեղտոտ սպիտակեղենի առկայությանը.
 - ✓ Պետք է ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից սպիտակեղենը տրամադրվի ոչ թե ըստ տվյալ ՁՊՎ-ի նախատեսված պահման տեղերի քանակի կրկնակիի չափով և 6 ամսյա կտրվածքով, այլ ՁՊՎ-ում պետք է սպիտակեղենը տրվի ըստ այնտեղ պահվող անձանց քանակի և պետք է հաշվի առնվի մաշվածությունը և չօգտագործվող սպիտակեղենի առկայությունը :
 - ✓ Շատ մեծ ուշադրություն պետք է դարձվի սպիտակեղենի լվացման վրա: Պետք է ըստ ՁՊՎ-ում պահվող անձանց քանակի՝ ՁՊՎ-ին տրամադրվի համապատասխան սպիտակեղենի լվացման ծախսերը, որը մինչ օրս կատարվում է տվյալ ՁՊՎ-ի աշխատակազմի կողմից :
- Անհապաղ պետք է միջոցներ ձեռնարկել և ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց լոգանք ընդունելու իրավունքը. այն ՁՊՎ-ներում, որտեղ բացակայում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ջրի բաքերը, մղիչ պոմպեր և ջրատաքացուցիչներ տեղադրել :
- Շատ ցավոտ խնդիր համարվող սննդի տրամադրման հարցը կարելի է լուծել միայն՝ <<ՀՀ կառավարության կողմից հաստատված ձերբակալվածին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժնի>> այսօրվան համարժեք գներով վերահաշվարկ կատարելուց հետո, որի արդյունքում էլ հաստատ համոզված ենք, որ ՁՊՎ-ում պահվող անձը մեկ անգամի փոխարեն կստանա երեքանգամյա սնունդ:
- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում առկա սպասքի թերի և կեղտոտ լինելու հանգամանքին, անհասկանալի է իրավիճակը, որովհետև ՁՊՎ-ները ստանում են համապատասխան քանակությամբ սպասք, որի ականատեսն են եղել Դիտորդական խմբի անդամները, և որը հաջորդ այցելության ընթացքում չգիտես ինչու պակասել է: Սպասքի լվանալու խնդիրը նույնպես կանոնակարգված է, որովհետև ՁՊՎ-ում պահվող անձը իր սնվելուց հետո պետք է լվանա սպասքը: Այս ամենը հաշվի առնելով՝ ակնկալում ենք ՀՀ ոստիկանության համապատասխան վարչակազմի հետևողականությունը, որպեսզի վերանան վերոնշված թերությունները :

- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում առկա օդափոխության խնդրին, ապա պետք է հիմք ընդունել Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի խցերի պատուհանների դեպի ներս բացվելու և ՁՊՎ-ում պահվող անձին հասանելի լինելու նախատիպային օրինակը /որի արդյունքում միջ օրս ոչ ոք իրեն չի վնասել/ : Գտնում ենք, որ պետք է ՀՀ ոստիկանության գործող մնացած բոլոր ՁՊՎ-ներում կիրառել արդյունավետ գործող Երևանի ՁՊՎ-ի խցերի պատուհանների օրինակը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա են ՁՊՎ-ներ, որտեղ ջեռուցման խնդիրը դեռ լուծված չէ, բայց ջեռուցման սեզոնին դեռ գործում են և չեն ապահովում $+18^{\circ}\text{C}$, պետք է ջեռուցման սեզոններին դադարեցվի նրանց գործունեությունը, մինչև կլուծվի համապատասխան ջեռուցման հարցը :
- Ինչ վերաբերվում է բնական լույսի խուց ներթափանցելու խնդրին, այն ՁՊՎ-ները, որոնց բնական լուսավորությունը շենքային պայմաններից չէ որ վատ է, այլ անվտանգության նորմերից ելնելով՝ նախատեսված տարբեր տրամաչափերի ցանցերի առկայության պատճառով, առաջարկում ենք, որ տեղում ՁՊՎ-ի վարչակազմը ուսումնասիրի նշված պաշտպանիչ ցանցերի տրամաչափերը և օդափոխության նպատակով պատուհանների հարցի լուծման ժամանակ լուծվի նաև նշված ցանցերը փոփոխելու խնդիրը :
- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում պահվող անձի զբոսանքի կազմակերպմանը, որը ոչ միշտ է ըստ պատշաճի իրականացվում, ապա դա ՁՊՎ-ների վարչակազմի աշխատանքի թերացում է, որի վերացման համար էլ ակնկալում ենք ՀՀ ոստիկանության համապատասխան վերադաս մարմինների կողմից խիստ պատժի կիրառումը :
- ՁՊՎ-ում տեսակցությունը կազմակերպելու համար առաջին լուծման հարցը ՁՊՎ-ի համապատասխան հերթապահ ոստիկանի հաստիքի համալրումն է :
- Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ում պահվող անձանց հեռախոսազանգից օգտվելու իրավունքին, ապա դրա համար պետք է 05 հունիսի 2008 թ-ի N574-Ն ՀՀ կառավարության որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և առանձնացնել հեռախոսազանգի իրավունքը՝ տեսակցության իրավունքից :
- Ինչ վերաբերվում է քննիչների կողմից ՁՊՎ-ի տարածքից դուրս կատարվող անկանոն քննչական գործողություններին, ապա պետք է ՁՊՎ-ի վարչակազմը շատ մեծ ուշադրություն դարձնի քննիչի կողմից ներկայացրած պահանջագրի բոլոր կետերի զրառումներին, և առանց պահանջագրի չկազմակերպվի ոչ մի քննչական

գործողություն, իսկ անկանոն քննչական գործողությունների պատճառը անպատժելիությունն է, որին որ պետք է շատ մեծ ուշադրություն դարձվի :

Երկրորդային լուծելի խնդիրներ.

Մոնիթորինգների արդյունքում արձանագրվել են բազում խախտումներ և թերություններ, որոնք առաջանում են ոչ թե ՁՊՎ-ի վարչակազմի կամ այլ անձանց անփութ աշխատանքի պատճառով, այլ <<ձերբակալված և կալանավորված անձանց մասին>> ՀՀ օրենքում և ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի մեջ ամրագրված որոշ կետերի կիրառման անհնարինության հետևանքով: Նշված հաշվետվության մեջ ամրագրված որոշ թերություններ և խնդիրներ՝ Դիտորդական խմբի կարծիքով անհանրին է ներկայումս վերացնել, որովհետև ՀՀ-ում գործող ՁՊՎ-ների շենքային պայմանների մեծամասնությունը ժառանգություն են մնացել Խորհրդային ժամանակաշրջանից, որի ընթացքում ՁՊՎ-ները այսօրվա պահանջները բավարարող պայմաններով ապահովված չեն եղել, իսկ ներկայումս՝ ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները նշված ՁՊՎ-ներում անհանրին է ապահովել: Այս ամենից ելնելով՝ ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբը առաջարկում է.

Կառուցել նոր, համապատասխան պայմաններին բավարարող մարզային մեկական ՁՊՎ՝ Արարատի, Վայոց Ձորի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում, երկուական ՁՊՎ-ներ՝ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում և ամենակարևորը՝ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներից առանձին և անկախ, որի արդյունքում կունենանք ՀՀ օրենսդրության պահանջներից բխող ՁՊՎ-ներ և որի արդյունքում էլ կվերացվեն հետևյալ խնդիրները և թերությունները :

- Կլուծվի հանձնույթների սենյակի հարցը և կկանոնակարգվեն հանձնույթների ընդունման և հանձնման ընդհանուր աշխատանքները :
- Կլուծվի տեսակցության սենյակների հարցը և կկանոնակարգվեն տեսակցությունը կազմակերպելու անվտանգության բոլոր նորմերը :
- Կլուծվի համապատասխանաբար մի ՁՊՎ-ում մի քանի քննչական սենյակների առկայության հարցը և կկանոնակարգվի քննչական գործողությունների բնականոն աշխատանքը :
- Խցերը կապահովվեն համապատասխան նյութակենցաղային պայմաններով :

- Չենք ունենա խոնավ ՁՊՎ-ներ :
- Շենքային դիրքը հաշվի առնելով՝ կլուծվի բնական լուսավորության խնդիրը :
- Մարզի մի քանի ՁՊՎ-ներ փակվելու և ընդհանուր վերաբացվելու արդյունքում մնացած բոլոր ՁՊՎ-ների աշխատակազմը կտեղակայվի մեկ տեղում և օրական հերթապահությունը կկատարվի ոչ թե մեկ, այլ 2-3 ոստիկանների կողմից :
- Մեկ հաստիք համալրելով՝ ՁՊՎ-ները կունենան համապատասխան բուժաշխատող :
- Եվ ևս մեկ հաստիք համալրելու դեպքում ՁՊՎ-ն կունենա աշխատակից, ով տեղում կգրադվի ՁՊՎ-ի մաքրման, սպիտակեղենի լվացման և սննդի տեղում պատրաստման աշխատանքներով :
- Կապահովվի համապատասխան պայմաններ՝ ՁՊՎ-ում պահվող անչափահասների և կանանց համար :
- Կլուծվի սանիտարամշակաման սենյակի հարցը, որտեղ էլ ըստ պատշաճի կկատարվեն ՀՀ օրենսդրության պահանջները :
- Կլուծվի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող՝ կալանավորվածների պահման պայմանների հարցը :
- Կբարելավվեն հերթապահություն իրականացնող ոստիկանների աշխատանքային պայմանները :

Եվ այսպես կարելի է շատ երկար թվարկել այն առաջարկների ցանկը, որոնցով կլրացվեն ՀՀ օրենսդրության պահանջները :

Դիտորդական խմբի ձեռքբերումները

ՀՀ ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խումբը ավելի ծավալուն և նպաստավոր աշխատանք է իրականացրել վերջին մեկ տարում՝ 2010 թ-ին, քան 2006-ից մինչև 2010թ-ը:

2010 թ-ի ձեռքբերում կարելի է համարել.

- Դիտորդական խմբի կողմից կազմված հայտարարությունը՝ ՀՀ ոստիկանության մարզային ոստիկանության բաժինների հերթապահ մասերում, քաղաքացուն հասանելի տեղ փակցնելու պարտադիր պայմանը :

Ավելացնենք նաև, որ հայտարարությունում ներկայացված է Դիտորդական խմբի գործունեության, ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների և Դիտորդական խմբի թեժ հեռախոսագծի մասին:

- Դիտորդական խմբի կողմից հրատարակված և վերահրատարակված գրքույկների պարտադիր առկայությունը բոլոր գործող ՁՊՎ-ների խցերում:

Ավելացնենք նաև, որ գրքույկում ներկայացված է ձեռքակալված անձանց իրավունքների մասին:

- ՁՊՎ մուտք գործած ցանկացած անձի արտաքին զննության և բուժզննության կատարումը, և համապատասխան <<ձեռքակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում գրառումներ կատարելը:
- Որոշ ՁՊՎ-ների մասնակի վերանորոգման աշխատանքները:
- Որոշ ՁՊՎ-ներ համապատասխան չափորոշիչներին չհամապատասխանելով՝ փակվել են:
- ՁՊՎ-ում պահվող անձանց պահման ժամկետների խախտումների նվազումը մինչև 2-3 օրվա, որը որ 2007 թ-ին հասնում էր մինչև 72 օրվա, 2008թ-ին՝ 45 օրվա, իսկ 2009 թ-ին՝ 27 օրվա:
- Դիտորդական խմբի հետ հեռախոսակապի միջոցով ՁՊՎ-ի վարչակազմը շատ հաճախակի է խորհրդակցում, որպեսզի հետագա աշխատանքներում թերություններ չլինեն :
- ՁՊՎ-ներում արդեն շատ հազվադեպ կարելի է հանդիպել ժամկետանց դեղորայքի:

- ՁՊՎ-ներում արդեն կարողանում են առաջին բուժօգնություն ցուցաբերել, սեմինարի կազմակերպման արդյունքում, որտեղ որոշակի գիտելիքներ փոխանցվեցին ՁՊՎ-ի վարչակազմին:
- ՀՀ ոստիկանության կողմից որևէ ՁՊՎ վերաբացելու ժամանակ, հաշվի են առնվում Դիտորդական խմբի կարծիքը և դիտողությունները:
- Որոշ անօրինական քննչական գործողությունների կատարման նախականիտումը և բացահայտումը:
- Դիտորդական խմբի հետևողականության արդյունքում լուծվել է որոշ ՁՊՎ-ների ջեռուցման խնդիրը:
- ՁՊՎ-ներից ՔԿՀ-ներ ուղեկցման ժամանակ՝ նախկին թերությունների կանոնա-կարգումը և ներկայիս պատշաճ կերպով ուղեկցման կազմակերպումը:
- Աջակցությունը՝ ՁՊՎ-ում պահվող անձի և նրա հարազատի տեսակցության կազմակերպման հարցում:
- Լիարժեք ուշադրության է արժանանում մինչև 2010 թ-ը անուշադրության մատնված՝ հետախուզվողին առանց համապատասխան հիմքերի ՁՊՎ ընդունելու հարցը:

Հավելվածներ

Հավելված – 1

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 131'

1. Ձերբակալվածի հայտարարություններն ու Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին:
2. Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև միջնորդությունները:

Հավելված – 2

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 205'

1. Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի:
2. Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը:
3. Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

Հավելված – 3

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 188¹

1. Քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի, 174 կետ.

ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է քննիչի, հետաքննություն կատարող անձի, դատախազի, դատարանի (դատավորի) կողմից քննչական գործողություններ, դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու նպատակով ժամը 10.00-18.00-ն ձերբակալվածին դուրս բերել խցից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ ժամերի:

Հավելված – 4

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 176 կետ

Ձերբակալվածի յուրաքանչյուր դուրսբերումը խցից կատարվում է ՁՊՎ-ի պետի կամ հերթապահի գիտությամբ: Դրա մասին կատարվում է գրառում ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանում՝ համաձայն N 9 ձևի, որում նշվում են ձերբակալվածի անունը, ազգանունը, դուրս բերելու նպատակը, հիմքը, ամսաթիվը և տևողությունը, ինչպես նաև դուրս բերողի անունը, ազգանունը և ստորագրությունը:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 13 կետ

Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N 12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմին:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 63 կետ

Ձերբակալվածին տեսակցություն տալու մասին ոստիկանության մարմնի հերթապահը նշում է կատարում գրանցամատյանում՝ համաձայն N 9 ձևի:

Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի, հոդված 13

Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝

- 3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.
- 4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին.
- 9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.
- 10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.
- 12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին.
- 13) իր մոտ ունենալ քրեական գործին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք.

Հավելված – 6

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի, 179 կետ

ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածներին: Նշված անձինք ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա ոստիկանության մարմնի պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն:

Հավելված – 7

Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի, հոդված 6

Կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով կալանավորված անձին սահմանված ժամկետում կալանավորվածներին պահելու վայր փոխադրելու անհնարինության դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններով:

Հավելված – 8

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի, 77 կետ.

Ձերբակալվածների զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

Հավելված – 9

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 5 կետ.

Կալանավորվածներին պահելու վայր բերված կալանավորված անձի և ուղղիչ հիմնարկ բերված դատապարտյալի ընդունումը կազմակերպվում է կարանտինային բաժանմունքում և, որպես կանոն, իրականացվում է ժամը 10⁰⁰-20⁰⁰-ը՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պատասխանատու հերթապահի կողմից:

Հավելված–10

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 259

3. Մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելն է: Քննիչի որոշման հիման վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց:

Հավելված – 11

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 129

2. Ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով ձերբակալվածին արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում պետք է մեղադրանք առաջադրվի: Կասկածյալին նշված ժամկետում կարող է մեղադրանք չառաջադրվել, եթե նա արգելանքի վերցվելու պահից 72 ժամվա ընթացքում իր նկատմամբ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու կամ խափանման միջոց չընտրելու հետևանքով ազատվել է արգելանքից:

Հավելված –12

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 31 կետ

Ձերբակալվածի կողմից սնունդ ընդունելուց հրաժարվելու դեպքում ոստիկանության տարածքային բաժնի պետը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՎ-ի պետը) կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և դրա մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և գերատեսչական վերահսկողություն իրականացնող վերադաս մարմնին:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 32 կետ

Ձերբակալվածի սննդից հրաժարվելու պատճառները պարզելուց հետո ՁՊՎ-ի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում ձերբակալվածի օրինական պահանջները բավարարելու համար:

Հավելված –13

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 71 կետ

Ընդունելով հանձնուրքը ՁՊՎ-ի ծառայող այցելուին վերադարձնում է անձը հաստատող փաստաթուղթը՝ ընդունման մասին նշում կատարելով դիմումի վրա և գրանցամատյանում՝ համաձայն N 11 ձևի:

Հավելված –14

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 26 կետ

Ձերբակալվածներին անհատական օգտագործման նպատակով ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում տրամադրվում են՝

- 1) մահճակալ.
- 2) անկողնային պարագաներ և սպիտակեղեն.
- 3) խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ՝ ալյումինե կամ պլաստմասսայե).
- 4) օճառ.
- 5) հիգիենիկ թուղթ.

6) գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ).

7) լրագրեր.

8) մենախուցը մաքրելու առարկաներ և կենցաղում օգտագործվող այլ առարկաներ՝ ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ:

Հավելված –15

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 69

1. Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 63

1. Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք, Քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իր իրավունքը:

2. Կասկածյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

4) ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն.

Հավելված –16

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 285

3. Անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը:

Հավելված –17

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 13 կետ

Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալվածի անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում՝ համաձայն N 12 ձևի, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Հավելված –18

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 121 կետ

Ծառայողական սենյակներում և խցերում ձերբակալվածների համար նախատեսված կահույքն ամրացվում է հատակին:

Հավելված –19

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 119 կետ

Տեսակցությունների սենյակում տեղադրվում է 1 մ-ից ոչ պակաս լայնությամբ, մեջտեղում 20 սմ բարձրություն ունեցող միջնորմով սեղան: Ներքնից սեղանը կիսվում է հոծ արգելապատով, իսկ վերնից՝ թափանցիկ պատնեշով: Սեղանի ճակատային մասում տեղադրվում է ևս մեկ սեղան՝ ՁՊՎ-ի ծառայողի համար, որը ներկա է գտնվում ձերբակալվածի և նրա մերձավոր ազգականների տեսակցության ընթացքում:

Հավելված –20

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 175 կետ

Քննչական գործողություններ, դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու նպատակով ձերբակալվածներին պահելու վայրի տարածքում տրամադրվում են համապատասխան տարածքներ կամ շինություններ:

Հավելված –21

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 68 կետ

ՁՊՎ-ում հանձնույթներ ընդունելու համար կահավորվում է հատուկ սենյակ, որտեղ քաղաքացիների մուտքն ազատ է: Սենյակում դրվում են սեղան, աթոռ, հսկիչ կշեռք, տեսանելի վայրում փակցվում են սույն կանոնակարգով սահմանված հանձնույթներ ընդունելու և հանձնելու մասին կարգը, հանձնույթներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը:

Հավելված –22

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 74 կետ

Հանձնույթները պետք է փոխանցվեն հասցեատիրոջն այն ստանալուց մեկ ժամից ոչ ուշ:

Հավելված –23

ՀՀ ոստիկանության համակարգում գործող Ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 65 կետ

Տեսակցությունից հրաժարվելու մասին ձերբակալվածի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսազրույցով՝ մինչև 10 րոպե տևողությամբ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել:

Հավելված –24

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կարծիք թիվ 221-ի 13-րդ գլխի 4-րդ կետի գ ենթակետ.

Սերտ համագործակցել ՀԿ-ների հետ՝ երաշխավորելու բանտարկյալների և դատապարտվածների իրավունքների նկատմամբ հարգանքը:

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կարծիք թիվ 221-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետ.

Անհապաղ հիմնել ոստիկանությունում, նախնական կալանքի վայրերում, բանտերում և բանակում վատ վերաբերմունքի մասին բողոքների գնահատման ընթացակարգ, որը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի չափանիշներին, և ապահովել, որ նման գործողություններում մեղավոր ճանաչվածները պատժվեն օրենքով:

Հավելված –25

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր հոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Հավելված –26

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր հոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:
2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պաճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:
3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ օրենքով՝ դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ և ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավուք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:
5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

Հավելված –27

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր հոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձիք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:
2. <ա> Այն դեպքում, երբ չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց առանձին ռեժիմը համապատասխանում է չդատապարտված անձի կարգավիճակին,
<բ> անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարճ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար:
3. Պատժի համակարգով բանարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց բարեփոխումն է և սոցիալական վերականգնումը: Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց ռեժիմը համապատասխանում է իրենց տարիքին և իրավական կարգավիճակին:

Հավելված –28

Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիա հոդված 3

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հավելված –29

Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիա հոդված 5

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.
<ա> անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,
<բ> անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

<զ> անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

<դ> անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նախանշված իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

<ե> անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդություններին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

<զ> անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:
3. Սույն հոդվածի 1-ին կետի <զ> ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:
4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:
5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հավելված –30

ՀՀ Սահմանադրություն հոդված 3

Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազտությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սանմանափկված է մարդու իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են, որոնք միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան ապահովվում են պետության կողմից: Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Անձին ազատությունից զրկելու դեպքերից է նրան արգելանքի վերցնելը, որը նախատեսված է Քրեական դատավարության օրենսգրքով, երբ առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ձերբակալումը հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին արգելանքի վերցնելն է, նրան հետաքննության կամ վարույթն իրականացնող մարմին բերելն է, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտնելն է՝ օրենքով որոշված վայրում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար: Ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: Ձերբակալման արձանագրությունը կազմվում է հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին կամ քննիչի մոտ բերելուց հետո 3 ժամվա ընթացքում, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալվածին: Արձանագրությունում նշվում են այն կազմելու ժամանակը և ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը, նպատակը և այլ տվյալներ, որից հետո ձերբակալվածը տեղափոխվում է ՁՊՎ:

Ձերբակալված անձին արգելանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները, պայմանները և կարգը, նրա իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները և պարտականությունները, ինչպես նաև արգելանքից ազատելու կարգը սահմանված են <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքով: Նշված օրենքի կիրառումն ապահովված է ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ների ներքին կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 574-Ն որոշմամբ, որով սահմանվել են ձերբակալվածներին պահելու պայմանները, օրվա կարգացուցակը, ձերբակալվածների մոտ պահվող թույլատրելի իրերի ցանկը, նյութակենցաղային ապահովումը, տեսակցության և հանձնունքներ ընդունելու կարգը, ՁՊՎ-ի գրամցամատյանները, ձևաթղթերը, դրանց վարման կարգը, անձնական խուզարկության, իսկ

մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության մասին գանգատ լինելու դեպքում նաև բուժզննության կարգը:

<<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանով հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների գործունեության կարգը>>: 10.03.2006թ.-ից կազմավորվել և գործում է ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը: Ոստիկանություն - հասարակական դիտորդական խումբ փոխհամագործակցությունը կազմակերպվում է ժողովրդավարական հասարակության այն հիմնարար սկզբունքների համաձայն, ըստ որի ոստիկանությունը պետք է հնարավորինս թափանցիկ լինի հանրության առջև, քանի որ ոստիկանության գործունեության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկություններ հրապարակելը առաջին հերթին ձեռնտու է ոստիկանությանը, որովհետև դրանով ձեռք է բերվում հասարակության վստահությունը: Ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների գործունեության մասին տեղեկատվություն հրապարակելու իրավունքը գործող օրենսդրության համաձայն վերապահված է ոստիկանության հասարակական դիտորդական խմբին: Հաշվետվության տեսքով հանրությանը ներկայացվող տեղեկատվությունը առաջին հերթին պետք է օբյեկտիվորեն արտացոլի ՁՊՎ-ների առկա վիճակը, որն օգտագործվում է ոստիկանության կողմից ՁՊՎ-ների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու և դրանց աշխատանքները միջազգային չափանիշներին համապատասխան կազմակերպելու համար:

Ոստիկանություն - հասարակական դիտորդական խումբ - միջազգային կազմակերպություններ փոխհամագործակցության օրինակ է տարբեր մակարդակներում կազմակերպվող հանդիպումները, խորհրդակցությունները, սեմինար պարապունքները, միջազգային փորձն ուսումնասիրելու նպատակով կազմակերպված գործուղումները, որոնց արդյունքում ոստիկանության համակարգի ՁՊՎ-ները միջազգային չափանիշներին համապատասխան արդիականացվել են, բարձրացել է ՁՊՎ-ների վարչակազմի կատարողական կարգապահությունը, առավել մեծ ուշադրություն է դարձվում գերատեսչական վերահսկողությանը, ինչի արդյունքում նվազագույնի են հասցվել ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների ծառայողների կողմից կարգապահական կամ այլ բնույթի խախտումները:

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ները ոստիկանության առավել թափանցիկ վայրերն են, որտեղ բացի հասարակական դիտորդական խմբից, իրենց լիազորությունների սահմաններում հսկողություն և վերահսկողություն են իրականացնում դատարանները, դատախազությունը, գերատեսչական վերադաս մարմինները, մարդու իրավունքների պաշտպանը և միջազգային կազմակերպությունները: ՁՊՎ-ների նկատմամբ ՀՀ ոստիկանության ղեկավարության հատուկ ուշադրության հետևանքով է, որ միջազգային և տեղական կազմակերպությունները ՁՊՎ-ների ուսումնասիրման արդյունքում 2010թ. ընթացքում լուրջ թերություններ չեն հայտնաբերել, իսկ հայտնաբերված թերությունները՝ կարճ ժամկետում վերացվել են:

Մասնավորապես 2010թ. մայիսի 10-ից 21-ը <<Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT)>> պատվիրակությունը դիտարկումներ է անցկացրել ՀՀ ոստիկանության 10 ՁՊՎ-ներում, որի արդյունքում CPT-ի նախագահ Մաուրո Պալման իր գոհունակություն է հայտնել ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ների առկա վիճակի վերաբերյալ:

Ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ-ի մասին դրական է արտահայտվել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանի հարցերով հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկազյայի ղեկավարած պատվիրակությունը:

ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում թերություններ չի արձանագրել նաև 2010թ. սեպտեմբերի 4-15-ը Հայաստան այցելած ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի կամայական ազատագրվման հարցերով աշխատանքային խումբը:

2010 թվականի ընթացքում, ոլորտը կարգավորելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի 12.02.2010թ. թիվ 1-Ն հրամանով ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին թիվ 1-Ն հրամանում կատարվել են լրացումներ և փոփոխություններ:

ՀՀ ոստիկանության պետի 21.12.2010թ. թիվ 2737-Ա հրամանով ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խմբի կազմը համալրվել է 2 նոր անդամներով, իսկ 1 անդամի լիազորությունները դադարեցվել են:

Տպագրվել և ոստիկանության ենթակա բաժինների ՁՊՎ-ներին է բաժանվել ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված ծառայության կազմակերպման համար անհրաժեշտ գրանցամատյանները և ձևաթղթերը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության պետի 07.05.2010թ. թիվ 935-Ա հրամանով դադարեցվել է ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժնի ՁՊՎ-ի շահագործումը՝ բարձր խոնավության պատճառով:

ՀՀ ոստիկանության պետի 27.07.2010թ. թիվ 1569-Ա հրամանով 2010 թ. հուլիսի 30-ից վերաշահագործման է հանձնվել ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Ճամբարակի բաժնի ՁՊՎ-ն:

2010թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ոստիկանության բուժվարչության ՀՀՀԿ-ի կողմից ստուգվել են ոստիկանության Ճամբարակի, Վաղարշապատի, Արտաշատի, Արմավիրի, Մասիսի և Արարատի բաժինների ՁՊՎ-ների սանիտարահիգիենիկ վիճակը, կոմունալ կենցաղային և սննդի կազմակերպման ու բուժսպասարկան պայմանները: Բոլոր ՁՊՎ-ները ոստիկանության բուժվարչության ՀՀՀԿ-ն ապահովել է 1-ին բուժօգնության միջոցներով, ախտահանիչ նյութերով, ինչպես նաև վերջիններիս ճիշտ ու անվտանգ օգտագործման համար մեթոդական ցուցումով:

2010թ ընթացքում ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահվել են 5374 ձերբակալված և կալանավորված անձինք (2009թ.-4625):

2010 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության համակարգում գործող 32 ՁՊՎ-ներում պահվող անձանցից ստացվել է 6 դիմում-բողոք, որը օրենսդրությանը համապատասխան 1 օրվա ընթացքում ուղարկվել է հասցեատիրոջը:

Ոստիկանության մարզային վարչություններ	ՁՊՎ պահվել են անձինք - այդ թվում ձերբակալվածներ		Ուղարկվել են քրեակատարող. հիմնարկներ		Ազատ են արձակվել		դիմում- բողոքներ	
	2010թ	2009թ	2010թ	2009թ.	2010թ.	2009թ.	2010թ	2009թ
Երևանի ՈՎ ՁՊՎ	913 - 910	967	669	694	244	273	1	1
Տավուշի ՄՈՎ	383 - 24	397	370	355	13	42	1	-
Արարատի ՄՈՎ	480 - 150	536	435	453	45	83	2	-
Մյունիքի ՄՈՎ	376 - 78	314	332	261	44	53	-	-
Արագածոտնի ՄՈՎ	340 - 59	256	307	214	33	42	-	-
Կոտայքի ՄՈՎ	759 - 117	627	682	534	77	93	1	2
Գեղարքունիքի ՄՈՎ	505 - 72	319	469	271	36	48	-	-

Վայոց Ձորի ՄՈՎ	95 - 29	48	83	32	12	16	-	-
Լոռիի ՄՈՎ	398 - 166	426	317	345	81	81	1	-
Շիրակի ՄՈՎ	155 - 102	236	123	184	32	52	-	3
Արմավիրի ՄՈՎ	970 - 154	499	845	387	125	112	-	-
Ընդամենը	5374 - 1861	4625	4632	3730	742	895	6	6

ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ները վերջին անգամ վերանորոգվել են 2005-2006թթ.: Ներկայումս ՁՊՎ-ների մեծ մասը վերանորոգման կարիք ունեն:

ՀՀ ոստիկանության համակարգում առկա 40 ՁՊՎ-ներից ներկայումս գործում են 33-ը (ցուցակը կցվում է):

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ների քանակի և դրանց գտնվելու վայրի

N	Ոստ. տարածքային մարմինը	ՁՊՎ-ի հասցեն
1.	Երևան	ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
<i>ոստիկանության Արարատի մարզային վարչություն</i>		
2.	Արարատ	ք. Վեդի, Կոմիտաս 1
3.	Արտաշատ	ք. Արտաշատ, Շահումյան 20
4.	Մասիս	ք. Մասիս, Բաղրամյան 30
<i>ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն</i>		
5.	Աշտարակ	ք. Աշտարակ, Ա. Մանուկյան 26
6.	Թալին	ք. Թալին, Մ. Գորկու 14
7.	Ապարան	ք. Ապարան, Մ. Գայի 9
<i>ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն</i>		
8.	Արմավիր	ք. Արմավիր, Աշուղ Զիվանի 3
9.	Վաղարշապատ	ք. Էջմիածին, Կամոյի 15
<i>ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն</i>		
10.	Գավառ	ք. Գավառ, Սահակյան 24
11.	Սևան	ք. Սևան, Թումանյան 2

12.	Վարդենիս	ք. Վարդենիս, Ազգալոյան 10
13.	Մարտունի	ք. Մարտունի, Մյասնիկյան 5
14.	Ճամբարակ	ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 122
<i>նստիկանության Կոտայքի մարզային վարչություն</i>		
15.	Կոտայք	ք. Աբովյան, Ա. Զորավարի 2
16.	Նաիրի	ք. Եղվարդ, Շիրակի 2
17.	Հրազդան	ք. Հրազդան, Վանատուրի թաղ.
<i>նստիկանության Լոռու մարզային վարչություն</i>		
18.	Թումանյան	ք. Թումանյան, Երևանյան խճուղի 3
19.	Վանաձոր	ք. Վանաձոր, Մ. Գոշի 3
20.	Տաշիր	ք. Տաշիր, Պուշկինի 100
21.	Սպիտակ	ք. Սպիտակ, Ա. Մանուկյան
<i>նստիկանության Շիրակի մարզային վարչություն</i>		
22.	Ախուրյան	գ. Ախուրյան
23.	Արթիկ	ք. Արթիկ, Մ. Գորկու 4
24.	Անի	ք. Անի, Երկաթուղայինների 1
<i>նստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն</i>		
25.	Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր, Միկոյան 18
26.	Վայք	ք. Վայք, Շահումյան 21
<i>նստիկանության Սյունիքի մարզային վարչություն</i>		
27.	Կապան	ք. Կապան, Երկաթուղայինների 2
28.	Մեղրի	ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 1
29.	Գորիս	ք. Գորիս, Նարեկացու 5
30.	Սիսիան	ք. Սիսիան, Գ. Նժդեհի 2
<i>նստիկանության Տավուշի մարզային վարչություն</i>		
31.	Իջևան	ք. Իջևան, Երևանյան 12
32.	Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան, Բարեկամության 2
33.	Դիլիջան	ք. Դիլիջան, Մյասնիկյան 57

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀՀ ոստիկանության համակարգի չգործող ՁՊՎ-ների և դրանց գտնվելու վայրի

N	Ոստ.տարածքային մարմինը	ՁՊՎ-ի հասցեն	ՁՊՎ-ի չգործելու պատճառը
ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն			
1.	Արագած	գ. Ծաղկահովիտ	Թերի շին.վերանորոգման աշխատանքներ, ջեռուցման բացակայություն:
ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն			
2.	Չարենցավան	ք.Չարենցավան,Խանջյան6	Անբավարար շենքային պայմաններ, բարձր խոնավություն:
ոստիկանության Լոռու մարզային վարչություն			
3	Ստեփանավան	ք. Ստեփանավան, Միլիոնների 1	Անբավարար շենքային պայմաններ, բարձր խոնավություն:
ոստիկանության Շիրակի մարզային վարչություն			
4.	Աշոցք	ք. Աշոցք	Թերի շին.վերանորոգման աշխատանքներ, ջեռուցման բացակայություն: Թերի շին.վերանորոգման աշխատանքներ, ջեռուցման բացակայություն:
5.	Ամասիա	ք. Ամասիա	
ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն			
6.	Ջերմուկ	ք. Ջերմուկ, Մյասնիկյան 17	Անբավարար շենքային պայմաններ, զրոսաբակի բացակայություն:
ոստիկանության Տավուշի մարզային վարչություն			
7.	Տավուշ	ք. Տավուշ, Լ.Բեկ 3	Անբավարար շենքային պայմաններ:

Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ

2010թ.-ի ընթացքում հասարակական դիտորդական խմբը ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ է այցելել 12 անգամ: Առաջին այցելությունը կայացել է 24.01.2010թ.-ին, իսկ վերջինը՝ 19.12.2010թ.: Այցելությունների ժամանակ արձանագրվել է, որ 10-րդ, 15-րդ և 20-րդ խցերի ջրի ծորակները չեն գործել և բացակայել է 6-րդ խցի էլեկտրական լուսավորությունը:

ՁՊՎ-ի 2-րդ հարկում ձերբակալվածներ չլինելու դեպքում 2-րդ հարկի ջրամատակարարումը առաջին հարկից անջատվում է: Ինչ վերաբերվում է 6-րդ խցի էլեկտրական լուսավորությանը, ապա էլեկտրական լամպը այրված է եղել, որը փոխվել է:

Կ.Բոգոդյանը ՁՊՎ է ընդունվել 25.08.2010թ. ժամը 22:50-ին ըստ իր բանավոր հայտարարության ունենում է գիտակցության կորուստ, որը հոգեկան հիվանդություն չի համարվում և ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում առողջության վերաբերյալ բողոքներ և զանգատներ չի ունեցել:

Ա. Մանուչարյանը ՁՊՎ է ընդունվել 29.04.2010թ. ժամը 18:25 և Վ. Սահակյանը ՁՊՎ է ընդունվել 19.06.2010թ. ժամը 03:25-ին ըստ իրենց բանավոր հայտարարությունների ունեն հոգեկան հիվանդություն, սակայն չեն նշել որտեղ են բուժվել, հարազատների և վարույթն իրականացնող մարմնի կողմից նրանց վերաբերյալ ոչ մի հիմնավոր փասթաթուղթ չի ներկայացվել: ՁՊՎ-ում գնտվելու ժամանակահատվածում ձերբակալվածների կողմից հիվանդության հետ կապված արտառոց դեպքեր չեն գրանցվել:

Ս.Գրիգորյանը ՁՊՎ է ընդունվել 30.06.2010թ. ժամը 23:55-ին և ըստ իր բանավոր հայտարարության հիվանդ է թոքախտով: Խ. Բաբայանը ՁՊՎ է ընդունվել 19.03.2010թ. ժամը 23:50-ին և ըստ իր բանավոր հայտարարության վանդ է թոքախտով: Ձերբակալվածները բողոքել են ընդհանուր թուլությունից: 20.03.2010թ. ժամը 23:22-ին և 21.03.2010թ. ժամը 20:10-ին ձերբակալվածների զանգատների հիման վրա կանչվել է շտապ բուժօգնություն, նրանց ցույց է տրվել համապատասխան բուժօգնություն, սակայն թոքախտով հիվանդ լինելու փաստը չի հաստատվել:

Ինչ վերաբերվում է հասարակական դիտորդական խմբի կողմից արձանագրված շուրջ 25 ապօրինի քննչական գործողություններին, դա կամայական մեկնաբանություն է, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 211-րդ հոդվածի համաձայն կասկածյալի հարցաքննությունը կատարվում է

նրան ձերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց անմիջապես հետո: Միաժամանակ, նույն օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը: Հետևաբար քննիչների գործողությունները միանշանակ ապօրինի որակելը զուրկ է իրավական հիմքից և էթիկայի սահմանված նորմերի խախտում է, քանի որ քննիչները ՀՀ քր. դատ. օր.-ի 211-րդ հոդվածի համաձայն իրենց վերապահված լիազորությունների սահմաններում կասկածյալին ձերբակալելուց հետո անմիջապես հարցաքննել են, որը ՀՀ քր. դատ. օր. 205-րդ հոդվածի համաձայն օրվա մեջ տևել է 8 ժամ:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն

Սիսիանի բաժնի ՁՊՎ

Դ.Գոռբանիֆառտին ձերբակալվել է 19.01.2010թ. ժամը 15:45-ին, իսկ Եսա Սեիդ Միզայի Դալբանդին՝ 19.01.2010թ. ժամը 17:25-ին: 21.01.2010թ. նշված անձանց նկատմամբ կալանքի որոշումը կայացվել է ոչ թե ժամը 15:00-ին, այլ 19:00-ին և 22.01.2011թ. ժամը 11:45-ին նրանք տեղափոխվել են <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ կա գրառում համապատասխան մատյանում:

Մ.Ամրիկյանը քննչական գործողությունների է տեղափոխվել 17.02.2010թ. ժամը 20:00-ից մինչև 22:00-ն, որի վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվել է համապատասխան գրառում: Վերջինս 16.02.2010թ. ժամը 12:00-22:00-ն քննչական գործողությունների չի տեղափոխվել, այլ 16.02.2010թ. ժամը 10:00-ից մինչև 11:00-ն քննիչի միջնորդության հիման վրա դուրս է բերվել խցից և տեղափոխվել քննչական սենյակ, որի վերաբերյալ առկա է համապատասխան գրառում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում: Մ.Ամրիկյանը ձերբակալվել է 16.02.2010թ. ժամը 13:30-ին, նրա նկատմամբ կալանքի որոշում է կայացվել 19.02.2010թ. ժամը 11:00-ին, առկա է նաև վերջինիս <<Գորիս>> ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ գրառումը, որտեղ նշված է և օրը և ժամը՝ 19.02.2010թ. ժամը 12:00: Քննիչի 07.04.2010թ. թիվ 7/40386 գրության համաձայն Մ.Ամրիկյանը 07.04.2010թ. ժամը 20:15-ից մինչև նույն օրը ժամը 22:55-ը դուրս է բերվել խցից քննչական գործողություններ կատարելու համար, որի վերաբերյալ կա գրառում համապատասխան մատյանում:

Կալանքի որոշում կայացնելու համար ձերբակալված Ռ.Ադաբեկյանը դատարան է տեղափոխվել 14.05.2010թ. ժամը 10:30-10:45-ը, բայց կալանքի որոշումը դատարանից ստացվել է ժամը 12:35-ին, որը նշվել է համապատասխան գրանցամատյանում:

Մ.Մկրտչյանը ձերբակալվել է 26.03.2010թ. ժամը 18:00-ին, նրա նկատմամբ կալանքի որոշում է կայացվել 29.03.2010թ. ժամը 14:05-ին, իսկ <<Գորիս>> ՔԿՀ է տեղափոխվել 31.03.2010թ. ժամը 18:00-ին:

Ա.Նազարյանը (այլ ոչ թե Ա. Ղազարյանը) ոստիկանության Սիսիանի բաժնում ձերբակալվել է 26.03.2010թ. ժամը 21:50-ին, նրա նկատմամբ կալանքի որոշում է կայացվել 29.03.2010թ. ժամը 16:30-ին, <<Գորիս>> ՔԿՀ է տեղափոխվել 31.03.2010թ. ժամը 18:00-ին: Նշված անձինք ՀՀ Արմավիրի և Շիրակի մարզերի՝ քննիչի 7/40362 գրության համաձայն 30.03.2010թ. ժամը 11:30-ից մինչև 31.03.2010թ. ժամը 03:30-ը տեղափոխվել են քննչական գործողությունների, ինչի մասին առկա են համապատասխան գրառումները <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնադրքի 174 հոդվածի համաձայն ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է քննիչի, հետաքննություն կատարող անձի, դատախազի, դատարանի (դատավորի) կողմից քննչական գործողություններ, դատահոգեբանական և այլ փորձաքննություններ անցկացնելու նպատակով ժամը 10:00-18:00, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ ժամերին ձերբակալվածներին դուրս բերել խցերից, հետևաբար ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողների գործողությունները համաչափ են և բխում են օրենսդրության պահանջներից:

Ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ-ում Ա.Հարությունյան անվամբ ձերբակալված կամ կալանավորված անձ չի պահվել, այլ եղել է Հ.Ղարյան, որը ձերբակալվել է 07.07.2010թ. ժամը 19:00-ին, նրա նկատմամբ կալանքի որոշումը կայացվել է 10.07.2010 թ. ժամը 17:00-ին և վերջինս 13.07.2010թ. ժամը 14:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ կա գրառում համապատասխան գրանցամատյանում: Քննիչի 08.07.2010թ. թիվ 7/40562, 08.07.2010թ. թիվ 7/40565 և թիվ 7/40567 գրությունների համաձայն Հ.Ղարյանը 08.07.2010թ. դուրս է բերվել խցից քննչական գործողություններ կատարելու համար և խուց է վերադարձվել ժամը 22:00-ին, սակայն <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում սխալմամբ 22:00-ի փոխարեն նշվել է 10:00:

Դատական նիստին մասնակցելու համար Ա.Բաղդասարյանը (այլ ոչ թե Բաղդադյանը), ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ է ընդունվել <<Նուբարեշեն>> ՔԿՀ-ից 03.06.2010թ. ժամը 23:50-ին: ՁՊՎ ընդունելու հիմքը դատավորի որոշումն է, որը կցված է կալանավորի անձնական գործին: Դատական նիստի ավարտից հետո 07.06.2010թ. ժամը 19:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում առկա է գրառում:

Հ.Մուրադյանը ՁՊՎ է ընդունվել 07.06.2010թ. ժամը 14:30-ին ՁՊՎ ընդունվելու հիմքը դատավորի որոշումն է: Դատական նիստի ավարտից հետո 07.06.2010թ. ժամը 19:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ թիվ 1 գրանցամատյանում առկա է գրառում:

Մ.Մկրտչյանը ՁՊՎ է ընդունվել 07.06.2010թ. ժամը 14:33-ին ՁՊՎ ընդունվելու հիմքը դատավորի որոշումն է: Դատական նիստի ավարտից հետո 07.06.2010թ. ժամը 19:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ թիվ 1 գրանցամատյանում առկա է գրառում:

Գ.Բաղդասարյանը (այլ ոչ թե Բաղդադյանը) ՁՊՎ է ընդունվել 07.06.2010թ. ժամը 14:35-ին: ՁՊՎ ընդունելու հիմքը դատավորի որոշումն է: Դատական նիստի ավարտից հետո 07.06.2010թ. ժամը 19:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ թիվ 1 գրանցամատյանում առկա է գրառում:

Ա.Նազարյանը ՁՊՎ է ընդունվել 07.06.2010թ. ժամը 14:39-ին: ՁՊՎ ընդունելու հիմքը դատավորի որոշումն է: Դատական նիստի ավարտից հետո 07.06.2010թ. ժամը 19:00-ին տեղափոխվել է <<Գորիս>> ՔԿՀ, որի վերաբերյալ թիվ 1 գրանցամատյանում առկա է գրառում:

Ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ-ն ունի 3 խուց, յուրաքանչյուրը 1 անձի համար: ՁՊՎ-ում պահվող յուրաքանչյուր ձերբակալվածին հատկացվել է 1 լրակազմ անկողնային պարագաներ, որոնք օգտագործելուց հետո անմիջապես լվացվել են: Դիտորդական խումբը ՁՊՎ-ն ուսումնասիրել է ընթրիքից անմիջապես հետո, որի հետևանքով սպիտակեղենը չեն հասցրել փոխել:

Գորիսի բաժնի ՁՊՎ

Գորիս քաղաքում ջրամատակարարումը գրաֆիկով է, ինչի պատճառով ՁՊՎ-ում տեղադրվել է 500 լիտր տարողությամբ ջրի բաք: Այն օգտագործվում է ՁՊՎ-ում պահվող

անձանց առկայության դեպքում: Ստուգման պահին ՁՊՎ-ում ձերբակալված և կալանավորված անձինք չեն եղել, ուստի ջրամատակարարումը անջատված է եղել:

Լոգարանում ջրատաքացուցիչը չի գործել խափանված լինելու պատճառով, որը փոխարինվել է նոր ջրատաքացուցիչով: Էլեկտրական լուսավորվածությունը բավարար է և ապահովում է անհրաժեշտ լուսավորությունը: Ինչ վերաբերում է սպիտակեղենի կեղտոտ լինելուն, ապա դրանք պարբերաբար լվանալու հետևանքով մաշվում են և ստանում են օգտագործած սպիտակեղենի տեսք: ՁՊՎ-ի 3-րդ խուցը վերակառուցվել է ՁՊՎ-ի ոստիկանի հանգստի սենյակի, այդ իսկ պատճառով ջրի ծորակի անհրաժեշտություն այնտեղ չկա, իսկ գործող 2 խցերը ապահովված են սանհանգույցով և ջրահեռացման համակարգով, որոնք մշտապես գործում են: ՁՊՎ-ն ապահովված է անհրաժեշտ քանակությամբ սպասքով և անկողնային պարագաներով:

Հ.Մանգասարյանը (այլ ոչ թե Հ.Մարգարյանը) ձերբակալվել է 11.02.2010թ.: Ինչ վերաբերում է շաբաթ օր լինելուն, ապա Հ.Մանգասարյանը ՔԿՀ է տեղափոխվել ՔԿՀ-ի ղեկավարության հետ փոխադարձ համաձայնությամբ:

23.01.2010թ. ՌԴ Օրենբուրգի մարզի քննչական վարչության կողմից հետախուզվող Ֆուրման Աբրահամյանը (այլ ոչ թե Խուրման Աբրահամյանը) բերման է ենթարկվել ոստիկանության Գորիսի բաժին 01.06.2010թ. ժամը 15:10-ին, որից հետո խափանման միջոցը ճշտելու նպատակով հարցում է կատարել ՌԴ, ստացել Ֆ.Աբրահամյանի վերաբերյալ ՌԴ Օրենբուրգի մարզի դատարանի կալանքի որոշումը, որի հիման վրա 01.06.2010թ. ժամը 17:00-ին Ֆ. Աբրահամյանը տեղափոխվել է ՔԿՀ, որի վերաբերյալ թիվ 9 գրանցամատյանում առկա է համապատասխան գրառումը:

Կապանի բաժնի ՁՊՎ

Մ.Պետրոսյանի վերաբերյալ 20.02.2010թ. <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրանցում չի կատարվել, քանի որ վերջինս ժամը 16:00-ից մինչև 18:00-ն, հաստատված ժամանակացույցի համաձայն գտնվել է զբոսաբակում, որտեղ վատացել է և պահանջել բուժօգնություն:

Ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ում Գ.Ռ.Խափանյան անունով ձերբակալված չի եղել, այլ եղել է Գ.Ռ.Խախանյան: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու

քննիչի միջնորդությունը դատարանի կողմից քննարկվել է ժամը 16:00-ից մինչև 16:15, սակայն դատավորի որոշումը ստացվել է ժամը 17:00-ին: Ժամը 17:00-ից մինչև 18:00-ն Գ.Իսախանյանը համաձայն հաստատված ժամանակացույցի գտնվել է զբոսաբաժնում, որի վերաբերյալ թիվ 9 գրանցամատյանում առկա է համապատասխան գրառումը:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 05.08.2010թ. թիվ ԵՎԴ/00260110/10 որոշման համաձայն, <<Գորիս>> ՔԿՀ-ում պահվող, քր. գործով ամբաստանյալ Գ.Գ. Միքայելյանը 06.08.2010թ. ժամը 11:00-ին պետք է ներկայացվեր Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի նստավայր: Դատարանի կողմից որոշված ժամին Արտաշատի նստավայր կալանավորի ներկայությունն ապահովելու համար, Կապանում տեղակայված ուղեկցող դասակը 06.08.2010թ. ժամը 01:10-ին կալանավորներ Մ.Ն.Բեգլարյանին, Ս.Ս.Խաչատրյանին և Հ.Ա.Բախշյանին Կապանից տեղափոխել և հանձնել է <<Գորիս>> ՔԿՀ, որտեղից ստացել և Արտաշատ է տեղափոխել կալանավոր Գ. Միքայելյանին: Գիշերային ժամին կալանավորների փոխադրումը պայմանավորված է դատավորի կողմից նշանակված ժամին կալանավորին դատարան հասցնելու անհրաժեշտությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապանից Արտաշատ ճանապարհի տևողությունը կազմում է շուրջ 8 ժամ՝ ներառյալ կալանավորների հանձնման և ընդունման վրա ծախսվող ժամանակը:

Մեղքի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ն ունի գործող 2 խուց, յուրաքանչյուրը 2 հոգու համար: Սպիտակեղենը պարբերաբար լվացվում է, ստուգման պահին այն մաքուր էր, ուղղակի արդուկված չէր, սանհանգույցի լուսավորվածությունը էլեկտրական լամպի այրված լինելու պատճառով չի գործել, որը փոխարինվել է:

ՁՊՎ-ն ապահովված է բավարար քանակությամբ հիգիենայի պարագաներով, անկողնային սպիտակեղենով և սրբիչներով: Քննչական սենյակի աթոռը ամրացվել է հատակին, սպասքը գտնվում է մաքուր վիճակում, 2-րդ խցի ջրի ծորակը փոխարինվել է նորով:

Վերը նշված թերությունները հետագայում բացառելու նպատակով ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողներին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն

Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ներ

Լ.Իսրայելյանը ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ է ընդունվել 19.02.2010թ.-ին, սակայն գրանցամատյանում մուտք գործելու ժամը չի գրառվել:

Ա.Ավագյանը ձերբակալվել է 06.09.2010թ.-ին, 07.07.2010թ.-ին քննիչի որոշմամբ ազատ է արձակվել, սակայն տվյալ օրվա հերթապահի կողմից <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրառում չի կատարվել:

<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում դարձյալ նույն պատճառաբանությամբ բաց են թողնված կալանավորներ՝ Կ.Զադայանի, Գ. Ղավազբաբունցի ՔԿՀ տեղափոխելու ժամերը: <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյաններում առկա են բացթողումներ, նշված չէ կալանավորներին խցերից դուրս բերելու ժամերը:

<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի համաձայն Ա. Փնջոյանը ձերբակալվել է 23.04.2010թ. ժամը 15:50-ին, 26.04.2010թ. ժամը 18:00-ին՝ խափանման միջոց կիրառելու նպատակով ուղեկցվել է դատարան, սակայն գրանցամատյանում ջնջումով լրացվել է 18:05: Նշված թերություններն ու բացթողումները ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողների անփութության և ոստիկանության Արմավիրի բաժնի ղեկավարության թույլ հսկողության արդյունք են:

Ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ում կալանավորի կարգավիճակով անձանց պահելու ժամկետների խախտումների վերաբերյալ Արմավիրի մարզային վարչության ղեկավարությունը պատճառաբանված հիմնավորումներ չի ներկայացրել:

Վ.Վարդանյանի կողմից հացադուլ հայտարարելու փաստը արձանագրվել է դատախազի կողմից:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի խցի դռան դիտանցքը վերանորոգվել է: ՁՊՎ-ի խցերում միաժամանակ 8 հոգուց ավելի անձինք չեն պահվել: Իսկ ինչ վերաբերվում է 8-ից ավելի անձանց ՁՊՎ-ում 1-5 ժամ պահելուն, ապա դա պայմանավորված է դատավորների կողմից նույն օրերին և ժամերին դատական նիստեր նշանակելու հանգամանքով:

Դիտորդական խմբի ստուգման պահին մեկ լրակազմ սպասքեդենի պակաս է արձանագրվել, մինչդեռ սպասքը չի պակասել, այլ այն տվյալ պահին օգտագործվել է կալանավորի կողմից: Խցերում տեղադրվել են լուսավորության ուժեղացուցիչներ, որոնցով կարգավորվել է լուսավորության խնդիրը, սանհանգույցը ամեն օր ախտահանվում է: Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ջրատաքացուցիչը չի խափանվել, այլ տվյալ օրը ջրի ճնշումը չի ապահովվել ոստիկանության Վաղարշապատի բաժնի վարչական շենքի ընդհանուր ջրի ճնշման ցածր լինելու պատճառով, ինչը հետևանք է եղել վերանորոգման նպատակով ջրի պոմպը մի քանի ժամով հանելուն:

Դիտորդական խմբի կողմից արձանագրված թերությունները կարճ ժամկետում վերացվել են: Ոստիկանության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ների պետերը զգուշացվել են հատուկ ուշադրություն դարձնել գրանցամատյաններն անթերի լրացնելու և օրենքով սահմանված պահման ժամկետներն ապահովելու վրա:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն

Թումանյանի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ի առաջին խցի և միջանցքի առաստաղները վերանորոգվել են:

Վանաձորի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Վանաձորի բաժնի ՁՊՎ-ի ռեժիմային գոտուց դուրս գտնվող չօգտագործվող խուցը վերափոխվել է բուժզննության սենյակի, կահավորվել է համապատասխան գույքով և դեղորայքով:

<<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն ՁՊՎ-ում պահվող անձի բուժզննության արդյունքները սահմանված կարգով իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր անձի բուժզննության արդյունքները գրանցվում են <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> թիվ 12 գրանցամատյանում:

ՁՊՎ-ն չի ջեռուցվում բաժնի վարչական շենքը գազաֆիկացված չլինելու պատճառով, սակայն օրենսդրության պահանջներին համապատասխան ՁՊՎ-ում +18 աստիճան ջերմաստիճանը ապահովվում է էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

ՁՊՎ-ի սպիտակեղենը լվանալու համար պայմանագիր է կնքվել Վանաձոր քաղաքի <<Բակմար>> լվացքատան հետ: ՁՊՎ-ի լոգարանում տաք ջուրն ապահովվելու համար տեղադրված է էլեկտրական տաքացուցիչ: ՁՊՎ-ն ապահովված է 8 անձի համար նախատեսված սպասքով:

Կալանավորներ Հ.Գալստյանը և Մ.Պողոսյանը ոստիկանության Վանաձորի բաժնի ՁՊՎ-ում պահվել են 05.03.2010թ.-ից մինչև 14.03.2010թ. Լոռու մարզի դատախազի տեղակալ Ս.Օ.Առաքելյանի 04.03.2010թ. թիվ 19126609 գրության հիման վրա:

ՁՊՎ-ում զբոսանքը կազմակերպվում է օրվա կարգացուցակի համաձայն, սակայն եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով ՁՊՎ-ում պահվող անձինք հրաժարվել են զբոսանքից:

Հետախուզվող Վ.Մարիկյանը ՁՊՎ է ընդունվել 05.10.2010թ. ժամը 01:50-ին: 05.10.2010թ. առավոտյան ուղեկցվել է Վանաձորի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց վերահաստատելու համար, որից հետո ժամը 17:20-ին տեղափոխվել է <<Վանաձորի>> ՔԿՀ:

Տաշիրի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ն ապահովված է անհրաժեշտ քանակությամբ սպասքով, իսկ սննդի տաքացման սենյակում տեղադրվել է էլեկտրական տաքացուցիչ:

Ոստիկանության Լոռու ՄՎ Ստեփանավանի բաժինը ՁՊՎ չունի, որի պատճառով բաժնի կողմից ձերբակալված անձինք պահվում են ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ում:

Ձերբակալվածներ Վ.Սուքիասյանը 11.07.2010թ.-ին, Մ.Քոչարյանը 28.05.2010թ.-ին, Ա.Դավթյանը 09.03.2010թ.-ին, Ա.Սարգսյանը 11.03.2010թ.-ին, Է. Նադոյանը և Ա. Թորոսյանը 22.02.2010թ.-ին ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել են ոստիկանության Ստեփանավանի բաժին, որտեղ վերջիններին նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը և տեղափոխվել են ՔԿՀ:

Սպիտակի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ում արձանագրված տեխնիկական թերությունները վերացվել են, սննդի տաքացման սենյակում տեղադրվել է էլեկտրական տաքացուցիչը:

Գ.Նասրյանը ՁՊՎ է ընդունվել 17.07.2010թ.-ին, պահվել է մինչև 20.07.2010թ.: Գ.Նասրյանին նշված ժամանակահատվածում բուժօգնություն ցույց տալու համար 4 անգամ ՁՊՎ է հրավիրվել շտապ բուժօգնություն, ստացել է համապատասխան դեղորայք, սակայն բժիշկը նպատակահարմար չի գտել վերջինիս տեղափոխել հիվանդանոց:

ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ ենթակա բաժինների ՁՊՎ-ներում հասարակական դիտորդական խմբի կողմից արձանագրված թերությունները վերացնելու նպատակով ՁՊՎ-ների պետերին տրվել են լրացուցիչ հանձնարարականներ՝ մատյանների գրառումները պատշաճ կատարելու ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչություն

Մասիսի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Մասիսի բաժնի ՁՊՎ-ի 2-րդ խցի պատուհանի կոտրված ապակին վերանորոգվել է, բուժ.սենյակում ժամկետանց դեղերը փոխարինվել են նորով, սննդի տաքացման սենյակը համալրվել է անհրաժեշտ քանակությամբ սպասքով, սանհանգույցը ախտահանվել է:

ձերբակալված Ա. Բաղդասարյանը ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում հանձնուք չի ստացել: Քննիչի կողմից նրան փաստաբանով չապահովելու վերաբերյալ ՁՊՎ-ի վարչակազմին դիմում-բողոք չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է ձերբակալված անձանց ձերբակալման և խուզարկության արձանագրություն չտրամադրելուն, ապա ՀՀ քր. դատ.օր.-ի 131-րդ հոդվածի համաձայն <<Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին:

Արտաշատի բաժնի ՁՊՎ

Ոստ. Արտաշատի բաժնի 4-րդ խցի ծորակը վերանորոգվել է:

Ս. Գևորգյանը 30.10.2010թ. ժամը 10:00-ին տեղափոխվել է քննչական սենյակ, բայց քննիչի կողմից քննչական գործողություններ չեն կատարվել և վերջինս անմիջապես ետ է ուղեկցվել խուց, սակայն ետ բերելու վերաբերյալ թիվ 9 գրանցամատյանում համապատասխան գրառում չի կատարվել, որով խախտվել է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 176-րդ կետը:

Գ. Իտալյան անվամբ հետախուզվող ոստիկանության Արտաշատի բաժնի ՁՊՎ-ում չի գրանցվել և չի պահվել:

Ներկայումս բոլոր թերությունները վերացվել են, գրանցամատյանները լրացվում են սահմանված կարգի համաձայն:

Արարատի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Արարատի բաժնի տեսակցության սենյակը բաժանված է օրգանական ապակիով, որի վրա խոսակցության պատշաճ լսելիության համար արված են համապատասխան անցքեր, սննդի տաքացման սենյակը համալրվել է անհրաժեշտ քանակությամբ մաքուր սպասքով:

Հասարակական դիտորդական խմբի այցելությունից հետո <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> թիվ 12 գրանցամատյանում տեղ գտած բացթողումները լրացվել են:

Դիտորդական խմբի կողմից ՁՊՎ-ում արձանագրված այն փաստը, որ Ա. Առաքելյանին ձերբակալելուց հետո չեն տրամադրել ձերբակալման և խուզարկության արձանագրությունները, ապա պարզաբանում ենք, որ ՀՀ քր. դատ.օր.-ի 131-րդ հոդվածի համաձայն <<Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին>>:

Ձերբակալված Կ.Ս.Հովհաննիսյանը ՁՊՎ է ընդունվել 30.09.2010թ. ժամը 22:30-ին, ուստի նույն օրը վերջինս չէր կարող հանձնուք ստանալ հարազատներից, քանի որ ՀՀ կառավարության 05.06.2008թ. <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 574-Ն որոշման 76-րդ կետի համաձայն ՁՊՎ-ներում հանձնուքներն ընդունվում են ժամը 10:00-20:00: Կ.Հովհաննիսյանին հանձնուքները տրվել են 01.10.2010թ.:

Ձերբակալված Ա. Բահարյանին անվտագության նկատառումներից ելնելով սպիտակեղեն չի տրամադրվել, քանի որ վերջինս իր վարքագծով ցուցաբերել է հոգեկան հիվանդին բնորոշ վարքագիծ, որում համոզվել են նաև դիտորդական խմբի անդամները, սակայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 574-Ն որոշման 179-րդ կետի <<ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածների>>:

Ա. Կարապետյանը ՁՊՎ է ընդունվել 20.10.2010թ. ժամը 23:20, որի վերաբերյալ կատարվել է գրառում<<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման >> գրանցամատյանում, իսկ ինչ վերաբերվում է վերջինիս ոստիկանության բաժին բերման ենթարկելու արձանագրությանը, ապա դա չի մտնում ՁՊՎ-ի վարչակազմի ֆունկցիոնալ պարտականությունների մեջ, քանի որ բերման ենթարկելու արձանագրությունը կատարում է ոստիկանության բաժնի հերթապահը՝ համապատասխան գրանցամատյանում:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն

Կոտայքի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ-ի 1-ին և 2-րդ խցերի ջրի ծորակները, 1-ին խցի ջրահեռացման համակարգը, ինչպես նաև սանհանգույցի 2-րդ ջրահեռացման համակարգը ամբողջությամբ վերանորոգվել և գործում են: Սննդի տաքացման սենյակը համալրվել է անհրաժեշտ քանակությամբ սպասքով:

Կալանավորներ Ա. Հարությունյանը 20.01.2010թ. ժամը 13:25-23:00 և Հ. Ասատրյանը 21.01.2010թ. ժամը 12:45-23:30 ներգրավվել են քննչական գործողությունների: Քննչական գործողությունների տևողությունը պայմանավորված է դեքայի վայրի հեռավորությամբ:

Հ.Ներսիսյանին և Հ.Թադևոսյանին 02.02.2010թ. ժամը 15:15 քննչական գործողություններ կատարելու նպատակով դեպքի վայր տանելու և ՁՊՎ ետ վերադարձնելու վերաբերյալ << Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյաններում առկա են համապատասխան գրառումները:

Հետախուզվողներ Ա.Գինոսյանի 12.10.2010թ., Ա.Խուրշուդյանի 12.11.2010թ. և Ա.Ստեփանյանի 27.09.2010թ. վերաբերյալ ձերբակալման արձանագրությունները բացակայել են, քանի որ նրանց նկատմամբ խափանման միջոց է եղել ընտրված կալանավորումը, որն էլ հիմք է հանդիսացել ՁՊՎ ընդունելու և պահելու համար:

Նաիրիի բաժնի ՁՊՎ

Կարգավորվել է ՁՊՎ-ի ընդհանուր լուսավորությունը, կահավորվել է բուժսենյակը, սննդի տաքացման սենյակում առկա են էլեկտրական տաքացուցիչը և հիգիենայի պարագաները: Քննչական և տեսակցության սենյակները կահավորվել են համապատասխան գույքով: 3-րդ խցի ջրի ծորակը վերանորոգվել է, գործում է լոկալ ջեռուցման համակարգը:

Ձերբակալված Ս.Մարտիրոսյանը 14.01.2010թ. մինչ 15.01.2010թ. ՁՊՎ-ում գտնվելու ժամանակ խուցը տաքացվել է էլեկտրական տաքացուցիչով:

Ձերբակալված Հ. Ասատրյանը 19.01.2010թ. ժամը 13:10 տեղափոխվել է ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ և ընդունվել ժամը 15:40-ին, տեղափոխման ժամանակի ձգձգումը պայմանավորված է ճանապարհին տրանսպորտային միջոցի խափանմամբ:

05.07.2010թ. ժամը 12:30-ին ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Պողոսյանը անձամբ է այցելել Նաիրիի բաժնի ՁՊՎ և Հ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել է կալանավորումը, այդ իսկ պատճառով <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրառում չի կատարվել:

02.06.2010թ. Ն. Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Վերջինս 03.06.2010թ. հայտաբերվել և ձերբակալվել է: Նույն օրը քննիչի կողմից ներկայացվել է կալանքը վերահաստատելու մասին որոշումը և Ն.Սարգսյանը 04.06.2010թ. տեղափոխվել է <<Նուրբարաշեն>> ՔԿՀ:

Ձերբակալված Ա. Աբրահամյանը 08.09.2010-11.09.2010թթ. ոստիկանության Նաիրիի բաժնի ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում 6 անգամ դիմել է բուժօգնության, որի վերաբերյալ կա համապատասխան գրառում <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, մեկ անգամ դուրս է բերվել զբոսանքի և մեկ տեսակցություն է ունեցել: <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում առկա են բոլոր 8 գրառումները:

Ա.Պողոսյանը քննիչի մոտ գրավոր հրաժարվել է տեղափոխվել դատարան, այդ իսկ պատճառով կալանքի միջնորդությունը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Սիսակյանի կողմից բավարարվել է, որի հետևանքով էլ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրառում չի կատարվել:

Հրազդանի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Հրազդանի բաժնի ՁՊՎ հետախուզվող անձանց ընդունելու հիմք է հանդիսացել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատավորի որոշումը:

Չարենցավանի բաժնի ՁՊՎ

Թերի շին.վերանորոգման աշխատանքների և բարձր խոնավության պատճառով ՀՀ ոստիկանության պետի հրամանով 2010թ. մայիսի 7-ից ոստիկանության Չարենցավանի բաժնի ՁՊՎ գործունեությունը դադարեցվել է:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչություն

Դիլիջանի բաժնի ՁՊՎ

Շենքային պայմաններից ելնելով ոստ. Դիլիջանի բաժնի ՁՊՎ-ն ընդհանուր խոնավ է, գտնվում է շենքի նկուղային հարկում, այդ իսկ պատճառով բնական լուսավորությունը թույլ է, իսկ էլեկտրական լուսավորությունը եղածից ավելի հնարավոր չէ: Ի սկզբանե շենքային պայմաններից ելնելով ՁՊՎ-ի շինարարություն ժամանակ հնարավոր չի եղել կառուցել առանձին տեսակցության սենյակ և առանձին հերթապահ ոստիկանի սենյակ: Որպես տեսակցության սենյակ ծառայում է քննչական սենյակը, իսկ հերթապահ ոստիկանի սենյակը համատեղված է բուժ.սենյակի հետ: Քննչական սենյակի լուսավորությունը վերականգնված է: ՁՊՎ-ի սննդի պայմանագիրը գտնվում է բաժնի հաշվապահի մոտ: Բուժ.սենյակի դեղարկողը համալրված է անհրաժեշտ դեղորայքով, սպիտակեղենը գտնվում է մաքուր վիճակում:

Կալանավոր Գ.Մաթևոսյանը ՁՊՎ է ընդունվել 08.09.2010թ. ժամը 12:50-ին: Վերջինիս առողջական գանգատի պատճառով կազմակերպվել է բուժ.օգնություն և բուժ.զննություն, որից հետո 14:50-ին կատարվել է արտաքին զննություն:

Մ.Խառատյանը ՁՊՎ է բերվել Դիլիջանի քննչական բաժանմունքի պետի ժ/պ Ս. Սաղաթեյանի 31.08.2010թ. 7/23-2-538 գրության համաձայն՝ քննչական փորձարարություն կատարելու համար:

Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ-ում արձանագրված թերություններն ամբողջությամբ վերացվել են, սանհանգույցը ախտահանվել է, սննդի տաքացման սենյակում առկա են հիգիենայի պարագաները և անհրաժեշտ քանակությամբ սպասք, սպիտակեղենը գտնվում է մաքուր վիճակում, խցերի մահճակալները ամրացվել են հատակին, լոգարանում գործում է ջրատաքացուցիչը, գրանցամատյանները լրացվում են ամբողջությամբ՝ գործող կարգին համապատասխան:

Գազաֆիկացման խնդիրը գտնվում է օրակարգում, իսկ տեսակցության սենյակը մեծացնելու համար պետք է քանդել շենքի հիմնական պատերը, ինչը կթուլացնի շենքի ամրությունը:

Իջևանի բաժնի ՁՊՎ

Ոստ. Իջևանի բաժնի ՁՊՎ-ն նախատեսված է 8 անձի համար: Սննդի տաքացման սենյակում առկա են 8 բաժակ, 2 տեսակի 16 ափսե և 8 գդալ: 5 խցերի ծորակները գործում են, ՁՊՎ-ն ապահովված է մաքուր սրբիչներով և սպիտակեղենով, որոնք մաքրման համար հանձնվում են լվացքատուն: Բուժսենյակի, տեսակցության և քննչական սենյակների առանձնացման, ինչպես նաև խցերում դարակներ կամ խորշեր պատրաստելու համար նախատեսվում է կատարել շինաշխատանքներ:

Ա.Հախվերդյանը գտնվել է հետախուզման մեջ, ձերբակալվել է Երևան քաղաքի ոստիկանության Կենտրոնի բաժնի կողմից և 04.09.2010թ. տարածքային կարգով հանձնվել է ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ: 06.09.2010թ-ին Տավուշի ՄՎ ուղեկցող դասակի կողմից Ա.Հախվերդյանը տեղափոխվել է <<Վանաձոր>> ՔԿՀ:

Ն.Գինովյանի և Ռ.Այվազյանի հետ համատեղ քննչական գործողություններ չեն կատարվել, քանի որ Ն.Գինովյանը 04.03.2010թ. ժամը 21:20-ին ետ է վերադարձվել խուց, որից հետո ժամը 21:20-ին խցից դուրս է բերվել Ռ.Այվազյանը:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն

Ախուրյանի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ-ն համալրվել է 6 հացամանով, 6 աղամանով, 10 պատառաքաղով, 10 թեյի գդալով, 10 ճաշի գդալով, 8 խորը ափսեներով, 5 տակդիր ափսեներով և 4 բաժակներով: ՁՊՎ-ի դեղորոքը թարմացվել է և ներկայումս ժամկետանց դեղորայք չկա:

ՀՀ կառավարության 05.06.2008թ. <<ՀՀ ոստիկանության համակարգում ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնադրիչը հաստատելու մասին>> թիվ 574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելիս ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժ.աշխատող: Ախուրյան բաժնի ՁՊՎ բերված մարմնական վնասվածքներ ունեցող 8 անձինք իրենց մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ կատարված հարցմանը պատասխանել են, որ դրանք ստացել են մինչև ոստիկանություն բերման ենթարկվելը, ինչն էլ հիմք է հանդիսացել ՁՊՎ-ի համապատասխան գրանցամատյանում նշում կատարելու համար:

Ա.Հակոբյանը ՁՊՎ է ընդունվել 18.08.2010թ. ժամը 14:35-ին, ՔԿՀ է տափոխվել 21.08.2010թ. ժամը 12:55-ին: Վերջինս ՁՊՎ-ում պահվել է 70 ժամ:

Ա.Սարգոյանը ՁՊՎ է ընդունվել 23.06.2010թ. ժամը 00:40-ին, սակայն թյուրիմացաբար 00:40-ի փոխարեն գրառվել է 24:40: Վերջինս նույն օրը ժամը 11:50-ին տեղափոխվել է <<Արթիկ>>ՔԿՀ:

Մ.Պողոսյանը ՁՊՎ է ընդունվել 13.08.2010թ. ժամը 23:45-ին և 16.08.2010թ. ժամը 19:20-ին ոստիկանության Գյումրիի բաժնի հետաքննիչ Ա.Մինասյանի որոշմամբ ազատվել է արգելանքից, ինչի վերաբերյալ համապատասխան նշումներ է կատարվել ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանում:

Հ.Հակոբյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 28.09.2010թ. ժամը 03:00-ին: Խափանման միջոց կիրառելու նպատակով 30.09.2010թ. ժամը 12:15-ին տեղափոխվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատավոր Սարգյանի կողմից խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և Հ.Հակոբյանը տեղափոխվել է <<Արթիկ>> ՔԿՀ:

Ս.Սահակյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 24.09.2010թ. ժամը 23:10-ին: Խափանման միջոց կիրառելու նպատակով 27.09.2010թ. ժամը 14:10-ին տեղափոխվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատավոր Սարգյանի կողմից խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և Ս.Սահակյանը տեղափոխվել է <<Արթիկ>> ՔԿՀ:

Ս.Եղիազարյան անվամբ անձ 2010թ. ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ-ում չի պահվել:

Ա. Եղիազարյանի մազերը կտրելու վերաբերյալ ցանկությունը մերժվել է, քանի որ գործող օրենսդրության համաձայն կողմնակի անձանց մոտքը ՁՊՎ արգելվում է: Ինչպես նաև պարզաբանում ենք, որ ՀՀ կառավարության 05.06.2008թ. <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 574-Ն որոշման համաձայն (Ձև 4) << Ձերբակալված անձինք կարող են իրենց մոտ ունենալ հիգիենայի պարագաներ (տնտեսական և ձեռքի օճառ, հեղուկ օճառ, քսուկ, ատամի խոզանակ, ատամի մածուկ, պլաստմասայե օճառամաններ, սանր, սափրվելու պարագաներ)>>, իսկ սափրվելու պարագաներից կարող են օգտվել միայն ՁՊՎ-ի աշխատակցի հսկողությամբ:

Արթիկի բաժնի ՁՊՎ

Գ.Եսայանը, Ա.Ունուսյանը և Ա.Ոսկանյանը ձերբակալվել և ոստիկանության Արթիկի բաժնի ՁՊՎ են ընդունվել 05.06.2010թ. ժամը 07:00-ին: 07.06.2010թ. ժամը 17:30-ին նշված 3 ձերբակալվածները տեղափոխվել են Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան և նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: 07.06.2010թ. նշված քր. գործով <<ՀՀ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> օրենքի 6-րդ հոդվածի համաձայն քննիչի կայացրած որոշմամբ Գ.Եսայանը, Ա.Ունուսյանը և Ա.Ոսկանյանը 3 օրով տեղափոխվել են ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ:

Անիի բաժնի ՁՊՎ

ՁՊՎ-ի բարձր խոնավության պատճառը պարզելու համար ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից կատարվել է մասնագիտական հետազոտություն: Արդյունքում ՁՊՎ-ի, ինչպես նաև վարչական շենքի խոնավությունը վերացնելու համար կատարվել է համապատասխան հաշվարկ առաջիկայում վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով:

Ոստիկանության Շիրակի ՄՎ ոտորաբաժանումների ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ հսկողությունը բարելավելու, գրանցամատյաններում պատշաճ գրառումներ կատարելու նպատակով ստորաբաժանումների պետերին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչություն

Վայքի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ-ի բուժ.սենյակը ապահովված է անհրաժեշտ պարագաներով, լուծվել է սավանի հարցը:

Ձերբակալվածներ Ս.Վասիլյանին և Փ.Բադալյանին ոստիկանության Վայքի բաժնի ՁՊՎ-ում պահելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները 14.07.2010թ. թիվ 19/4-696 գրությամբ ներկայացվել են հասարակական դիտորդական խմբին:

Ձերբակալված Գ. Գևորգյանը 06.02.2010թ. ժամը 15:35-17:00 ՁՊՎ-ից տեղափոխվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, որի մասին կա համապատասխան գրառում <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանում>>:

Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ում տեսակցական սենյակը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 120-րդ կետի պահանջներին:

Շենքային անբավարար պայմանների պատճառով ՁՊՎ-ի բուժ.սենյակը համատեղվել է հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ:

ՁՊՎ-ում նախատեսվածից շատ անձանց պահելու վերաբերյալ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում ՀԿԱ վարչության կողմից անց է կացվել ծառայողական ստուգում, որի արդյունքները 08.12.2010թ.19/4-1302 գրությամբ տեղեկացվել են հասարակական դիտորդական խմբին:

Էրիկ Վարդանյան անունով ձերբակալված չի եղել Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ում, այլ եղել է Բենիկ Վարդանյան, որը 04.10.2010թ. ժամը 11:10-12:05 թիվ 7/381740 գրության հիման վրա տեղափոխվել է դատարան:

Դիտորդական խմբի կողմից արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու նպատակով Վայոց Ձորի ՄՎ ղեկավարության կողմից իրականացվում է ամենօրյա հսկողություն:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն

Աշտարակի բաժնի ՁՊՎ

Հասարակական դիտորդական խմբի կողմից ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում արձանագրված թերությունների մեծ մասը ներկայումս վերացվել են:

Դիտորդական խմբի կողմից արձանագրված այն փաստը, որ ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ի խցերից մեկը գտնվում է վարչական տարածքից դուրս, չի համապատասխանում իրականությանը, քանի որ այն գտնվում է ՁՊՎ-ի վարչական տարածքում և նախկինում օգտագործվել է՝ որպես վարչական կալանքի խուց: Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի առաջին խցին, ապա արդեն շուրջ 2 ամիս է այն մյուս խցերի նման տեղակայված է մետաղյա ճաղավանդակից ներս և գտնվում է ռեժիմային գոտում:

Ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում ՔԿՀ-ից տեղափոխված, տուբերկուլյոզով հիվանդ, Արարատ Պետրոսյան անվանք կալանավոր չի ընդունվել, այլ 12.06.2010թ. ոստիկանության Մալաթիայի բաժնից ընդունվել է ՀՀ քր.օր.-ի 177-րդ հոդվածի հատկանիշներով հոտախուզվող Ասատուր Կոմսելի Պետրոսյանը, որը ՁՊՎ ընդունվելուց ոչինչ չի հայտնել իր հիվանդության մասին: Նույն օրը շտապօգնության բժիշկը բուժօգնություն է ցույց տվել Ա.Պետրոսյանին և <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում գրառում է կատարվել նրա տուբերկուլյոզ հիվանդությամբ տառապելու կասկածի վերաբերյալ: Կալանավոր Ա.Պետրոսյանի հիվանդությունը հաստատող համապատասխան փաստաթղթերը ոստիկանության Աշտարակի բաժին չեն ստացվել և վերջինս 14.06.2010թ. տեղափոխվել է <<Նուբարաշեն>> ՔԿՀ:

2010թ. հունվար ամսից մինչև 26.05.2010թ. ընկած ժամանակահատվածում կալանավորներ Վ.Հարությունյանի, Վ.Հովհաննիսյանի, Բ.Բաղդասարյանի, Հ.Հովսեփյանի, Հ.Մովսիսյանի և Հ.Կարապետյանի վերաբերյալ սխալ գրառումները և ժամանակային խախտումները կատարվել են ՁՊՎ-ի նախկին պետ, ոստիկանության ավագ լեյտենանտ Է.Մկրտչյանի կողմից, որը ծառայողական քննության արդյունքներով ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Նշված փաստի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչությունը 03.11.2010թ. թիվ 19/14-1174 գրությունն է ուղարկել հասարակական դիտորդական խմբին:

2010թ. ընթացքում ստացված 12 գույգ սպիտակեղենը չի բավարարել ՁՊՎ-ում պահվող անձանց մշտապես մաքուր սպիտակեղենով ապահովելու համար, նշված

Ժամանակահատվածում ՁՊՎ-ում պահվել են 305 ձերբակալված և կալանավորված անձինք: Հարցը կարգավորելու համար 24.01.2011թ. գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության Տնտեսական վարչություն: Լոգարանում ցնցուղը վերանորոգվել է: Դիտորդական խմբի այցելության ժամանակ ջրատաքացուցիչը չի գործել ջրի ցածր ճնշման պատճառով, իսկ սննդի տաքացման սենյակի տաքացուցիչը վերանորոգվել է: ՁՊՎ-ն համալրվել է անհրաժեշտ քանակությամբ սպասքով: ՁՊՎ-ի ջեռուցման գազի կաթսայի էլեկտրական փականը անսարք լինելու պատճառով չի գործել, սակայն ոստիկանության Արագածոտնի ՄՎ ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերանորոգվել է և մինչ օրս գործում է: 1-ին և 5-րդ խցերի ջրի ծորակները փոխարինվել են նորով, սանհանգույցը ախտահանվել է:

Ապարանի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Ապարանի բաժնի մատյանները սխալ և թերի լրացնելու համար ՁՊՎ-ի պետը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Ձերբակալված և կալանավորված անձանց ցանկացած ուղեկցում հետայսու կատարվում է ոստիկանության Արագածոտնի ՄՎ ուղեկցող դասակի միջոցով: ՁՊՎ-ի խցերում առկա են սրբիչները, նորոգվել են խցերի ջրի ծորակները, իսկ սպիտակեղենը նոր է և գտնվում է մաքուր վիճակում, առկա է սպասքը, ՁՊՎ-ն գտնվում է մաքուր և ախտահանված վիճակում: Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի ընդհանուր խոնավ լինելուն, ապա դա բացատրվում է միայն բնակլիմայական պայմաններով և այն վերացնելու համար անհրաժեշտ է իրականացնել ընդհանուր շենքի հիմքային մասի կառուցվածքային փոփոխություններ:

Թալինի բաժնի ՁՊՎ

Գրանցամատյաններում թերի գրառումներ կատարելու համար ոստիկանության Թալինի բաժնի ՁՊՎ-ի պետ, ոստիկանության մայոր Ա.Մանուկյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

ՁՊՎ-ի տեխնիկական թերությունները ներկայումս վերացված են:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն

Գավառի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Գավառի բաժնի ՁՊՎ-ի սանհանգույցը ախտահանվել է:

Վարդենիսի բաժնի ՁՊՎ

Ոստիկանության Վարդենիսի բաժնի ՁՊՎ-ի խցերի բնական և էլեկտարական լուսավորվածությունը կարգավորվել է: ՁՊՎ-ի խցերի պատուհանների փոքր տրամաչափի ցանցերը փոխվել են, նախկինում վարչական կալանքի համար նախատեսված խուցը վերափոխվել է սննդի տաքացման սենյակի: Մաքրվել են խցերի պատուհանների ապակիները: ՁՊՎ-ի քննչական սենյակը միշտ ծառայել է իր նպատակին:

Ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ ենթակա ստորաբաժանումների բոլոր ՁՊՎ-ների սպիտակեղենները գտնվում են մաքուր վիճակում:

Գրանցամատյանների գրառումները սահմանված կարգով կատարելու նպատակով ՁՊՎ-ների պետերին տրվել են հանձնարարականներ:

Հ Ե Տ Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում հասարակական դիտորդական խմբի քնականոն աշխատանքն ապահովելու համար ոստիկանության կողմից ստեղծվել են բոլոր հնարավոր պայմանները:

Հասարակական դիտորդական խմբի 2010թ. հաշվետվությունը աչքի է ընկնում իր ծավալով, որտեղ ի թիվս արժեքավոր տեղեկատվության կան նաև որոշակի անճշտություններ: Մասնավորապես ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահված անձանց անուն ազգանունները չեն համապատասխանում գրանցամատյաններում լրացվածների հետ:

Հաշվետվությունում նշված են օրենքով սահմանված ժամկետների և ներքին կանոնակարգի մի շարք խախտումներ, որոնց վերաբերյալ ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ղեկավարները ներկայացրել են իրարամերժ մեկնաբանություններ: Առաջացած հակասությունները ծառայողական ստուգմամբ հետազոտելու, ծառայողական պարտականությունների կատարման մեջ թերացած ոստիկանության ծառայողների գործողություններին իրավական գնահատական տալու, կամ դիտորդական խմբի կողմից ներկայացված փաստերը հերքելու համար անհրաժեշտ է դիտարկման արդյունքում արձանագրված խախտումները ՀՀ ոստիկանություն ներկայացնել անմիջապես, քանի որ <<Ոստիկանությունում ծառայության մասին>> ՀՀ օրենքի համաձայն ոստիկանության ծառայողի նկատմամբ կարգապահական տույժը նշանակվում է, եթե 3 ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ











